



Անդամների տեղեկագիրք

Ինչ է պետք իմանալ ձեր նպաստների մասին

Health Net Community Solutions, Inc.

(«Health Net») Միասնական

ապահովագրության ապացույց և

Բացահայտման ձևաթուղթ:

2026

Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento,
San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջաններ

Այլ լեզուներ և ձևաչափեր

Այլ լեզուներ

Դուք կարող եք անվճար ստանալ Անդամների այս տեղեկագիրքը և ծրագրի այլ նյութեր այլ լեզուներով: Health Net-ը տրամադրում է գրավոր թարգմանություններ որակավորված թարգմանիչներից: Չանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Չանգն անվճար է: Կարդացեք այս Անդամների տեղեկագիրքը՝ ծանոթանալու առողջական խնամքի լեզվական աջակցության ծառայությունների մանրամասներին, ինչպես օրինակ՝ բանավոր թարգմանչական և թարգմանության ծառայությունները:

Այլ ձևաչափեր

Դուք կարող եք անվճար ստանալ այս տեղեկությունն այլ ձևաչափերով, օրինակ՝ բրայլով, 20 տառաչափի խոշոր տպագիր, ձայնագրություն և մատչելի էլեկտրոնային ձևաչափեր (տվյալների սկավառակ): Չանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Չանգն անվճար է:



Չանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Բանավոր թարգմանչական ծառայություններ

Health Net-ն անվճար տրամադրում է գրավոր և բանավոր թարգմանչական ծառայություններ, ներառյալ ժեստերի լեզվով, որակավորված թարգմանիչների կողմից օրը 24 ժամ: Պարտադիր չէ խնդրել ընտանիքի անդամին կամ ընկերոջը որպես թարգմանիչ հանդես գալ: Մենք չենք քաջալերում անչափահասների օգտագործումը թարգմանչի դերում, եթե իհարկե արտակարգ իրավիճակ չէ: Բանավոր թարգմանչի, լեզվական և մշակութային ծառայություններն անվճար հասանելի են ձեզ: Օգնությունը հասանելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Ձեր լեզվով օգնության համար կամ այս տեղեկագիրքն այլ լեզվով ստանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

English: If you, or someone you are helping, need language services, call 1-800-675-6110 (TTY: 711). Aids and services for people with disabilities, like documents in braille and large print, are also available. These services are at no cost to you.

Arabic: إذا كنت أنت أو أي شخص تقوم بمساعدته، بحاجة إلى الخدمات اللغوية، فاتصل بالرقم (TTY: 711) 1-800-675-6110 تتوفر أيضاً المساعدات والخدمات للأشخاص ذوي الإعاقة، مثل المستندات المكتوبة بطريقة برايل وبطباعة كبيرة. تتوفر هذه الخدمات بدون تكلفة بالنسبة لك.



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Armenian: Եթե դուք կամ որևէ մեկը, ում դուք օգնում եք, ունեն լեզվական օգնության կարիք, զանգահարեք 1-800-675-6110 (TTY` 711): Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հասանելի են օգնություն և ծառայություններ, ինչպես օրինակ՝ փաստաթղթեր բրայլով կամ խոշոր տպագրությամբ: Այս ծառայությունները ձեզ համար անվճար են:

Cambodian: ប្រសិនបើអ្នក ឬនរណាម្នាក់ដែលអ្នកកំពុងជួយ ត្រូវការសេវាផ្នែកភាសា សូមទូរសព្ទទៅលេខ 1-800-675-6110 (TTY: 711)។ ជំនួយ និងសេវាកម្មផ្សេងៗសម្រាប់អ្នកដែលពិការ ដូចជាឯកសារជាអក្សរស្នាប និងជាអក្សរខ្នាតធំក៏មានផ្តល់ជូនផងដែរ។ សេវាកម្មទាំងនេះត្រូវបានផ្តល់ជូនអ្នកដោយមិនគិតថ្លៃ។

Chinese (Simplified): 如果您或者您正在帮助的人需要语言服务，请致电 1-800-675-6110 (TTY: 711)。还可提供面向残障人士的帮助和服务，例如盲文和大字版文档。这些服务免费为您提供。



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Chinese (Traditional): 如果您或您正在幫助的其他人需要語言服務，請致電 1-800-675-6110 (TTY: 711)。另外，還為殘疾人士提供輔助和服務，例如盲文和大字版文件。這些服務對您免費提供。

Farsi: اگر شما یا هر فرد دیگری که به او کمک می‌کنید نیاز به خدمات زبانی دارد، با شماره 1-800-675-6110 (TTY: 711) تماس بگیرید. کمک‌ها و خدماتی مانند مدارک با خط بریل و چاپ درشت نیز برای معلولان قابل عرضه است. این خدمات هزینه‌ای برای شما نخواهد داشت.

Hindi: यदि आपको, या जिसकी आप मदद कर रहे हैं उसे, भाषा सेवाएँ चाहिए, तो कॉल करें 1-800-675-6110 (TTY: 711)। विकलांग लोगों के लिए सहायता और सेवाएं, जैसे 'ब्रेल' लिपि और बड़े प्रिंट में दस्तावेज़, भी उपलब्ध हैं। ये सेवाएँ आपके लिए मुफ्त उपलब्ध हैं।



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք անցանց www.healthnet.com:

Hmong: Yog hais tias koj, los sis ib tus neeg twg uas koj tab tom pab nws, xav tau cov kev pab cuam txhais lus, hu rau 1-800-675-6110 (TTY: 711). Tsis tas li ntawd, peb kuj tseem muaj cov khoom siv pab thiab cov kev pab cuam rau cov neeg xiam oob qhab tib si, xws li cov ntaub ntawv uas tuaj yeem nkag cuag tau yooj yim thiab cov ntaub ntawv luam tawm uas pom tus niam ntawv loj. Cov kev pab cuam no yog muaj pab yam tsis xam nqi dab tsi rau koj them li.

Japanese: ご自身またはご自身がサポートしている方が言語サービスを必要とする場合は、1-800-675-6110 (TTY: 711) までお問い合わせください。障がいをお持ちの方のために、点字や大活字の文書などの補助・サービスも提供しています。これらのサービスは無料で提供されています。

Korean: 귀하 또는 귀하가 도와주고 있는 분이 언어 서비스가 필요하시면 1-800-675-6110 (TTY: 711)번으로 연락해 주십시오. 장애가 있는 분들에게 보조 자료 및 서비스(예: 점자 및 대형 활자 인쇄본)도 제공됩니다. 이 서비스는 무료로 이용하실 수 있습니다.



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք անցանց՝ www.healthnet.com:

Laotian: ຖ້າທ່ານ, ຫຼື ບຸກຄົນໃດໜຶ່ງທີ່ທ່ານກໍາລັງຊ່ວຍເຫຼືອ, ຕ້ອງການບໍລິການ
ແປພາສາ, ໂທ 1-800-675-6110 (TTY: 711). ນອກນັ້ນ, ພວກເຮົາຍັງມີ
ອຸປະກອນຊ່ວຍເຫຼືອ ແລະ ການບໍລິການສໍາລັບຄົນພິການອີກດ້ວຍ, ເຊັ່ນ
ເອກະສານເປັນຕົວອັກສອນນູນ ແລະ ພິມຂະໜາດໃຫຍ່. ການບໍລິການເຫຼົ່ານີ້ແມ່ນ
ມີໄວ້ຊ່ວຍເຫຼືອທ່ານໂດຍບໍ່ໄດ້ເສຍຄ່າໃດໆ.

Mien: Beiv hnangv meih ganh a'fai meih tengx ga'hlen mienh,
se gorngv qiemx zuqc longc tengx porv waac bun muangx,
mborqv finx lorz 1-800-675-6110 (TTY: 711). Mbenc duqv
maaih jaa-dorngx aengx caux gong tengx waaic fangx mienh,
beiv zoux sou benx nzangc-pokc bun hluo aengx caux domh
nzangc. Naaiv deix gong-bou jauv-louc mv zuqc heuc meih
ndortv nyaanh cingv.

Punjabi: ਜੇ ਤੁਹਾਨੂੰ ਜਾਂ ਜਿਸ ਦੀ ਤੁਸੀਂ ਮਦਦ ਕਰ ਰਹੇ ਹੋ, ਨੂੰ ਭਾਸ਼ਾ ਸੇਵਾਵਾਂ ਦੀ
ਜ਼ਰੂਰਤ ਹੈ, ਤਾਂ 1-800-675-6110 (TTY: 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ। ਅਪਾਹਜ ਲੋਕਾਂ
ਲਈ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ ਜਿਵੇਂ ਕਿ ਬ੍ਰੈਲ ਵਿੱਚ ਦਸਤਾਵੇਜ਼ ਅਤੇ ਵੱਡੇ ਪ੍ਰਿੰਟ ਵੀ
ਉਪਲਬਧ ਹਨ। ਇਹ ਸੇਵਾਵਾਂ ਤੁਹਾਡੇ ਲਈ ਮੁਫਤ ਹਨ।



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսակապի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք անցանց www.healthnet.com:

Russian: Если вам или человеку, которому вы помогаете, необходимы услуги перевода, звоните по телефону 1-800-675-6110 (TTY: 711). Кроме того, мы предоставляем материалы и услуги для людей с ограниченными возможностями, например документы, выполненные шрифтом Брайля или крупным шрифтом. Эти услуги предоставляются бесплатно.

Spanish: Si usted o la persona a quien ayuda necesita servicios de idiomas, comuníquese al 1-800-675-6110 (TTY: 711). También hay herramientas y servicios disponibles para personas con discapacidad, como documentos en braille y en letra grande. Estos servicios no tienen ningún costo para usted.

Tagalog: Kung ikaw o ang taong tinutulungan mo ay kailangan ng mga serbisyo sa wika, tumawag sa 1-800-675-6110 (TTY: 711). Makakakuha rin ng mga tulong at serbisyo para sa mga taong may mga kapansanan, tulad ng mga dokumentong nasa braille at mga malaking print. Wala kang babayaran para sa mga serbisyong ito.



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք անցանց՝ www.healthnet.com:

Thai: หากคุณหรือคนที่คุณช่วยเหลือ ต้องการบริการด้านภาษา โทร 1-800-675-6110 (TTY: 711) นอกจากนี้ยังมี ความช่วยเหลือและ บริการสำหรับผู้ทุพพลภาพ เช่น เอกสารในรูปแบบอักษรเบรลล์และ ตัวพิมพ์ขนาดใหญ่ บริการเหล่านี้ ไม่มีค่าใช้จ่ายสำหรับคุณ

Ukrainian: Якщо вам або людині, якій ви допомагаєте, потрібні послуги перекладу, телефонуйте на номер 1-800-675-6110 (TTY: 711). Ми також надаємо матеріали та послуги для людей з обмеженими можливостями, як-от документи шрифтом Брайля або надруковані великим шрифтом. Ці послуги для вас безкоштовні.

Vietnamese: Nếu quý vị hoặc ai đó mà quý vị đang giúp đỡ cần dịch vụ ngôn ngữ, hãy gọi 1-800-675-6110 (TTY: 711). Chúng tôi cũng có sẵn các trợ giúp và dịch vụ dành cho người khuyết tật, như tài liệu bằng chữ nổi Braille và bản in khổ lớn. Quý vị được nhận các dịch vụ này miễn phí.



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսակապի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք անցանց www.healthnet.com:

Բարի՝ գալուստ Health Net:

Շնորհակալություն Health Net-ին միանալու համար: Health Net-ն առողջապահական ծրագիր է այն անձանց համար, ովքեր ունեն Medi-Cal: Health Net-ն աշխատում է California նահանգի հետ՝ օգնելու ձեզ ստանալ այն առողջական խնամքը, որի կարիքն ունեք:

Անդամի տեղեկագիրք

Անդամների տեղեկագիրքը ներկայացնում է Health Net-ի ներքո ձեր ապահովագրությունը: Խնդրում ենք ուշադիր և ամբողջությամբ ընթերցել այն: Այն կօգնի ձեզ հասկանալ ձեր նպաստները, ձեզ մատչելի ծառայությունները և ինչպես ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը: Այն նաև բացատրում է ձեր՝ որպես Health Net-ի անդամի իրավունքները և պարտականությունները: Եթե ունեք առողջական հատուկ կարիքներ, համոզվեք, որ կարդացել եք բոլոր բաժինները, որոնք կիրառելի են ձեր դեպքում:

Այս Անդամների տեղեկագիրքը կոչվում է նաև Միասնական ապահովագրության ապացույց (EOC) և Բացահայտման ձևաթուղթ: **Այս EOC-ը և Բացահայտման ձևաթուղթն առողջապահական ծրագրի միայն ամփոփումն են: Ապահովագրության ճշգրիտ ժամկետները և պայմանները որոշելու համար պետք է ծանոթանալ առողջապահական ծրագրի պայմանագրի հետ:** Մանրամասների համար զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Այս Անդամների տեղեկագրքում Health Net-ի փոխարեն երբեմն ասվում է «մենք» կամ «մեզ»: Անդամների փոխարեն երբեմն ասվում է «դուք»: Մեծատառով գրված որոշ բառեր հատուկ իմաստ ունեն այս Անդամի տեղեկագրքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Health Net-ի և California-ի Առողջապահական ծառայությունների բաժնի (DHCS) միջև պայմանագրի պատճենը խնդրելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Դուք կարող եք անվճար խնդրել Անդամների տեղեկագրքի մեկ այլ օրինակ: Անդամների տեղեկագիրքը նաև հասանելի է Health Net-ի կայքում՝ www.healthnet.com: Կարող եք նաև հայցել Health Net-ի անվճար, ոչ-գույքային կլինիկական և վարչարարական քաղաքականությունը և գործընթացները: Դրանք նույնպես Health Net-ի կայքում են՝ www.healthnet.com:

Կապվեք մեզ հետ

Health Net-ն այստեղ է ձեզ օգնելու համար: Եթե հարցեր ունեք, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կարող եք նաև ցանկացած ժամանակ այցելել առցանց՝ www.healthnet.com կայքում:

Շնորհակալություն,

Health Net

21281 Burbank Blvd

Woodland Hills, CA 91367



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բովանդակություն

Այլ լեզուներ և ձևաչափեր	3
Այլ լեզուներ.....	3
Այլ ձևաչափեր.....	3
Բանավոր թարգմանչական ծառայություններ	4
Բարի՛ գալուստ Health Net:	11
Անդամի տեղեկագիրք	11
Կապվեք մեզ հետ.....	12
Բովանդակություն	13
1. Ինչից սկսել որպես անդամ.....	16
Ինչպես ստանալ օգնություն	16
Ով կարող է դառնալ անդամ.....	17
Նույնականացման (ID) քարտեր.....	18
2. Ձեր առողջապահական ծրագրի մասին	21
Առողջապահական ծրագրի հակիրճ նկարագրություն	21
Ինչպես է աշխատում ձեր ծրագիրը	23
Առողջապահական ծրագրերի փոփոխումը.....	24
Ուսանողները, որոնք տեղափոխվում են նոր վարչաշրջան կամ	
California-ից դուրս	24
Խնամքի շարունակականություն.....	26
Ծախսեր	30
3. Ինչպես ստանալ խնամք	34
Առողջական խնամքի ծառայությունների ստացում	34
Առաջնային խնամքի մատակարար (PCP)	35
Մատակարարների ցանց.....	40
Ժամադրություններ	51



Չանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ժամադրության գնալը	51
Ժամադրության չեղարկում և փոփոխում	52
Վճարում	52
Ուղեգրեր	54
California-ի Քաղցկեղի արդարության օրենքի ուղեգրեր	56
Նախնական հաստատում (նախօրոք լիազորում)	56
Երկրորդ կարծիքներ	58
Զգայուն խնամք	59
Հրատապ խնամք	63
Շտապ օգնություն	65
Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ	67
Նախօրոք առողջապահական ցուցումներ	68
Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն	68
4. Նպաստներ և ծառայություններ	69
Ինչ նպաստներ և ծառայություններ է ներառում ձեր առողջապահական ծրագիրը	69
Health Net-ի կողմից ապահովագրված Medi-Cal-ի նպաստներ	74
Health Net-ի այլ ապահովագրված նպաստներ և ծրագրեր	102
Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ	116
Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ Health Net-ի կամ Medi-Cal-ի միջոցով	125
Նոր և գործող տեխնոլոգիաների գնահատում	126
5. Երեխաների և պատանիների բարեկեցություն	127
Medi-Cal Երեխաների և դեռահասների համար	127
Երեխայի բարեկեցության առողջական ստուգումներ և կանխարգելիչ խնամք	130
Արյան կապարով թունավորման ստուգում	131
Երեխաներին և պատանիներին բարեկեցության ծառայությունների ստացման օգնություն	132
Այլ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի կամ այլ ծրագրերի միջոցով	132



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

6. Խնդիրների զեկուցում և լուծում	136
Գանգատներ.....	137
Բողոքարկումներ	139
Ինչ անել, եթե համաձայն չեք բողոքարկման որոշման հետ	140
Գանգատներ և Անկախ բժշկական վերանայումներ (IMR)	
Կառավարվող առողջական խնամքի բաժնի (DMHC) միջոցով	142
Նահանգային լսումներ	143
Խարդախություն, սպառում և չարաշահում	145
7. Իրավունքներ և պարտականություններ	147
Ձեր իրավունքները	147
Ձեր պարտականությունները	149
Ոչ-խտրականության ծանուցագիր.....	150
Որպես անդամ ներգրավվելու տարբերակներ.....	153
Գաղտնիության գործելակերպերի ծանուցագիր.....	154
Ծանուցագիր օրենքների մասին.....	168
Ծանուցագիր Medi-Cal-ի՝ որպես վերջին վճարողի մասին, այլ առողջական ապահովագրության (OHC) և քաղաքացիական խախտման դատական վճարների վերականգնման մասին	169
Ունեցվածքի փոխհատուցման ծանուցագիր	170
Գործողության ծանուցագիր	171
Երրորդ կողմի պատասխանատվություն	172
Անկախ կապալառուներ	172
Առողջական խնամքի ծրագրի խարդախություն.....	172
Խնամքի խախտում	173
8. Կարևոր հեռախոսահամարներ և բառեր, որոնք պետք է իմանալ	174
Կարևոր հեռախոսահամարներ.....	174
Բառեր, որոնք պետք է իմանալ	177



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

1. Ինչից սկսել որպես անդամ

Ինչպես ստանալ օգնություն

Health Net-ն ուզում է, որ դուք՝ որպես անդամ, գոհ լինեք ձեր առողջական խնամքից: Եթե ձեր խնամքի վերաբերյալ որևէ հարցեր կամ մտահոգություններ ունեք, Health Net-ն ուզում է լսել ձեզանից:

Անդամների ծառայությունների բաժին

Health Net-ի Անդամների ծառայությունների բաժինն այստեղ է ձեզ օգնելու համար: Health Net-ը կարող է՝

- Պատասխանել հարցերին ձեր առողջապահական ծրագրի և Health Net-ի ապահովագրված ծառայությունների վերաբերյալ:
- Օգնել ձեզ ընտրել կամ փոխել առաջնային խնամքի մատակարարին (PCP):
- Տեղեկացնել ձեզ՝ որտեղից ստանալ անհրաժեշտ խնամքը:
- Օգնել ստանալ բանավոր թարգմանչական ծառայություններ, եթե դուք վատ եք խոսում անգլերեն:
- Օգնել ստանալ տեղեկություններ այլ լեզուներով և ձևաչափերով:

Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Այս զանգն անվճար է: Health Net-ը պետք է ապահովի, որպեսզի դուք զանգահարելիս 10 րոպեից քիչ սպասեք:

Կարող եք նաև ցանկացած ժամանակ այցելել Անդամների ծառայությունների բաժինն առցանց՝ www.healthnet.com:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Ով կարող է դառնալ անդամ

Յուրաքանչյուր նահանգ ունի Medicaid ծրագիր: California-ում Medicaid-ը կոչվում է **Medi-Cal**:

Դուք իրավասու եք Health Net-ին, քանի որ համապատասխանում եք Medi-Cal-ին և ապրում եք այս շրջաններից մեկում՝ Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne (տես վարչաշրջանի գրասենյակի կոնտակտները ստորև): Դուք կարող եք նաև որակավորվել Medi-Cal-ի համար Սոցիալական ապահովության միջոցով, քանի որ ստանում եք SSI կամ SSP:

- **Amador վարչաշրջան**
 - Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-209-223-6550
- **Calaveras վարչաշրջան**
 - Առողջապահության և մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-209-754-6448
- **Inyo վարչաշրջան**
 - Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-760-872-1394
- **Los Angeles վարչաշրջան**
 - DPSS Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-866-613-3777, 1-310-258-7400
- **Mono վարչաշրջան**
 - Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-760-924-1770 (հարավային վարչաշրջանի գրասենյակ), 1-760-932-5600 (հյուսիսային վարչաշրջանի գրասենյակ)
- **Sacramento վարչաշրջան**
 - Մարդու օգնության բաժին՝ 1-800-560-0976
- **San Joaquin վարչաշրջան**
 - Մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-209-468-1000
- **Stanislaus վարչաշրջան**
 - Համայնքային ծառայությունների գործակալություն՝ 1-877-652-0734
- **Tulare վարչաշրջան**
 - Առողջապահության և մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-800-540-6880



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
 Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

▪ Tuolumne վարչաշրջան

- Հանրային առողջություն՝ 1-209-533-7401

Անդամակցության վերաբերյալ հարցերի համար խնդրում ենք զանգահարել Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով, կամ այցելել <http://www.healthcareoptions.dhcs.ca.gov/> կայքը:

Սոցիալական ապահովության վերաբերյալ հարցերի համար զանգահարեք Սոցիալական ապահովության վարչություն՝ 1-800-772-1213, կամ այցելեք <https://www.ssa.gov/locator/> կայքը:

Անցումային Medi-Cal

Դուք կարող եք ստանալ Անցումային Medi-Cal, եթե սկսել եք ավելի շատ գումար վաստակել և այլևս չեք համապատասխանում Medi-Cal-ին:

Դուք կարող եք հարցեր տալ Անցումային Medi-Cal-ի որակավորման վերաբերյալ ձեր տեղական շրջանային գրասենյակում՝

<http://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal/Pages/CountyOffices.aspx>, կամ զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով:


Նույնականացման (ID) քարտեր

Որպես Health Net-ի անդամ՝ դուք կստանաք մեր Health Net-ի նույնականացման (ID) քարտ: Դուք պետք է ցույց տաք ձեր Health Net-ի **ID քարտը** և ձեր Medi-Cal Նպաստների նույնականացման քարտը (BIC), երբ ստանում եք առողջական խնամքի որևէ ծառայություն կամ դեղատոմսեր: Ձեր Medi-Cal BIC քարտը California նահանգի կողմից ձեզ ուղարկված նպաստների նույնականացման քարտն է: Բոլոր առողջական քարտերը մշտապես պահեք ձեզ մոտ: Ձեր Medi-Cal BIC և Health Net ID քարտերն այսպիսի տեսք ունեն.



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:



Ձեր Health Net-ի ID քարտը կարևոր տվյալներ է պարունակում, ներառյալ՝

- Ձեր Առաջնային խնամքի մատակարարի (PCP) անունը (կամ ձեր կլինիկայի կամ բժշկական խմբի անունը): Այս տեղեկատվությունը չի երևում այն անդամների ID քարտի վրա, ովքեր ունեն և՛ Medicare (Մաս A և Մաս B), և՛ Medi-Cal ապահովագրություն: PCP-ի տեղեկություններն են՝ «Այցելեք ձեր Medicare բժշկին»: Այս տեղեկությունը չի ցուցադրվում նաև նորաձինների ID քարտերում, որոնց DHCS-ի կողմից հասկացվել է Հաճախորդի ինդեքսի համար (CIN): PCP-ի տեղեկություններն են՝ «Հիմնական MD չկա»:
- Ձեր PCP-ի հասցեն ու հեռախոսահամարը: Այս տեղեկատվությունը չի երևում այն անդամների ID քարտի վրա, ովքեր ունեն և՛ Medicare (Մաս A և Մաս B), և՛ Medi-Cal ապահովագրություն: PCP-ի տեղեկություններն են՝ «Այցելեք ձեր Medicare բժշկին»: Այս տեղեկությունը չի ցուցադրվում նաև նորաձինների ID քարտերի վրա, որոնց հասկացվել է CIN DHCS-ի կողմից: PCP-ի տեղեկություններն ասում են «Խնդրում ենք զանգահարել Անդամի ծառայությունների բաժին»:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Եթե ձեր PCP-ի տեղեկությունները և/կամ բժշկական խմբի տվյալները սխալ են, կամ եթե դուք փոխել եք ձեր PCP-ին և/կամ բժշկական խումբը ձեր վերջին ID քարտի թողարկումից հետո, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով՝ PCP-ի ճիշտ տվյալներ պարունակող նոր քարտի ձեռք բերման համար:
- Եթե ունեք որևէ հարց ձեր ID քարտի վերաբերյալ, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ահա, թե ինչ անել ձեր Health Net-ի ID քարտի հետ.

- Ստուգեք՝ արդյոք ID քարտում նշված տեղեկությունները ճիշտ են: Եթե ձեր ID քարտում որևէ բան սխալ է, անմիջապես զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Եթե ձեր անունը տառապիսալով է գրված կամ ճիշտ չէ, մենք ձեզ կմիացնենք ձեր վարչաշրջանի գրասենյակի հետ, որպեսզի սխալն ուղղվի:

Health Net-ի ID քարտը ներկայացրեք ամեն անգամ, երբ՝

- բժշկի այցելություն ունեք,
- հիվանդանոց եք գնում, կամ
- հրատապ խնամքի/շտապ օնության ծառայությունների կարիք ունեք:

Եթե անդամագրվելու ամսաթվից հետո մի քանի շաբաթվա ընթացքում դուք չստանաք ձեր Health Net ID քարտը, կամ եթե ձեր Health Net ID քարտը վնասվել է, կորել կամ գողացվել, անմիջապես զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին: Health Net-ը ձեզ նոր անվճար քարտ կուղարկի: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Եթե դուք չունեք Medi-Cal BIC քարտ կամ եթե ձեր քարտը վնասվել է, կորել կամ գողացվել է, զանգահարեք տեղական վարչաշրջանի գրասենյակ: Ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակը կարող եք գտնել

<http://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal/Pages/CountyOffices.aspx> հղումով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

2. Ձեր առողջապահական ծրագրի մասին

Առողջապահական ծրագրի հակիրճ նկարագրություն

Health Net-ը առողջապահական ծրագիր է այն մարդկանց համար, ովքեր ունեն Medi-Cal այս վարչաշրջաններում՝ Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne: Health Net-ն աշխատում է California նահանգի հետ՝ օգնելու ձեզ ստանալ այն առողջական խնամքը, որի կարիքն ունեք:

Կարող եք խոսել Health Net-ի Անդամների ծառայությունների բաժնի ներկայացուցիչներից որևէ մեկի հետ՝ տեղեկանալու առողջապահական ծրագրի մանրամասներին և ինչպես դրանք լավագույնս ծառայեցնել ձեզ համար: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր ապահովագրության սկիզբը և ավարտը

Health Net-ին անդամակցելուց հետո երկու շաբաթվա ընթացքում մենք կուղարկենք ձեզ Health Net-ի նույնականացման (ID) քարտը: Դուք պետք է ցույց տաք ձեր Health Net ID քարտը և Medi-Cal նպաստների նույնականացման քարտը (BIC), երբ ստանում եք առողջապահական ծառայություններ կամ դեղատոմսեր:

Ձեր Medi-Cal ապահովագրությունը պետք է թարմացվի ամեն տարի: Եթե ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակը չկարողանա թարմացնել ձեր Medi-Cal ապահովագրությունն էլեկտրոնային եղանակով, ապա վարչաշրջանը ձեզ կուղարկի Medi-Cal-ի նախապես լրացված անդամակցության թարմացման ձևաթուղթը: Լրացրեք այս ձևաթուղթը և վերադարձրեք ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակ: Դուք կարող եք վերադարձնել ձեր տվյալներն անձամբ, հեռախոսով, փոստով, առցանց կամ ձեր վարչաշրջանում առկա այլ էլեկտրոնային միջոցներով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Կարող եք սկսել օգտվել Health Net-ի ներքո Medi-Cal-ի նպաստներից ձեր ապահովագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից: Ձեր ապահովագրության ուժի մեջ մտնելու ամսաթիվ է հանդիսանում Health Net-ին անդամագրման գործընթացն ավարտելու ամսվան հաջորդող ամսվա 1-ին օրը: Ստուգեք Health Net-ի անդամի ID քարտը, որը փոստով ուղարկվել է ձեզ՝ ապահովագրման ուժի մեջ մտնելու ամսաթվի համար:

Դուք կարող եք ցանկացած պահի դադարեցնել ձեր Health Net-ի ապահովագրությունը և ընտրել մեկ այլ առողջապահական ծրագիր: Նոր ծրագիր ընտրելու վերաբերյալ օգնության համար զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով, կամ այցելեք www.healthcareoptions.dhcs.ca.gov կայքը:

Health Net-ն առողջապահական ծրագիր է Medi-Cal-ի անդամների համար Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջաններում: Գտեք ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակը <http://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal/Pages/CountyOffices.aspx> հղումով:

Health Net Medi-Cal-ի ապահովագրությունը կարող է ավարտվել, եթե ստորև նշվածներից որևէ մեկը ճիշտ է.

- Դուք հեռանում եք Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջաններից:
- Դուք այլևս չունեք Medi-Cal:
- Եթե իրավասու դառնաք այլընտրանքային ծրագրի համար, որը պահանջում է, որ անդամագրված լինեք Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի:
- Դուք բանտում եք գտնվում:

Եթե կորցնեք ձեր Health Net Medi-Cal ապահովագրությունը, դուք կարող եք դեռ իրավասու լինել FFS Medi-Cal ապահովագրության համար: Եթե համոզված չեք՝ արդյոք դեռ Health Net ունեք, թե ոչ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Հատուկ պայմաններ կառավարվող խնամք ունեցող ամերիկյան հնդկացիների համար

Ամերիկյան հնդկացիներն իրավունք ունեն չանդամագրվել Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրում կամ կարող են հեռանալ իրենց Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրից և վերադառնալ Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal ցանկացած պահի և ցանկացած պատճառով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե դուք ամերիկյան հնդկացի եք, ապա իրավունք ունեք ստանալ առողջական խնամքի ծառայություններ Հնդկացիների առողջական խնամքի մատակարարից (IHCP): Դուք նաև կարող եք մնալ կամ դուրս գալ Health Net-ից՝ այս տեղավայրերից առողջական խնամքի ծառայություններ ստանալու ընթացքում: Անդամակցության և անդամակցության դադարեցման մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Health Net-ը պետք է ձեզ խնամքի համակարգում տրամադրի, ներառյալ՝ ցանցից դուրս գործի կառավարում: Եթե խնդրեք ծառայություններ ստանալ IHCP-ից, Health Net-ը պետք է օգնի ձեզ ցանցում կամ ցանցից դուրս IHCP գտնել: Մանրամասների համար կարդացեք «Մատակարարների ցանց» հատվածն այս տեղեկագրի Գլուխ 3-ում:

Ինչպես է աշխատում ձեր ծրագիրը

Health Net-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր ունի DHCS-ի հետ: Կառավարվող խնամքի ծրագրերն առողջական խնամքի միջոցների՝ ծախսերի տեսանկյունից արդյունավետ օգտագործումն են, որոնք բարելավում են առողջական խնամքի հասանելիությունը և ապահովում խնամքի որակը: Health Net-ն աշխատում է բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների հետ Health Net ծառայության տարածքում՝ մեր անդամներին առողջապահություն ապահովելու համար: Որպես Health Net-ի անդամ, հնարավոր է, որ որակավորվեք որոշ հավելյալ ծառայությունների համար, որոնք տրամադրվում են FFS Medi-Cal-ի միջոցով: Սրանք ներառում են ամբուլատոր դեղատոմսեր, առանց դեղատոմսի դեղեր և որոշ բժշկական պարագաներ Medi-Cal Rx-ի միջոցով:

Անդամների ծառայությունների բաժինը կտեղեկացնեն ձեզ, թե ինչպես է աշխատում Health Net-ը, ինչպես ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը, ինչպես ամրագրել մատակարարի այցելություններ աշխատանքային ժամերին, ինչպես անվճար բանավոր և գրավոր թարգմանչական ծառայություններ խնդրել կամ գրավոր տեղեկություններն այլընտրանքային ձևաչափերով, և ինչպես պարզել, թե արդյոք դուք որակավորվում եք տրանսպորտային ծառայություններին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Անդամների ծառայությունների բաժնի մասին տեղեկությունները հասանելի են նաև առցանց՝ www.healthnet.com կայքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Առողջապահական ծրագրերի փոփոխումը

Դուք ցանկացած պահի կարող եք լքել Health Net-ը և միանալ ձեր բնակության վարչաշրջանի մեկ այլ առողջապահական ծրագրի, եթե առկա է այլ առողջապահական ծրագիր: Նոր ծրագիր ընտրելու համար զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով: Կարող եք զանգահարել ժամը 8 a.m.-ից մինչև 6 p.m.-ը, րկուշաբթիից ուրբաթ օրերին, կամ այցելել <https://www.healthcareoptions.dhcs.ca.gov> կայքը:

Մինչև 30 օր կամ ավել է տևում Health Net-ից դուրս գալու ձեր խնդրանքը մշակելու և ձեր վարչաշրջանի մեկ այլ պլանում գրանցվելու համար: Ձեր խնդրանքի կարգավիճակը պարզելու համար խնդրում ենք զանգահարել Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով:

Եթե ուզում եք հեռանալ Health Net-ից ավելի շուտ, կարող եք խնդրել Health Care Options արագացված (արագ) անդամակցության դադարեցման համար:

Անդամները, որոնք կարող են հայցել արագացված անդամակցության դադարեցում ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ Խնամատարի խնամքի կամ Խնամակալության աջակցության ծրագրերի ներքո ծառայություններ ստացող երեխաները, հատուկ առողջական խնամքի կարիքներով անդամները, և անդամները, որոնք արդեն անդամագրված են Medicare-ին կամ մեկ այլ Medi-Cal-ի կամ կոմերցիոն կառավարվող խնամքի ծրագրում:

Դուք կարող եք խնդրել հեռանալ Health Net-ից՝ կապվելով ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակի հետ: Գտեք ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակը <http://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal/Pages/CountyOffices.aspx> հղումով:

Կամ զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով:

Ուսանողները, որոնք տեղափոխվում են նոր վարչաշրջան կամ California-ից դուրս

Կարող եք շտապ օգնության խնամք և հրատապ խնամք ստանալ Միացյալ Նահանգներում ցանկացած տեղ, ներառյալ՝ Միացյալ Նահանգների տարածքներում: Ընթացիկ և կանխարգելիչ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Խնամքն ապահովագրված է միայն ձեր բնակության վարչաշրջանում: Եթե դուք ուսանող եք, որը տեղափոխվել է նոր վարչաշրջան California-ում, որպեսզի հաճախեք քոլեջ, ապա Health Net-ը կապահովագրի շտապ օգնության սենյակի և հրատապ խնամքի ծառայություններ ձեր նոր վարչաշրջանում: Դուք կարող եք նաև սովորական կամ կանխարգելիչ խնամք ստանալ ձեր նոր վարչաշրջանում, սակայն պետք է տեղեկացնեք Health Net-ին: Մանրամասները կարդացեք ներքևում:

Եթե անդամագրված եք Medi-Cal-ին և ուսանող եք California-ի ձեր բնակության վարչաշրջանից բացի մեկ այլ վարչաշրջանում, կարիք չկա, որպեսզի դիմեք այդ վարչաշրջանի Medi-Cal-ին:

Երբ ժամանակավորապես տնից հեռանում եք California-ի մեկ այլ վարչաշրջանում ուսանելու համար, ձեզ հասանելի են երկու տարբերակներ: Դուք կարող եք.

- Տեղեկացնել ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայությունների տեղական գրասենյակի իրավասության աշխատողին, որ դուք ժամանակավորապես տեղափոխվում եք բարձրագույն ուսումնական հաստատություն հաճախելու նպատակով, և տրամադրել ձեր հասցեն նոր վարչաշրջանում: Վարչաշրջանը կթարմացնի գործի արձանագրությունները ձեր նոր հասցեով և վարչաշրջանի կոդով: Դուք պետք է անեք սա, եթե ցանկանում եք շարունակել ստանալ ընթացիկ կամ կանխարգելիչ խնամք, քանի դեռ բնակվում եք նոր վարչաշրջանում: Հնարավոր է, որ ստիպված լինեք առողջապահական ծրագրեր փոխել, եթե Health Net-ը չի գործում այն վարչաշրջանում, որտեղ քոլեջ եք հաճախելու: Հարցերի, ինչպես նաև նոր առողջապահական ծրագրին միանալու ուշացումները կանխելու համար, զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով:

Կամ

- Եթե Health Net-ը չի գործում այդ նոր վարչաշրջանում, որտեղ քոլեջ եք այցելում, և չփոխեք ձեր առողջապահական ծրագիրը մեկ այլի, որըն աշխատում է այդ վարչաշրջանում, դուք կստանաք միայն շտապ օգնության խնամք կամ հրատապ խնամք որոշ ծառայությունների համար նոր վարչաշրջանում: Մանրամասների համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 3-ը՝ «Ինչպես խնամք ստանալ»: Առողջության սովորական կամ կանխարգելիչ խնամքի համար դուք պետք է օգտագործեք Health Net մատակարարների ցանցը, որը տեղակայված է Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջաններում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե ժամանակավորապես հեռանում եք California-ից մեկ այլ նահանգում քոլեջ հաճախելու նպատակով և ցանկանում եք պահպանել ձեր Medi-Cal ապահովագրությունը, ապա դիմեք ձեր իրավասության աշխատակցին ձեր տեղական վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակում: Քանի դեռ դուք որակավորվում եք, Medi-Cal-ն արտակարգ իրավիճակի խնամք և հրատապ խնամք կապահովագրի այլ նահանգում: Medi-Cal-ը նաև կփոխհատուցի շտապ օգնությունը, որը պահանջում է հոսպիտալացում Կանադայում և Մեքսիկայում:

Ընթացիկ և կանխարգելիչ խնամքի ծառայությունները չեն ապահովագրվում, երբ California-ից դուրս եք: Դուք իրավասու չեք լինի Medi-Cal-ի բժշկական նպաստների ապահովագրության համար՝ նահանգից դուրս այդ ծառայությունների համար: Health Net-ը չի վճարի ձեր առողջական խնամքի համար: Եթե Medicaid եք ցանկանում մեկ այլ նահանգում, ապա պետք է դիմեք այդ նահանգում: Medi-Cal-ը չի ապահովագրում հրատապ, շտապ կամ որևէ այլ առողջապահական ծառայություններ Միացյալ Նահանգներից դուրս, բացառությամբ շտապ օգնության, որը պահանջում է հոսպիտալացում Կանադայում և Մեքսիկայում, ինչպես նշված է Գլուխ 3-ում:

Նահանգից դուրս դեղատան նպաստները սահմանափակվում են մինչև 14-օրյա արտակարգ պաարով, երբ ուշացումները կարող են խոչընդոտել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայության մատուցմանը: Օգնության համար զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով կամ այցելեք նրանց առցանց՝ <https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home> կայքում:

Խնամքի շարունակականություն

Խնամքի շարունակականություն արտացանցային մատակարարի համար

Որպես Health Net-ի անդամ՝ դուք առողջական խնամք կստանաք Health Net-ի ցանցի մատակարարներից: Պարզելու համար, թե արդյոք առողջական խնամքի մատակարարը Health Net-ի ցանցում է, խնդրում ենք կարդալ Մատակարարների հասցեագիրքը: Մատակարարների հասցեագիրքը նաև հասանելի է Health Net-ի կայքում՝ www.healthnet.com: Հասցեագրքում չնշված մատակարարները կարող են չլինել Health Net ցանցում:

Որոշ դեպքերում կարող եք խնամք ստանալ մատակարարներից, որոնք Health Net-ի ցանցում չեն: Եթե ձեզանից պահանջվում էր փոխել ձեր առողջապահական ծրագիրը կամ անցնել FFS Medi-Cal-ից կառավարվող խնամքի, կամ դուք ունեք մատակարար,



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

ով ցանցում էր, բայց այժմ ցանցից դուրս է, դուք կարող եք պահպանել ձեր մատակարարին, նույնիսկ եթե նրանք Health Net-ի ցանցում չեն: Սա կոչվում է խնամքի շարունակականություն:

Եթե ցանկանում եք ցանցից դուրս մատակարարից խնամք ստանալ, զանգահարեք Health Net և խնդրեք խնամքի շարունակականություն: Կարող եք ստանալ խնամքի շարունակականություն մինչև 12 ամիս կամ ավել, եթե բոլոր հետևյալ կետերը ճշմարիտ են՝

- Դուք ցանցից դուրս մատակարարի հետ շարունակվող հարաբերություններ ունեք, որոնք եղել են նախքան Health Net-ին անդամակցելը:
- Դուք այցելել եք արտացանցային մատակարարի առնվազն մեկ անգամ 12 ամսվա ընթացքում ոչ շտապ օգնության խնամքի համար, նախքան Health Net-ին անդամագրվելը:
- Ցանցից դուրս մատակարարը ցանկանում է աշխատել Health Net-ի հետ և համաձայն է HealthNet-ի պայմանագրային պայմաններին և ծառայությունների համար վճարումներին:
- Ցանցից դուրս մատակարարը համապատասխանում է Health Net-ի մասնագիտական չափանիշներին:
- Արտացանցային մատակարարն անդամագրված է և մասնակցում է Medi-Cal ծրագրին:

Մանրամասների համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե ձեր մատակարարները չեն միանում Health Net-ի ցանցին 12 ամսվա ավարտին, համաձայն չեն Health Net-ի վճարման դրույքաչափերին կամ չեն համապատասխանում խնամքի որակի պայմաններին, ապա դուք պետք է անցնեք Health Net-ի ցանցի մատակարարների կամ զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին: Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով ձեր տարբերակները քննարկելու համար:

Health Net-ից չի պահանջվում խնամքի շարունակականություն տրամադրել ցանցից դուրս մատակարարների համար որոշ աջակից (աջակցող) ծառայությունների համար, ինչպես օրինակ՝ ռադիոլոգիա, լաբորատոր անալիզներ, դիալիզի կենտրոններ և փոխադրում: Դուք կստանաք այս ծառայությունները Health Net-իցանցի մատակարարից:

Խնամքի շարունակականության և որակավորման մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Ապահովագրված ծառայությունների ավարտում արտացանցային մատակարարի մոտ

Որպես Health Net-ի անդամ՝ դուք կստանաք ապահովագրված ծառայությունները Health Net-ի ցանցի մատակարարներից: Եթե բուժում եք ստանում որոշակի առողջական վիճակների համար, երբ անդամագրվում եք Health Net-ին կամ երբ ձեր մատակարարը հեռանում է Health Net-ի ցանցից, հնարավոր է, կարողանաք Medi-Cal ծառայություններ ստանալ ցանցից դուրս մատակարարից:

Հնարավոր է, որ կարողանաք շարունակել խնամք ստանալ արտացանցային մատակարարից որոշակի ժամանակահատվածում, եթե ձեզ ապահովագրված ծառայություններ են հարկավոր այս առողջական վիճակների համար՝

Առողջական վիճակ	Ժամանակահատված
Սուր վիճակներ (բժշկական խնդիր, որն արագ ուշադրություն է պահանջում):	Սուր վիճակի ողջ տևողության ընթացքում:
Լուրջ քրոնիկական ֆիզիկական և վարքագծային վիճակներ (լուրջ առողջական խնամքի խնդիր, որը երկար ժամանակ եք ունեցել):	Մինչև 12 ամիս ապահովագրումը սկսելու ամսաթվից կամ Health Net-ի հետ մատակարարի պայմանագրի դադարեցման ամսաթվից:
Հղիություն և հետծննդաբերական (ծննդաբերությունից հետո) խնամք:	Հղիության ընթացքում և հղիության ավարտից հետո մինչև 12 ամիս:
Մայրերի հոգեկան առողջության ծառայություններ:	Մինչև 12 ամիս ախտորոշումից հետո կամ հղիության ավարտից հետո, որը որ տեղի ունենա ավելի ուշ:
Նորածնի խնամք՝ ծննդից մինչև 36 ամսական:	Մինչև 12 ամիս ապահովագրումը սկսելու ամսաթվից կամ Health Net-ի հետ մատակարարի պայմանագրի դադարեցման ամսաթվից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Առողջական վիճակ	Ժամանակահատված
Մահացու հիվանդություն (կյանքին սպառնացող բժշկական խնդիր):	Հիվանդության ողջ տևողության ընթացքում: Դուք դեռևս կարող եք ծառայություններ ստանալ 12 ամսից ավել ժամանակ՝ Health Net-ին անդամագրվելու ամսաթվից կամ Health Net-ի հետ մատակարարի աշխատանքը դադարելու պահից:
Վիրահատություն կամ այլ բժշկական ընթացակարգ ցանցից դուրս մատակարարից, եթե այն ապահովագրվում է, անհրաժեշտ է բժշկական տեսակետից և հաստատվել է Health Net-ի կողմից՝ որպես ձեր փաստացի բուժման ընթացքի մաս, և որը խորհուրդ է տրվել և փաստագրվել մատակարարի կողմից:	Վիրահատություն կամ այլ բժշկական ընթացակարգը պետք է տեղի ունենա մատակարարի պայմանագրի դադարեցման ամսաթվից 180 օրվա ընթացքում կամ Health Net-ին անդամագրման ուժի մեջ մտնելու ամսաթվից 180 օրվա ընթացքում:

Այլ հնարավոր որակավորվող վիճակների համար զանգահարեք 1-800-675-6110 հեռախոսահամարով:

Եթե ցանցից դուրս մատակարարը չի ցանկանում շարունակել ծառայություններ տրամադրել կամ համաձայն չէ Health Net-ի պայմանագրային պահանջներին, վճարման կամ այլ բժշկական պայմանների հետ, ապա դուք չեք կարողանա շարունակական խնամք ստանալ մատակարարից: Դուք կարող եք շարունակել ծառայություններ ստանալ այլ մատակարարից Health Net-ի ցանցում:

Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով, որպեսզի օգնություն ստանաք պայմանագրային մատակարար ընտրելու հարցում, և կարողանաք շարունակել խնամքի ստացումը, կամ եթե հարցեր կամ խնդիրներ ունեք Health Net-ից հեռացած մատակարարից ապահովագրված ծառայություններ ստանալու հարցում:

Health Net-ը պարտավոր չէ ապահովել խնամքի շարունակականություն այն ծառայությունների համար, որոնք Medi-Cal-ը չի ծածկում կամ որոնք ապահովագրված չեն Health Net-ի DHCS-ի հետ պայմանագրով: Խնամքի շարունակականության,



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

իրավասության և հասանելի ծառայությունների մասին ավելին իմանալու համար
զանգահարեք 1-800-675-6110 հեռախոսահամարով:

Ծախսեր

Անդամների ծախսեր

Health Net-ը սպասարկում է այն անձանց, որոնք իրավունակ են Medi-Cal-ին: Շատ դեպքերում Health Net-ի անդամները չեն վճարում ապահովագրված ծառայությունների, հավելավճարների կամ հանելի գումարների համար:

Եթե ամերիկյան հնդկացի եք, դուք չեք վճարում անդամակցության վճարներ, հավելավճարներ, հանելի գումարներ, համավճարներ, ծախսերի բաժանում կամ այլ համանման գանձումներ: Health Net-ը չպետք է հաշիվ ներկայացնի ամերիկյան հնդկացի անդամին, ով պարագա կամ ծառայություն է ստանում ուղղակիորեն IHCP-ից կամ IHCP-ին ուղեգրման միջոցով, կամ նվազեցնեն վճարները, որոնք պարտք են IHCP-ին՝ անդամագրման վճարի, հավելավճարի, հանելի գումարի, համավճարի, ծախսաբաժնի կամ այլ գանձման գումարի չափով:

Եթե դուք գրանցված եք Santa Clara, San Francisco կամ San Mateo Վարչաշրջանի երեխաների առողջության նախաձեռնության ծրագրում (CCHIP) կամ գրանցված եք Medi-Cal for Families-ում, կարող եք ամսական հավելավճար և համավճարներ ստանալ:

Բացի շտապ օգնության խնամքից, հրատապ խնամքից Health Net-ի սպասարկման տարածքից դուրս, կամ զգայուն խնամքից, դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք Health Net-ից, նախքան կարող եք Health Net-ի ցանցից դուրս մատակարարի այցելել: Եթե նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չստանաք և այցելեք ցանցից դուրս մատակարարի ոչ շտապ օգնության խնամքի, տարածքից դուրս հրատապ խնամքի, կամ զգայուն խնամքի համար, ապա հնարավոր է՝ դուք վճարեք այդ մատակարարից ստացված խնամքի համար: Ապահովագրված ծառայությունների ցանկի համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 4-ը՝ «Նպաստներ և ծառայություններ»: Մատակարարների հասցեագիրքը նաև հասանելի է Health Net-ի կայքում՝ www.healthnet.com:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Երկարաժամկետ խնամք և Ամսական բնակության վճար ունեցող անդամների համար

Հնարավոր է, որ դուք պետք է Ամսական բնակության վճար (ծախսաբաժին) վճարեք յուրաքանչյուր ամիս ձեր երկարաժամկետ խնամքի ծառայությունների համար: Ամսական բնակության վճարի չափը կախված է ձեր եկամտից: Ամեն ամիս դուք կվճարեք ձեր սեփական առողջապահական հաշիվները, ներառյալ, բայց չսահմանափակվելով երկարաժամկետ խնամքի հաշիվներով, մինչև ձեր վճարած գումարը հավասարի ձեր Ամսական բնակության վճարին: Դրանից հետո Health Net-ը կփոխհատուցի այդ ամսվա ձեր երկարաժամկետ խնամքը: Դուք չեք ապահովագրվի Health Net-ի կողմից, մինչև որ չվճարեք ձեր երկարաժամկետ խնամքի ողջ Ամսական բնակության վճարը տվյալ ամսվա համար:

Ինչպես է մատակարարվում վճարվում

Health Net-ը մատակարարին վճարում է հետևյալ կերպ.

- Անձի հաշվարկով վճարումներ
 - Health Net-ն ամեն ամիս մատակարարներին վճարում է ֆիքսված գումար Health Net-ի յուրաքանչյուր անդամի համար: Սա կոչվում է անձի հաշվարկով վճարում: Health Net-ը և մատակարարներն աշխատում են միասին՝ որոշելու վճարման գումարը:
- FFS վճարումներ
 - Որոշ մատակարարներ կարող են խնամք մատուցել Health Net-ի անդամներին, այնուհետև մատուցված ծառայությունների համար ներկայացնել հաշիվ Health Net-ին: Սա կոչվում է FFS վճար: Health Net-ը և մատակարարներն աշխատում են միասին՝ որոշելու յուրաքանչյուր ծառայության արժեքը:
- Խթանիչ վճարումներ
 - Health Net-ը վճարում է որոշակի որակի չափանիշներին համապատասխանելու համար:

Տեղեկանալու համար, թե ինչպես է Health Net-ը վճարում մատակարարներին, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե հաշիվ եք ստանում առողջական խնամքի մատակարարից

Ապահովագրված ծառայություններն առողջական խնամքի ծառայություններ են, որոնց համար պարտավոր է վճարել Health Net-ը: Եթե հաշիվ եք ստանում Medi-Cal-ի ապահովագրված որևէ ծառայությունների համար, մի վճարեք հաշիվը: Անմիջապես զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ը կօգնի ձեզ պարզել, թե արդյոք հաշիվը ճիշտ է:

Եթե դեղատոմսով դեղի, պաշարի կամ հավելումների համար հաշիվ եք ստանում դեղատնից, զանգահարեք Medi-Cal Rx-ի Հաճախորդների սպասարկում՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտատերերը կարող են օգտագործել տարբերակ 7-ը կամ զանգահարել 711: Կարող եք նաև այցելել Medi-Cal Rx կայք՝ <https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home/>:

Ծախսերի համար ձեզ հետ վճարելու խնդրանք Health Net-ին

Եթե դուք վճարել եք արդեն ստացած ծառայությունների համար, կարող եք իրավասու լինել փոխհատուցման (վերադարձի) համար, եթե համապատասխանեք հետևյալ բոլոր պայմաններին.

- Ձեր ստացված ծառայությունն ապահովագրված առողջական ծառայություն է, որի համար պարտավոր է վճարել Health Net-ը: Health Net-ը չի փոխհատուցի ձեզ Medi-Cal-ի կամ Health Net-ի կողմից չապահովագրված ծառայության համար:-
- Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունը, քանի դեռ իրավասու Health Net անդամ էիք:
- Դուք փոխհատուցում եք խնդրում ապահովագրված ծառայությունը ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում:
- Դուք ապացույց եք ներկայացնում, որ դուք կամ ձեր անունից ինչ-որ մեկը վճարել է ապահովագրված ծառայության համար, օրինակ՝ մանրամասն անդորրագիր մատակարարից:
- Դուք ստացել եք ապահովագրված ծառայություն Medi-Cal-ին անդամագրված մատակարարից Health Net-ի ցանցում: Հարկավոր չէ բավարարել այս պայմանը, եթե ստացել եք շտապ օգնության ծառայություններ, ընտանիքի պլանավորման ծառայություններ կամ այլ ծառայություն, որը Medi-Cal-ը թույլ է տալիս, որ տրամադրվի արտացոնեցային մատակարարների կողմից առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորում):



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Եթե ապահովագրված ծառայությունը սովորաբար նախնական հաստատում (նախօրոք լիազորում) է պահանջում, դուք պետք է մատակարարից ապացույց տրամադրեք, որը ցույց է տալիս ապահովագրված ծառայության բժշկական կարիքը:

Health Net-ը կտեղեկացնի ձեզ փոխհատուցման իր որոշման մասին Գործողության ծանուցագիր (NOA) կոչվող նամակում: Եթե դուք համապատասխանում եք բոլոր վերոնշյալ պայմաններին, Medi-Cal-ին անդամագրված մատակարարը պետք է ձեզ փոխհատուցի ձեր կողմից վճարված ամբողջ գումարը: Եթե մատակարարը հրաժարվում է վճարել ձեզ, Health Net-ը ձեզ կփոխհատուցի ձեր կողմից վճարված ամբողջ գումարը:

Եթե մատակարարն անդամագրված է Medi-Cal-ին, սակայն Health Net-ի ցանցում չէ և հրաժարվում է վճարել ձեզ, Health Net-ը ձեզ հետ կվճարի, սակայն միայն այնքան, ինչքան կվճարեր FFS Medi-Cal-ը: Health Net-ը ձեզ հետ կվճարի գրպանից վճարված ողջ գումարը շտապ օգնության ծառայությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների կամ այլ ծառայության համար, որը Medi-Cal-ը թույլ է տալիս, որ տրամադրվի արտացանցային մատակարարների կողմից առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորում): Եթե չբավարարեք վերոնշյալ պայմաններից մեկը, Health Net-ը ձեզ հետ չի վճարի:

Health Net-ը ձեզ հետ չի վճարի, եթե.

- Դուք խնդրել և ստացել եք Medi-Cal-ի կողմից չապահովագրված ծառայություններ, օրինակ՝ կոսմետիկ ծառայություններ:
- Ծառայությունը Health Net-ի համար ապահովագրված ծառայություն չէ:
- Դուք ունեք չվճարված Medi-Cal Ամսական բնակության վճար:
- Դուք այցելել եք մի բժշկի, ով Medi-Cal չի ընդունում, և ձևաթուղթ եք ստորագրել, որտեղ ասվում է, որ միևնույն է ցանկանում եք տեսնել բժշկին և ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Դուք ունեք Medicare Մաս D համավճարներ դեղատոմսերի համար, որոնք ապահովագրված են ձեր Medicare Մաս D ծրագրի կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

3. Ինչպես ստանալ խնամք

Առողջական խնամքի ծառայությունների ստացում

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՏԵՂԵԿԱՆԱԼՈՒ, ԹԵ ՈՒՄԻՑ ԿԱՍ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԻՆՉ ԽՄԲԻՑ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԱՄՔ:

Կարող եք սկսել ստանալ առողջական խնամքի ծառայություններ Health Net-ին ձեր անդամակցության ուժի մեջ մտնելու ամսաթվից: Միշտ ձեզ հետ ունեցեք ձեր Health Net-ի նույնականացման (ID) քարտը, Medi-Cal Նպաստների նույնականացման քարտը (BIC) և որևէ այլ առողջական ապահովագրության քարտեր: Երբեք թույլ մի տվեք որևէ մեկին օգտագործել ձեր BIC քարտը կամ Health Net ID քարտը:

Medi-Cal ապահովագրություն ունեցող նոր անդամները պետք է ընտրեն առաջնային խնամքի մատակարար (PCP) Health Net-ի ցանցում: Ե՛վ Medi-Cal, և՛ համապարփակ այլ առողջապահական ապահովագրություն ունեցող նոր անդամները կարիք չունեն PCP ընտրելու:

Health Net-ի ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ է, որոնք աշխատում են Health Net-ի հետ: Եթե դուք ունեք միայն Medi-Cal ապահովագրություն, դուք պետք է ընտրեք PCP Health Net-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե PCP չեք ընտրել, ապա Health Net-ը կընտրի նրան ձեզ համար:

Դուք կարող եք ընտրել միևնույն PCP-ին կամ տարբեր PCP-ներ Health Net-ում ընտանիքի բոլոր անդամների համար, եթե PCP-ն հասանելի է:

Եթե դուք ունեք բժիշկ, որին ուզում եք պահպանել կամ, եթե ուզում եք նոր PCP գտնել, ապա կարող եք կարդալ Մատակարարների հասցեագիրքը Health Net ցանցի PCP-ների և այլ մատակարարների համար: Մատակարարների հասցեագիրքը պարունակում է այլ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

տեղեկություններ՝ աջակցելու ձեզ PCP-ի ընտրության հարցում: Եթե ուզում եք ստանալ Մատակարարների հասցեագիրքը, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Մատակարարների հասցեագիրքը նաև հասանելի է Health Net-ի կայքում՝ www.healthnet.com:

Եթե չեք կարողանում ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը Health Net-ի ցանցի մասնակից մատակարարի կողմից, ձեր PCP-ն կամ Health Net-ի ցանցի մասնագետը պետք է խնդրի Health Net-ին լիազորել ձեզ արտացանցային մատակարարի մոտ ուղարկելու համար: Սա կոչվում է ուղեգիր: Ձեզ ուղեգիր հարկավոր չէ, որպեսզի գնաք արտացանցային մատակարարի մոտ զգայուն խնամքի ծառայությունների համար, որոնք նկարագրվում են այս գլխի «Զգայուն խնամք» բաժնում:

Կարդացեք այս գլխի շարունակությունը՝ տեղեկանալու PCP-ներին, Մատակարարների հասցեագրքին և մատակարարների ցանցին առնչվող մանրամասներին:

Medi-Cal Rx ծրագիրը տրամադրում է ամբուլատոր դեղատոմսային դեղերի ապահովագրություն: Մանրամասների համար կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ» հատվածը այս տեղեկագրի Գլուխ 4-ում:

Առաջնային խնամքի մատակարար (PCP)

Ձեր առաջնային խնամքի մատակարարը (PCP) արտոնագրված մատակարարն է, ում դուք դիմում եք ձեր առողջական խնամքի մեծ մասի դեպքում: Ձեր PCP-ն նաև օգնում է, որպեսզի ստանաք ձեզ անհրաժեշտ այլ տեսակի խնամք: Դուք պետք է PCP ընտրեք Health Net-ին անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում: Կախված ձեր տարիքից և սեռից՝ դուք կարող եք ընտրել ընդհանուր մասնագետ, մանկաբարձ/գինեկոլոգ, ընտանիքի մատակարար, ինտերնիստ կամ մանկաբույժ՝ որպես ձեր PCP:

Պրակտիկ բուժքույրը (NP), բժշկի օգնականը (PA) կամ արտոնագրված բուժքույր-մանկաբարձը կարող են նույնպես հանդես գալ որպես ձեր PCP: Եթե ընտրեք NP, PA կամ բուժքույր-մանկաբարձ, ձեզ կարող է նշանակվել բժիշկ՝ ձեր խնամքը վերահսկելու համար: Եթե դուք և՛ Medicare-ում, և՛ Medi-Cal-ում եք, կամ եթե ունեք այլ համապարփակ առողջապահական խնամքի ապահովագրություն, ապա ձեզ հարկավոր չէ PCP ընտրել:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Կարող եք ընտրել Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP), Դաշնային որակավորված առողջական կենտրոն (FQHC) կամ Գյուղական առողջական կլինիկա (RHC)՝ որպես ձեր PCP: Կախված մատակարարի տեսակից՝ դուք կարող եք ընտրել մեկ PCP ձեզ համար և ձեր ընտանիքի այլ անդամների համար, որոնք նույնպես Health Net-ի անդամներ են, եթե PCP-ն մատչելի է:

Նշում. Ամերիկյան հնդկացիները կարող են IHCP ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ը Health Net-ի ցանցում չէ:

Եթե PCP չընտրեք անդամակցման 30 օրվա ընթացքում, ապա Health Net-ը ձեզ PCP կնշանակի: Եթե ձեզ PCP է նշանակվել, և դուք ուզում եք փոխել նրան, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Փոփոխությունը կիրականացվի հաջորդ ամսվա առաջին օրվանից:

Ձեր PCP-ն պետք է.

- Տեղեկանա ձեր առողջության պատմությանն ու կարիքներին
- Վարի ձեր առողջապահական արձանագրությունները
- Տրամադրի ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և ընթացիկ առողջական խնամքը
- Ուղղորդի ձեզ մասնագետի մոտ, անհրաժեշտության դեպքում
- Կազմակերպի հիվանդանոցի խնամքը, անհրաժեշտության դեպքում

Կարող եք կարդալ Մատակարարների հասցեագիրքը՝ Health Net-ի ցանցում PCP գտնելու համար: Health Net-ի հետ համագործակցող IHCP-ների, FQHC-ների ու RHC-ների ցանկը նշված է Մատակարարների հասցեագրքում: Այն ներառում է մատակարարի տեղեկություններ, ինչպիսիք են նրանց անունները, հասցեները, հեռախոսահամարները, մասնագիտությունները և այլն:

Կարող եք գտնել Health Net-ի Մատակարարների հասցեագիրքն առցանց՝ www.healthnet.com կայքում, կամ խնդրեք, որ այն ձեզ փոստով ուղարկվի՝ զանգահարելով 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև զանգահարել՝ պարզելու, եթե ձեր ընտրած PCP-ն նոր հիվանդներ է ընդունում:

Բժիշկների և այլ մատակարարի ընտրություն

Դուք լավագույնս գիտեք ձեր առողջական խնամքի կարիքները, այնպես որ լավ կլինի, եթե դուք ընտրեք ձեր PCP-ին: Ավելի նպատակահարմար է մնալ մեկ PCP-ի հետ, որպեսզի նա կարողանա ճանաչել ձեր առողջական խնամքի կարիքները: Սակայն, եթե ցանկանում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե ընտրել նոր PCP, ցանկացած ժամանակ կարող եք փոխել: Դուք պետք է ընտրեք PCP, ով Health Net-ի մատակարարների ցանցում է և ընդունում է նոր հիվանդներ:

Ձեր նոր ընտրությունը կդառնա ձեր PCP-ն՝ ձեր կողմից փոփոխությունը կատարելու հաջորդ ամսվա առաջին օրվանից:

Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Health Net-ը կարող է փոխել ձեր PCP-ին, եթե PCP-ն չի ընդունում նոր հիվանդներ, լքել է Health Net ցանցը, խնամք չի ցուցաբերում ձեր տարիքի հիվանդներին, կամ եթե PCP-ի որակի հետ կապված խնդիրներ կան, որոնք չեն լուծվել: Health Net-ը կամ ձեր PCP-ն կարող են նաև խնդրել ձեզ փոխվել նոր PCP-ի, եթե դուք չեք կարողանում համագործակցել կամ համաձայնել ձեր PCP-ի հետ, կամ եթե բաց եք թողնում կամ ուշանում եք ժամադրություններից: Եթե Health Net-ը պետք է փոխի ձեր PCP-ին, Health Net-ը ձեզ գրավոր կտեղեկացնի այս մասին:

Եթե փոխվել է ձեր PCP-ն, դուք փոստով կստանաք Health Net-ի անդամի նոր ID քարտ: Այն կունենա ձեր նոր PCP-ի անունը: Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին, եթե հարցեր ունեք նոր ID քարտի ստացման վերաբերյալ:

Որոշ բաներ, որոնք պետք է հաշվի առնել PCP ընտրելիս.

- Արդյո՞ք PCP-ն բուժում է երեխաների:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է իմ նախընտրած կլինիկայում:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ տանը, աշխատավայրին կամ իմ երեխաների դպրոցին:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ բնակության վայրին, և հե՞տո է հասնել PCP-ի գրասենյակ:
- Արդյո՞ք բժիշկն ու անձնակազմը խոսում են իմ լեզվով:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է իմ նախընտրած հիվանդանոցի հետ:
- Արդյո՞ք PCP-ն տրամադրում է ինձ անհրաժեշտ ծառայությունները:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակի ժամերը համապատասխանում են իմ ժամանակացույցին:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է իմ այցելած մասնագետների հետ:

Առողջության նախնական գնահատում (IHA)

Health Net-ը խորհուրդ է տալիս, որ որպես նոր անդամ, այցելեք ձեր նոր PCP-ն 120 օրվա ընթացքում ձեր առաջին առողջական հանդիպման համար, որը կոչվում է Առողջության նախնական գնահատման (IHA): Առողջության նախնական գնահատման նպատակն է օգնել



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

ձեր PCP-ին ծանոթանալ ձեր առողջական խնամքի պատմությանը և կարիքներին: Ձեր PCP-ն կարող է տալ ձեր առողջության պատմության վերաբերյալ որոշակի հարցեր կամ կարող է խնդրել ձեզ լրացնել հարցաշար: Ձեր PCP-ն նաև կտեղեկացնի ձեզ առողջապահական կրթության խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել ձեզ:

Երբ զանգահարում եք ձեր Առողջության նախնական գնահատման ժամադրությունը նշանակելու համար, տեղեկացրեք հեռախոսագանգին պատասխանող անձին, որ դուք Health Net-ի անդամ եք: Տրամադրեք ձեր Health Net-ի ID համարը:

Վերցրեք ձեր Medi-Cal BIC քարտը, Health Net ID քարտը և որևէ այլ առողջապահական ապահովագրության քարտը ձեր հանդիպմանը: Այցի ժամանակ ձեզ հետ ունեցեք նաև ձեր դեղորայքի ցանկը և հարցերը, որոնք կուզենայիք քննարկել: Պատրաստ եղեք գրուցել ձեր PCP-ի հետ ձեր առողջական խնամքի կարիքների և մտահոգությունների մասին:

Անպայման զանգահարեք ձեր PCP-ի գրասենյակ, եթե ուշանալու եք կամ չեք կարող գնալ ձեր այցին:

Եթե հարցեր ունեք ձեր առաջին առողջապահական հանդիպման վերաբերյալ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ընթացիկ խնամք

Ընթացիկ խնամքն առօրյա առողջական խնամքն է: Այն ներառում է կանխարգելիչ խնամքը, որը նաև կոչվում է բարեկեցության կամ լավ զգալու խնամք: Այն օգնում է ձեզ առողջ մնալ և չհիվանդանալ: Կանխարգելիչ խնամքը ներառում է կանոնավոր ստուգումներ, զննումներ, պատվաստումներ, առողջապահական կրթություն և խորհրդատվություն:

Health Net-ը խորհուրդ է տալիս, որ մասնավորապես երեխաները կանոնավոր կանխարգելիչ խնամք ստանան: Health Net-ի անդամները կարող են ստանալ բոլոր խորհուրդ տրվող վաղ կանխարգելման ծառայությունները, որոնք խորհուրդ են տրվում Մանկաբույժների ամերիկյան ակադեմիա և Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնների կողմից: Այս զննումները ներառում են լսողության և տեսողության զննում, որը կարող է երաշխավորել առողջ զարգացում և ուսուցում: Մանկաբույժների կողմից խորհուրդ տրվող ծառայությունների ցուցակի համար կարդացեք Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի «Bright Futures»-ի ուղեցույցը https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf կայքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ընթացիկ խնամքը նաև ներառում է խնամք, երբ դուք հիվանդ եք: Health Net-ն ապահովագրում է ձեր PCP-ի կողմից տրամադրվող ընթացիկ խնամքը:

Ձեր PCP-ն պետք է.

- Տրամադրի ձեզ ձեր սովորական խնամքի մեծ մասը, ներառյալ կանոնավոր ստուգումները, պատվաստումները (սրսկումները), բուժումը, դեղատոմսերը, անհրաժեշտ զննումները և բժշկական խորհրդատվությունը:
- Վարի ձեր առողջապահական արձանագրությունները:
- Ուղեգրի ձեզ մասնագետների մոտ, անհրաժեշտության դեպքում:
- Պատվիրի ռենտգեն, մամոգրաֆիաներ կամ լաբորատոր ստուգումներ, եթե դուք ունեք դրանց կարիքը:

Եթե ունեք ընթացիկ խնամքի կարիք, դուք պետք է զանգահարեք ձեր PCP-ին ժամադրություն նշանակելու համար: Անպայման զանգահարեք ձեր PCP-ին նախքան բժշկական խնամք ստանալը, եթե դա իհարկե արտակարգ իրավիճակ չէ: Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց:

Որպեսզի տեղեկանաք Health Net-ի կողմից ապահովագրված և չապահովագրված առողջական խնամքի և ծառայությունների մանրամասներին, կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 4-ը՝ «Նպաստներ և ծառայություններ», և Գլուխ 5-ը՝ «Երեխաների և պատանիների բարեկեցություն»:

Health Net ցանցի բոլոր մատակարարները կարող են օգտագործել օժանդակ միջոցներ և ծառայություններ՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ շփվելու համար: Նրանք կարող են նաև հաղորդակցվել ձեզ հետ մեկ այլ լեզվով կամ ձևաչափով: Տեղեկացրեք ձեր մատակարարին կամ Health Net-ին՝ ինչի կարիք ունեք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Մատակարարների ցանց

Medi-Cal մատակարարների ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ է, որոնք համագործակցում են Health Net-ի հետ Medi-Cal ապահովագրված ծառայությունները Medi-Cal անդամներին տրամադրելու համար:

Health Net-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: Երբ ընտրում եք մեր Medi-Cal ծրագիրը, դուք ընտրում եք ստանալ ձեր խնամքը մեր բժշկական խնամքի ծրագրի միջոցով: Դուք պետք է ստանաք ձեր ապահովագրված ծառայությունների մեծ մասը Health Net-ի միջոցով՝ մեր ցանցի մատակարարներից: Կարող եք այցելել արտացանցային մատակարարի առանց ուղեգրի կամ նախնական հաստատման շտապ օգնություն կամ ընտանիքի պլանավորման ծառայությունների համար: Կարող եք նաև այցելել արտացանցային մատակարարի սպասարկման տարածքից դուրս հրատապ խնամքի համար, եթե մեր կողմից չսպասարկվող տարածքում եք: Դուք պետք է ունենաք ուղեգիր կամ նախնական հաստատում բոլոր մնացած արտացանցային ծառայությունների համար: Հակառակ դեպքում դրանք չեն ապահովագրվի:

Նշում. Ամերիկյան հնդկացիները կարող են IHCP ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ը Health Net-ի ցանցում չէ:

Եթե ձեր PCP-ն, հիվանդանոցը կամ այլ մատակարարը ձեզ ապահովագրված ծառայություն տրամադրելու բարոյական առարկություն ունի, օրինակ՝ ընտանիքի պլանավորում կամ հղիության արհեստական ընդհատում, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Բարոյական առարկության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի «Բարոյական առարկություն» հատվածը:

Եթե ցանցի ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն ձեզ ապահովագրված ծառայություններ տրամադրելու հարցում, նա կարող է օգնել ձեզ գտնել մեկ այլ մատակարար, որը կտրամադրի ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Health Net-ը նույնպես կարող է օգնել ձեզ, որպեսզի մատակարար գտնեք, որը կտրամադրի այս ծառայությունը:

Ներցանցային մատակարարներ

Ձեր առողջական խնամքի կարիքների մեծամասնության համար դուք պետք է օգտագործեք Health Net-ի ցանցի մատակարարներին: Դուք ձեր կանխարգելիչ և ընթացիկ խնամքը ստանալու եք ներցանցային մատակարարից: Դուք նաև կօգտագործեք Health Net-ի ցանցի մասնագետներին, հիվանդանոցները և այլ մատակարարներին:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ցանցի Մատակարարների հասցեագիրքը ստանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Կարող եք գտնել Մատակարարների հասցեագիրքը նաև առցանց՝ www.healthnet.com կայքում: Պայմանագրային դեղերի ցանկի պատճենը ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) հեռախոսահամարով և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home/>:

Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք Health Net-ից, նախքան կարող եք ցանցից դուրս մատակարարի այցելել, երբ՝

- Եթե շտապ օգնության կարիք **ունեք**, զանգահարեք 911 կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց:
- Եթե դուք Health Net-ի սպասարկման տարածքից դուրս եք և հրատապ խնամքի կարիք ունեք, գնացեք հրատապ խնամքի հաստատություն:
- Եթե ձեզ անհրաժեշտ են ընտանիքի պլանավորման ծառայություններ, կարող եք դիմել ցանկացած Medi-Cal մատակարարի՝ առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորում):

Եթե դուք վերոնշյալ դեպքերից որևէ մեկում չեք, և չեք ստանում նախնական հաստատում (նախօրոք լիազորում) նախքան խնամք ստանալը արտացանցային մատակարարից, դուք կարող եք պատասխանատու լինել վճարելու արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար:

Արտացանցային մատակարարներ, որոնք սպասարկման տարածքում են

Արտացանցային մատակարարներն այն մատակարարներն են, որոնք համաձայնություն չունեն Health Net-ի հետ աշխատելու համար: Բացառությամբ շտապ օգնության և Health Net-ի կողմից նախապես հաստատված խնամքի, դուք կարող եք վճարել ցանկացած խնամքի համար, որը ստանում եք ձեր սպասարկման տարածքում ցանցից դուրս մատակարարներից:

Եթե ունեք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջական խնամքի ծառայությունների կարիք, որոնք ցանցում հասանելի չեն, հնարավոր է՝ դուք կարողանաք ստանալ դրանք անվճար արտացանցային մատակարարից: Health Net-ը կարող է ուղեգիր հաստատել արտացանցային մատակարարի մոտ, եթե ձեզ անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում, կամ եթե տնից հեռու եք գտնվում: Ձեր բնակության վայրի համար Health Net-ի ժամանակի կամ հեռավորության ստանդարտների համար այցելեք



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Health Net-ի Մուտքի ստանդարտները: Եթե մենք ձեզ ուղեգիր տանք արտացանցային մատակարարի մոտ, մենք կվճարենք ձեր խնամքի համար:

Հրատապ խնամքի համար Health Net-ի սպասարկման տարածքում, դուք պետք է այցելեք Health Net-ի ցանցի հրատապ խնամքի մատակարարի: Ձեզ հարկավոր չէ նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ցանցի մատակարարից հրատապ օգնություն ստանալու համար: Ձեզ հարկավոր է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանալ ցանցից դուրս մատակարարից հրատապ խնամք ստանալու համար Health Net-ի սպասարկման տարածքում:

Եթե հրատապ խնամք ստանաք արտացանցային մատակարարից Health Net-ի սպասարկման տարածքում, հնարավոր է, ստիպված լինեք վճարել դրա համար: Շտապ օգնության խնամքի, հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլուխը:

Նշում. Եթե ամերիկյան հնդկացի եք, կարող եք խնամք ստանալ մեր մատակարարների ցանցից դուրս IHCP-ից՝ առանց ուղեգրի: Արտացանցային IHCP-ն կարող է նաև ուղեգրել ամերիկյան հնդկացի անդամներին ցանցի մատակարարի մոտ՝ առանց նախապես ուղեգիր հայցելու ցանցի PCP-ից:

Եթե օգնության կարիք ունեք արտացանցային ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Սպասարկման տարածքից դուրս

Եթե գտնվում եք Health Net-ի սպասարկման տարածքից դուրս և ունեք խնամքի կարիք, որն արտակարգ իրավիճակ կամ հրատապ չէ, անմիջապես զանգահարեք ձեր PCP-ին: Կամ զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց: Health Net-ն ապահովագրում է ցանցից դուրս շտապ օգնությունը: Եթե դուք ճանապարհորդում եք Կանադայում կամ Մեքսիկայում և ունեք շտապ օգնության խնամքի կարիք, որը պահանջում է հոսպիտալացում, Health Net-ը կապահովագրի ձեր խնամքը: Եթե դուք ճանապարհորդում եք Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներում և ունեք շտապ օգնության խնամքի, հրատապ խնամքի կամ այլ առողջական ծառայությունների կարիք, Health Net-ը չի ապահովագրի ձեր խնամքը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե վճարում եք հոսպիտալացում պահանջող շտապ օգնության խնամքի համար Կանադայում կամ Մեքսիկայում, կարող եք փոխհատուցում խնդրել Health Net-ից: Health Net-ը կդիտարկի ձեր հայցը: Փոխհատուցման մասին ավելին իմանալու համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 2-ը՝ «Ձեր առողջապահական ծրագրի մասին»:

Եթե մեկ այլ նահանգում եք կամ ԱՄՆ տարածքում, օրինակ՝ American Samoa, Guam, Northern Mariana Islands, Puerto Rico կամ ԱՄՆ Virgin Islands, դուք ապահովագրված եք շտապ օգնության խնամքի համար: Ոչ բոլոր հիվանդանոցներն ու բժիշկներն են ընդունում Medicaid: (Medi-Cal-ը Medicaid-ի անվանումն է միայն California-ում): Եթե ձեզ շտապ օգնության խնամք է պահանջվում California-ից դուրս, անմիջապես ասացեք հիվանդանոցի կամ շտապ օգնության սենյակի բժշկին, որ Medi-Cal ունեք և Health Net-ի անդամ եք:

Խնդրեք, որ հիվանդանոցը պատճենի ձեր Health Net-ի ID քարտը: Ասացեք հիվանդանոցում և բժիշկներին, որ հաշիվ ուղարկեն Health Net-ին: Եթե հաշիվ ստանաք այլ նահանգում ստացված ծառայությունների համար, անմիջապես զանգահարեք Health Net-ին: Մենք կաշխատենք հիվանդանոցի և/կամ բժիշկի հետ, որպեսզի Health Net-ը վճարի ձեր խնամքի համար:

Եթե California-ից դուրս եք գտնվում և ձեզ շտապ պահանջվում է ամբուլատոր դեղատոմսային դեղ ստանալ, խնդրեք, որ դեղատունը զանգահարի Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով:

Նշում. ամերիկացի հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ արտացանցային IHCP-ներում:

Եթե հարցեր ունեք արտացանցային կամ սպասարկման տարածքից դուրս խնամքի վերբերյալ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով, օրը 711 ժամ, շաբաթը 7 օր:

Եթե ձեզ անհրաժեշտ է հրատապ խնամք Health Net-ի սպասարկման տարածքից դուրս, գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատություն: Եթե դուք ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներից դուրս և ունեք հրատապ խնամքի կարիք, Health Net-ը չի ապահովագրի ձեր խնամքը: Հրատապ խնամքի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացք այս գլխի հետագա «Հրատապ խնամք» հատվածը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ինչպես է գործում կառավարվող խնամքը

Health Net-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: Health Net-ը խնամք է տրամադրում անդամներին, ովքեր բնակվում են Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջաններում:

Կառավարվող խնամքում ձեր PCP-ն, մասնագետները, կլինիկան, հիվանդանոցը և այլ մատակարարներ միասին են աշխատում ձեզ խնամք տրամադրելու համար:

Health Net-ը պայմանագրեր ունի բժշկական խմբերի հետ՝ Health Net-ի անդամներին խնամք տրամադրելու համար: Բժշկական խումբը կազմված է բժիշկներից, որոնք PCP-ներ են և մասնագետներ: Բժշկական խումբն աշխատում է այլ մատակարարների հետ, օրինակ՝ լաբորատորիաների և տնական օգտագործման բժշկական սարքավորման մատակարարների հետ: Բժշկական խումբը նաև կապված է հիվանդանոցի հետ: Տեսեք ձեր Health Net-ի ID քարտը՝ պարզելու ձեր PCP-ի, բժշկական խմբի և հիվանդանոցի անվանումը:

Երբ միանում եք Health Net-ին, կարող եք ընտրել PCP կամ մեկին կնշանակեն ձեզ համար: Ձեր PCP-ն բժշկական խմբի մաս է: Ձեր PCP-ն և բժշկական խումբը կարգավորում են ձեր բոլոր բժշկական կարիքների բուժումը: Ձեր PCP-ն կարող է ձեզ ուղարկել մասնագետների մոտ կամ լաբորատոր անալիզներ ու ռենտգեն անելու համար: Եթե ծառայությունների կարիք ունեք, որոնք պահանջում են նախնական հաստատում (նախօրոք լիազորում), Health Net-ը կամ ձեր բժշկական խումբը կվերանայի նախնական հաստատումը (նախօրոք լիազորում), և կորոշի, եթե ծառայությունը հաստատված է:

Դեպքերի մեծ մասում դուք պետք է գնաք մասնագետի կամ այլ առողջական պրոֆեսիոնալի մոտ, որն աշխատում է նույն բժշկական խմբում, ինչ ձեր PCP-ն: Բացի շտապ օգնությունից, դուք պետք է նաև ստանաք հիվանդանոցային խնամք ձեր բժշկական խմբին կցված հիվանդանոցից: Եթե դուք ունեք բժշկական արտակարգ իրավիճակ, կարող եք անմիջապես խնամք ստանալ ցանկացած շտապ օգնության սենյակում, հիվանդանոցում կամ հրատապ խնամքի կենտրոնում, նույնիսկ եթե այն կապված չէ ձեր բժշկական խմբի հետ:

Մանրամասների համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 3-ի «Հրատապ խնամք» և «Շտապ օգնություն» բաժինները:

Երբեմն ձեզ կարող է ծառայություն պետք լինել, որը հասանելի չէ բժշկական խմբի մատակարարից: Այդ դեպքում ձեր PCP-ն ձեզ կուղարկի մեկ այլ բժշկական խմբի կամ արտացանցային մատակարարի մոտ: Ձեր PCP-ն կհայցի նախնական հաստատում (նախօրոք լիազորում), որպեսզի գնաք այդ մատակարարի մոտ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Շատ դեպքերում դուք պետք է նախօրոք լիազորում ստանաք ձեր PCP-ից, բժշկական խմբից կամ Health Net-ից, նախքան կարող եք այցելել ցանցից դուրս մատակարարի կամ ձեր բժշկական խմբի մաս չկազմող մատակարարի: Նախնական հաստատման (նախօրոք լիազորում) կարիք չկա շտապ օգնության, ընտանիքի/պլանավորման ծառայությունների կամ ցանցում հոգեկան առողջության ծառայությունների համար:

Ե՛վ Medicare, և՛ Medi-Cal ունեցող անդամներ

Medicare և Medi-Cal ունեցող անդամները պետք է դիմեն Medicare մատակարարների Medicare ապահովագրված նպաստների համար և Medi-Cal ծրագրի մատակարարների Medi-Cal ապահովագրված նպաստների համար:

- Եթե ունեք Medicare Advantage ծրագիր (EOC), ներառյալ Հատուկ կարիքների երկակի ծրագիր-(D-SNP), խնդրում ենք կարդալ ձեր Medicare ծրագրի Ապահովագրության ապացույցը (EOC):
- Եթե ունեք Medicare Վճար ծառայության դիմաց (FFS), կարդացեք Medicare-ի կողմից տրամադրվող «Medicare-ը և դուք» (“Medicare & You”) տեղեկագիրքը: Կարող եք գտնել այն նաև Medicare-ի կայքում՝ <https://www.medicare.gov/medicare-and-you>:

Բժիշկներ

Դուք կընտրեք բժիշկ կամ այլ մատակարար Health Net-ի Մատակարարների հասցեագրքից որպես ձեր PCP: Ձեր ընտրած PCP-ին պետք է լինի ցանցի մատակարար: Health Net-ի Մատակարարների հասցեագրքի պատճենը ստանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ գտեք այն առցանց՝ www.healthnet.com կայքում:

Եթե նոր PCP եք ընտրում, դուք պետք է զանգահարեք՝ համոզվելու, որ ձեր ընտրած PCP-ն նոր հիվանդներ է ընդունում:

Եթե դուք ունեիք բժիշկ, նախքան Health Net-ի անդամ դառնալը, և այդ բժիշկը Health Net-ի ցանցում չէ, հնարավոր է, որ կարողանաք շարունակել այցելել այդ բժշկին որոշակի ժամանակ: Սա կոչվում է խնամքի շարունակականություն: Խնամքի շարունակականության մասին կարող եք ավելին կարդալ այս տեղեկագրի Գլուխ 2-ում՝ «Ձեր առողջապահական ծրագրի մասին»: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե դուք ունեք մասնագետի կարիք, ձեր PCP-ին կոտարկի ձեզ մասնագետի մոտ Health Net-ի ցանցում: Որոշ մասնագետներ ուղեգիր չեն պահանջում: Ուղեգրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի հետագա «Ուղեգրեր» հատվածը:

Հիշեք, եթե դուք չեք ընտրում PCP, Health Net-ը կընտրի նրան ձեզ համար, եթե իհարկե ի լրացում Medi-Cal-ի չունեք այլ առողջական համապարփակ ապահովագրություն: Դուք լավագույնս գիտեք ձեր առողջական խնամքի կարիքները, այնպես որ լավ կլինի, եթե դուք ընտրեք: Եթե դուք և Medicare-ում, և Medi-Cal-ում եք, կամ ունեք այլ առողջապահական խնամքի ապահովագրություն, ապա ձեզ հարկավոր չէ PCP ընտրել Health Net-ից:

Եթե ուզում եք փոխել ձեր PCP-ին, ապա պետք է ընտրեք PCP Health Net-ի Մատակարարների հասցեագրքից: Համոզվեք, որ PCP-ն ընդունում է նոր հիվանդներ: Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Դուք կարող եք PCP-ի փոփոխություն կատարել փոստով, ֆաքսով կամ առցանց www.healthnet.com կայքում:

Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակում զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց:

Եթե արտակարգ իրավիճակ չէ, և դուք ունեք հիվանդանոցային խնամքի կարիք, ապա ձեր PCP-ն կորոշի՝ ինչ հիվանդանոց այցելել: Դուք պետք է այցելեք մի հիվանդանոց, որից օգտվում է ձեր PCP-ն, և որը Health Net-ի մատակարարների ցանցում է: Health Net-ի ցանցի հիվանդանոցները նշված են Մատակարարների հասցեագրքում:

Կանանց առողջության մասնագետներ

Դուք կարող եք այցելել կանանց առողջության մասնագետի Health Net-ի ցանցում ապահովագրված խնամքի համար, որն անհրաժեշտ է կանանց կանխարգելիչ և ընթացիկ խնամքի ծառայություններ տրամադրելու համար: Այս ծառայությունները ստանալու համար ձեր PCP-ից ուղեգրի կամ լիազորման ստացման կարիք չկա: Կանանց առողջության մասնագետ գտնելու օգնության համար կարող եք զանգահարել 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել 24 / 7 Բուժքույրական խորհրդատվական գծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար ձեր մատակարարը պարտադիր չէ, որ լինի Health Net-ի մատակարարների ցանցում: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարար և գնալ նրանց մոտ առանց ուղղորդման կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորում): Health Net-ի մատակարարների ցանցից դուրս Medi-Cal մատակարար գտնելու օգնության համար զանգահարեք 1-800-675-6110 հեռախոսահամարով:

Մատակարարների հասցեագիրք

Health Net-ի Մատակարարների հասցեագրքում թվարկված են մատակարարները, որոնք մասնակցում են Health Net-ի ցանցին: Ցանցը մատակարարների խումբ է, որոնք համագործակցում են Health Net-ի հետ:

Health Net-ի Մատակարարների հասցեագիրքը թվարկում է հիվանդանոցները, PCP-ներին, մասնագետներին, մասնագետ-բուժքույրերին, բուժքույր-մանկաբարձներին, բժիշկների օգնականներին, ընտանիքի պլանավորման մատակարարներին, FQHC-ները, ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարներին, երկարաժամկետ ծառայությունները և աջակցությունը (LTSS), Անկախ ծննդատները (FBC), IHCP-ները և RHC-ները:

Մատակարարների հասցեագիրքը պարունակում է Health Net-ի ցանցի մատակարարների անունները, մասնագիտացումները, հասցեները, հեռախոսահամարները, աշխատանքային ժամերը և լեզուները, որոնցով նրանք խոսում են, և թե արդյոք մատակարարը նոր հիվանդներ է ընդունում: Մատակարարների հասցեագիրքը նաև ցույց է տալիս, թե արդյոք մատակարարը տեղեկացրել է Health Net-ին, որ իրենք առաջարկում են սեռը հաստատող ծառայություններ: Այն նաև տրամադրում է շենքի ֆիզիկական հասանելիության մակարդակի մասին տեղեկություններ, ինչպես օրինակ՝ կայանատեղի, թեքահարթակներ, բազրիքներով աստիճաններ և լայն դռներով ու բռնակներով սանհանգույցներ:

Բժշկի կրթության, մասնագիտական որակավորման, օրդինատուրայի ավարտի, վերապատրաստման և խորհրդի հավաստագրման մասին ավելին իմանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Մատակարարների հասցեագիրքը հասանելի է նաև առցանց՝ www.healthnet.com կայքում:

Եթե ցանկանում եք ստանալ Մատակարարների հասցեագրքի տպագիր տարբերակը, զանգահարեք 1-800-675-6110 (TTY՝ 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Կարող եք գտնել Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատների ցուցակը Medi-Cal Rx Դեղատների հասցեագրքում՝ <https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home/>: Կամ կարող եք նաև գտնել ձեր մոտակայքում դեղատուն՝ զանգահարելով Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով (TTY 1-800-977-2273) և սեղմել 7 կամ 711:

Ժամանակին խնամքի ստացում

Ձեր ներքանցային մատակարարը պետք է ժամանակին խնամք տրամադրի՝ հիմնվելով ձեր առողջական խնամքի կարիքների վրա: Առնվազն նրանք պետք է առաջարկեն ձեզ տեսակցություն, որը նշված է ստորև աղյուսակում նշված ժամկետներում: Health Net-ը պետք է հաստատի ուղեգիրը խնամքի համար ցանցից դուրս մատակարարի մոտ, եթե ձեզ անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում այս ժամանակին հասանելիության ստանդարտների շրջանակներում:

Ժամադրության տեսակը	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալ ժամկետներում՝
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք չեն պահանջում նախնական հաստատում (նախօրոք լիազորում)	48 ժամ
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք պահանջում են նախնական հաստատում (նախօրոք լիազորում)	96 ժամ
Ոչ-հրատապ (սովորական) առաջնային խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) մասնագետի խնամքի ժամադրություններ	15 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի (ոչ բժիշկ) խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի (ոչ բժիշկ) հետևողական խնամքի ժամադրություններ	Վերջին ժամադրությունից 10 աշխատանքային օր



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Ժամադրության տեսակը	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալ ժամկետներում՝
Ոչ-հրատապ (սովորական) ժամադրություններ օժանդակ (աջակից) ծառայությունների համար՝ վնասվածք, հիվանդություն կամ այլ առողջական վիճակ ախտորոշելու կամ բուժելու համար	15 աշխատանքային օր

Սպասման ժամանակի այլ ստանդարտներ	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալ ժամկետներում՝
Անդամների ծառայությունների բաժնի հեռախոսով սպասելու ժամանակը սովորական աշխատանքային ժամերին	10 րոպե
Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծի հեռախոսով սպասելու ժամանակը	30 րոպե (միացված է բուժքրոջը)

Երբեմն ժամադրության համար ավելի երկար սպասելը մեծ խնդիր չէ: Ձեր մատակարարը կարող է ձեզ ավելի երկար սպասեցնել, եթե դա չի վնասում ձեր առողջությանը: Ձեր արձանագրության մեջ պետք է նշված լինի, որ ավելի երկար սպասելը չի վնասում ձեր առողջությանը: Դուք կարող եք ընտրել սպասել ավելի ուշ ժամադրության կամ զանգահարել Health Net՝ ձեր ընտրած մեկ այլ մատակարարի մոտ գնալու համար: Ձեր մատակարարը և Health Net-ը կհարգեն ձեր ցանկությունը:

Ձեր բժիշկը կարող է խորհուրդ տալ հատուկ ժամանակացույց կանխարգելիչ ծառայությունների համար, առկա վիճակների համար հետևողական խնամքի համար կամ մասնագետների մոտ մշտական ուղեգրերի համար՝ կախված ձեր կարիքներից:

Տեղեկացրեք մեզ, եթե թարգմանչական ծառայությունների, ներառյալ ժեստերի լեզվի թարգմանչի կարիք ունեք, երբ զանգահարում եք Health Net, կամ երբ ապահովագրված ծառայություններ եք ստանում: Բանավոր թարգմանչական ծառայությունները հասանելի են անվճար: Մենք չենք քաջալերում անչափահասների կամ ընտանիքի օգտագործումը բանավոր թարգմանչի դերում: Բանավոր թարգմանչական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե բանավոր թարգմանչական ծառայությունների, ներառյալ նշանների լեզու, կարիք ունեք Medi-Cal Rx-ի դեղատանը, զանգահարեք Medi-Cal Rx-ի Հաճախորդների սպասարկում 1-800-977-2273 հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները կարող են զանգահարել 711, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը:

Խնամք ստանալու համար ճանապարհի վրա ծախսած ժամանակը կամ հեռավորությունը

Health Net-ը պետք է հետևի ձեր խնամքի համար ճամփորդության ժամանակին կամ հեռավորության ստանդարտներին: Այդ ստանդարտներն օգնում են ապահովել, որ դուք կարող եք ստանալ խնամք առանց չափազանց երկար ճանապարհ անցնելու կամ ձեր բնակության վայրից չափազանց հեռու: Ճամփորդության ժամանակի կամ հեռավորության ստանդարտները կախված են ձեր բնակության վարչաշրջանից:

Եթե Health Net-ը չկարողանա ձեզ տրամադրել խնամք այս ճամփորդության ժամանակի կամ հեռավորության ստանդարտներով, ապա DHCS-ը կարող է կիրառվել մեկ այլ ստանդարտ, որը կոչվում է այլընտրանքային հասանելիության ստանդարտ: Ձեր բնակության վայրում Health Net-ի ժամանակի կամ հեռավորության ստանդարտները տեսնելու համար այցելեք www.healthnet.com կայքը: Կամ զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Հեռու է համարվում այն, երբ դուք չեք կարող այցելել մատակարարին Health Net-ի ճամփորդության ժամանակի կամ հեռավորության ստանդարտների շրջանակներում ձեր վարչաշրջանի համար՝ անկախ ցանկացած այլընտրանքային հասանելիության ստանդարտից, որը Health Net-ը կարող է օգտագործել ձեր փոստային դասիչի համար:

Եթե ձեր բնակության վայրից հեռու գտնվող մատակարարի խնամքի կարիք ունեք, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Նրանք կարող են օգնել ձեզ գտնելու խնամք ձեզ մոտ գտնվող մատակարարի մոտ: Եթե Health Net-ը չի կարողանում խնամք գտնել ձեզ մոտ գտնվող մատակարարից մոտ, դուք կարող եք խնդրել Health Net-ից ձեզ փոխադրում կազմակերպել ձեր մատակարարին այցելելու համար, անգամ եթե այդ մատակարարը գտնվում է ձեր բնակավայրից հեռու:

Եթե օգնության կարիք ունեք դեղատան մատակարարների հարցում, զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ժամադրություններ

Երբ ունեք առողջական խնամքի կարիք՝

- Զանգահարեք ձեր PCP-ին:
- Պատրաստ ունեցեք ձեր Health Net-ի ID համարը զանգի ընթացքում:
- Եթե գրասենյակը փակ է, թողեք ձեր անունով և հեռախոսահամարով հաղորդագրություն:
- Տարեք ձեր Medi-Cal BIC քարտը և Health Net ID քարտը ձեր ժամադրությանը:
- Խնդրեք փոխադրում դեպի ձեր ժամադրության վայրը, եթե դրա կարիքն ունեք:
- Խնդրեք լեզվական օգնություն կամ բանավոր թարգմանչական ծառայություններ՝ նախքան ձեր ժամադրությունը, որպեսզի ծառայությունները ստանաք ձեր այցելության պահին, եթե անհրաժեշտ է:
- Ժամանակին եկեք ձեր ժամադրությանը՝ գալով մի քանի րոպե շուտ, որպեսզի գրանցվեք, լրացնեք ձևաթղթերը և պատասխանեք ձեր PCP-ին հարցերին:
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող ներկայանալ ժամադրությանը կամ ուշանում եք:
- Պատրաստ ունեցեք հարցեր և դեղորայքի վերաբերյալ տեղեկություններ:

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ: Եթե օգնության կարիք ունեք՝ որոշելու, թե որքան հրատապ է խնամքի կարիքը, և ձեր PCP-ն հասանելի չէ՝ ձեզ հետ խոսելու համար, զանգահարեք Health Net Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագծին՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ժամադրության գնալը

Եթե հնարավորություն չունեք գնալու և վերադառնալու ձեր առողջական խնամքի ծառայություններից և ժամադրություններից, Health Net-ը կարող է օգնել ձեզ համար փոխադրում կազմակերպելու հարցում: Կախված ձեր վիճակից՝ կարող եք որակավորվել Բժշկական փոխադրման կամ Ոչ-Բժշկական փոխադրման համար: Այս փոխադրման ծառայությունները շտապ օգնության համար չեն և կարող են անվճար լինել:

Եթե արտակարգ իրավիճակ ունեք, զանգահարեք **911**: Փոխադրումը հասանելի է ծառայությունների և ժամադրությունների համար, որոնք կապված չեն շտապ օգնության հետ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ավելին իմանալու համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 4-ը՝ «Փոխադրման նպաստներ արտակարգ իրավիճակ չհանդիսացող դեպքերում»:

Ժամադրության չեղարկում և փոփոխում

Եթե չեք կարող ժամադրության գալ, անմիջապես զանգահարեք ձեր մատակարարի գրասենյակ: Մատակարարների մեծամասնությունը խնդրում է ձեզ զանգահարել ժամադրությունից 24 ժամ (1 աշխատանքային օր) ժառանգ, եթե պետք է չեղարկեք այն: Եթե մի քանի ժամադրություն բաց թողնեք, ձեր մատակարարը կարող է դադարել խնամք տրամադրել ձեզ, և պետք է նոր մատակարար գտնեք:

Վճարում

Դուք չեք վճարում ապահովագրված ծառայությունների համար, եթե իհարկե Ամսական բնակության վճար չունեք երկարաժամկետ խնամքի համար: Մանրամասների համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 2-ի «Երկարաժամկետ խնամք և Ամսական բնակության վճար ունեցող անդամների համար» հատվածը: Շատ դեպքերում դուք չպետք է հաշիվ ստանաք մատակարարից: Դուք պետք է ցույց տաք ձեր Health Net-ի ID քարտը և ձեր Medi-Cal BIC քարտը, երբ ստանում եք առողջական խնամքի որևէ ծառայություն կամ դեղատոմս, որպեսզի ձեր բժիշկն իմանա՝ ում հաշիվ ուղարկել: Հնարավոր է, որ դուք ստանաք Նպաստների բացատրություն (EOB) կամ հայտարարագիր մատակարարից: EOB-ները կամ հայտարարագրերը հաշիվներ չեն:

Եթե ստանաք հաշիվ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Եթե դեղատոմս հաշիվ ստանաք, զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home/>:

Տեղեկացրեք Health Net-ին զանգահարելու գումարի չափը, ծառայության ամսաթիվը և հաշվի ներկայացման պատճառը: Health Net-ը կօգնի ձեզ պարզել՝ հաշիվը ապահովագրված ծառայության համար է, թե ոչ: Դուք պարտավոր չեք վճարել մատակարարին որևէ գումար, որը Health Net-ը պարտք է ցանկացած ապահովագրված ծառայության համար: Եթե հրատապ խնամք ստանաք արտացոսանցային մատակարարից և նախնական հաստատում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

(նախօրոք լիազորում) չստանաք Health Net-ից, հնարավոր է, ստիպված լինեք վճարել այդ խնամքի համար:

Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանաք Health Net-ից, նախքան կարող եք ցանցից դուրս մատակարարի այցելել, երբ՝

- Եթե շտապ օգնության կարիք ունեք, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց:
- Ձեզ անհրաժեշտ են ընտանեկան պլանավորման ծառայություններ կամ ծառայություններ՝ կապված սեռական ճանապարհով փոխանցվող վարակների թեստավորման հետ, ինչի դեպքում կարող եք դիմել Medi-Cal-ի ցանկացած մատակարարի՝ առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորում)

Եթե ձեզ հարկավոր է բժշկականորեն անհրաժեշտ խնամք ցանցից դուրս մատակարարից, քանի որ այն մատչելի չէ Health Net-ի ցանցում, դուք չեք վճարի, եթե խնամքը Medi-Cal ապահովագրված ծառայություն է, և դուք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) եք ստացել Health Net-ից: Շտապ օգնության խնամքի, հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք այս գլխի համապատասխան ենթավերնագրերը:

Եթե հաշիվ ստանաք կամ ձեզ խնդրեն վճարել համավճար, որը դուք կարծում եք, որ չպետք է վճարեք, զանգահարեք՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Հարցերի համար զանգահարեք call 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե ծառայություններ եք ստանում Վետերանների գործերի համակարգից կամ չապահովագրված, չլիազորված ծառայություններ եք ստանում California-ից դուրս, ապա հնարավոր է՝ ինքներդ ստիպված լինեք վճարել դրանց համար:

Health Net-ը ձեզ հետ չի վճարի, եթե.

- Ծառայությունները չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, ինչպիսիք են կոսմետիկ ծառայությունները:
- Դուք ունեք չվճարված Medi-Cal Ամսական բնակության վճար:
- Դուք այցելել եք մի բժշկի, ով Medi-Cal չի ընդունում, և ձևաթուղթ եք ստորագրել, որտեղ ասվում է, որ միևնույն է ցանկանում եք տեսնել բժշկին և ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Դուք փոխհատուցում եք խնդրել դեղատոմսերի համավճարների համար, որոնք ապահովագրված են ձեր Medicare Մաս D ծրագրով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ուղեգրեր

Եթե ձեզ մասնագետ է հարկավոր ձեր խնամքի համար, ձեր PCP-ն կամ մեկ այլ մասնագետ ձեզ ուղեգիր կտրամադրի: Մասնագետը մատակարար է, որը կենտրոնանում է առողջական խնամքի մեկ տեսակի ծառայության վրա: Ձեզ ուղեգրող բժիշկը կաշխատի ձեզ հետ մասնագետ ընտրելու համար: Որպեսզի երաշխավորենք, որ ժամանակին եք այցելում մասնագետի, DHCS-ը ժամանակացույց է հաստատել Անդամների համար ժամադրություններ ստանալու նպատակով: Այս ժամանակային շրջանակները թվարկված են այս գլխի ավելի վաղ՝ «Խնամքի ժամանակին հասանելիություն» բաժնում: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել ձեզ ժամադրություն ստանալ մասնագետին այցելելու համար:

Այլ ծառայություններ, որոնք կարող են ուղեգրի կարիք ունենալ, ներառում են գրասենյակային ընթացակարգեր, ռենտգեն և լաբորատոր անալիզներ:

Ձեր PCP-ն, հնարավոր է, ձեզ ձևաթուղթ կտա մասնագետի մոտ տանելու համար: Մասնագետը կլրացնի այդ ձևաթուղթը և հետ կուղարկի ձեր PCP-ին: Մասնագետը կբուժի ձեզ այնքան ժամանակ, որքան, իրենց կարծիքով, ձեզ բուժում է հարկավոր:

Ձեր PCP-ն կսկսի ուղեգրի գործընթացը: Ձեր PCP-ն գիտի՝ արդյոք ձեզ նախնական հաստատում (նախօրոք լիազորում) է հարկավոր, թե կարող եք անմիջապես ժամադրություն նշանակել: Եթե հարցեր ունեք՝ որոշելով, թե որքան շտապ արդյոք մասնագետի կամ հիվանդանոցի խնամքն ունի նախնական հաստատման (նախօրոք լիազորում) կարիք, կարող եք զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Սովորական ուղեգրերի խնդրանքները, որոնք պահանջում են նախնական հաստատում (նախօրոք լիազորում), մշակվում են մինչև յոթ աշխատանքային օրվա ընթացքում, բայց կարող են տևել մինչև 14 օրացուցային օր (14 օր՝ սկզբնական խնդրանքի ամսաթվից), եթե ձեր PCP-ից լրացուցիչ տեղեկություններ են անհրաժեշտ: Որոշ դեպքերում, ձեր PCP-ն կարող է խնդրել շտապել ձեր նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցումը: Արագացված (շտապ) նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցումները կարող են տևել ոչ ավելի, քան 72 ժամ: Խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով, եթե մինչ այս ժամանակ պատասխան չստանաք:

Եթե ունեք առողջական խնդիր, որն ունի հատուկ, երկարաժամկետ բժշկական խնամքի կարիք, հնարավոր է, ձեզ անհաժեշտ է մշտական ուղեգիր: Մշտական ուղեգիր ունենալը նշանակում է, որ դուք կարող եք գնալ նույն մասնագետի մոտ մեկից ավելի անգամ՝ առանց ամեն անգամ ուղեգիր ստանալու:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե խնդիրներ են առաջանում մշտական ուղեգիր ստանալու ժամանակ կամ ցանկանում եք ստանալ Health Net-ի ուղեգրերի քաղաքականության պատճենը, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ուղեգրի կարիք չկա հետևյալի համար՝

- PCP-ի այցելություններ
- Մանկաբարձ/գինեկոլոգի (OB/GYN) այցելություններ
- Հրատապ կամ շտապ օգնության խնամքի այցելություններ
- Չափահասների զգայուն ծառայություններ, ինչպես օրինակ՝ սեռական բռնության խնամք
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Ընտանիքի պլանավորման տեղեկությունների և ուղեգրերի ծառայություն գրասենյակ՝ 1-800-942-1054 հեռախոսահամարով)
- ՄԻԱՎ-ի ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան կամ ավելի բարձր տարիք)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (12 տարեկան կամ ավելի բարձր տարիք)
- Քիրոպրակտիկ ծառայություններ (կարող է պահանջվել ուղեգիր, եթե տրամադրվում է արտացանցային FQHC-ների, RHC-ների և IHCP-ների կողմից)
- Նախնական հոգեկան առողջության գնահատում
- Ասեղնաբուժություն, ամսվա առաջին երկու ծառայությունների համար (աուդիոլոգիայի, քիրոպրակտիկ, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի հետ միասին): Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:
- Ուտնաթաթի ծառայություններ
- Իրավասու ատամնաբուժական ծառայություններ
- Ընթացիկ մանկաբուժական խնամք Health Net-ի հետ աշխատող բժշկից
- Վկայագրված մանկաբարձ-բուժքրոջ ծառայություններ

Անչափահասները նույնպես կարող են ստանալ որոշակի ամբուլատոր հոգեկան առողջության բուժում կամ խորհրդատվություն, և թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) բուժում՝ առանց ծնողների կամ խնամակալի համաձայնության: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի «Անչափահասի համաձայնությամբ ծառայությունները» և Գլուխ 4-ի՝ «Թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) բուժման ծառայություններ» հատվածներն այս տեղեկագրքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

California-ի Քաղցկեղի արդարության օրենքի ուղեգրեր

Բարդ քաղցկեղների արդյունավետ բուժումը կախված է շատ գործոններից: Սա ներառում է ճիշտ ախտորոշումը և քաղցկեղի մասնագետներից ժամանակին բուժում ստանալը: Եթե ձեզ մոտ բարդ քաղցկեղ է ախտորոշվել, նոր California-ի Քաղցկեղի արդարության օրենքը ձեզ թույլ է տալիս ձեր բժշկից ուղեգիր խնդրել, որպեսզի բուժում ստանաք ներքանցային, Ազգային քաղցկեղի ինստիտուտի (NCI) կողմից նշանակված կենտրոնում, NCI Համայնքային ուռուցքաբանության հետազոտական ծրագրի (NCORP) հետ առնչվող կենտրոնում կամ որակավորված ակադեմիական քաղցկեղի կենտրոնում:

Եթե Health Net-ը չունի ներքանցային NCI-ի կողմից նշանակված քաղցկեղի կենտրոն, Health Net-ը թույլ կտա ձեզ ուղեգիր խնդրել California-ի այս արտացանցային կենտրոններից մեկից քաղցկեղի բուժում ստանալու համար, եթե արտացանցային կենտրոնը և Health Net-ը պայմանավորվում են վճարման վերաբերյալ, եթե չընտրեք քաղցկեղի բուժման այլ մատակարար:

Եթե ձեզ մոտ քաղցկեղ է ախտորոշվել, դիմեք Health Net պարզելու համար, եթե որակավորվում եք այս կենտրոններից մեկում խնամք ստանալու համար:

Պատրա՞ստ եք թողնել ծխելը: Անգլերենով տեղեկությունների համար զանգահարեք **1-800-300-8086** հեռախոսահամարով:
Իսպաներենի համար զանգահարեք՝ 1-800-600-8191:
 Մանրամասների համար այցելեք՝ www.kickitca.org կայքը:

Նախնական հաստատում (նախօրոք լիազորում)

Խնամքի որոշ տեսակների համար ձեր PCP-ն կամ մասնագետը պետք է խնդրեն Health Net-ի թույլտվությունը, նախքան դուք կկարողանաք ստանալ խնամքը: Սա կոչվում է նախնական հաստատում կամ նախօրոք լիազորում խնդրել: Սա նշանակում է, որ Health Net-ը պետք է ապահովի, որ խնամքը բժշկական տեսակետից անհրաժեշտ է (հարկավոր):



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները խելամիտ են և անհրաժեշտ՝ ձեր կյանքը պաշտպանելու, ձեզ հեռու պահելու լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից, կամ նվազեցնում են սաստիկ ցավն ախտորոշված հիվանդությունից կամ վնասվածքից: 21 տարեկանից փոքր անդամների համար Medi-Cal-ի ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է՝ բուժելու կամ օգնելու թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ իրավիճակը:

Հետևյալ ծառայությունների **համար** մշտապես անհրաժեշտ է նախնական հաստատում (նախօրոք լիազորում), եթե անգամ դուք ստանում եք դրանք Health Net-ի ցանցի մատակարարից՝

- Հոսպիտալացում, եթե արտակարգ իրավիճակ չէ
- Health Net-ի սպասարկման տարածքից դուրս ծառայություններ, եթե արտակարգ կամ հրատապ խնամք չէ
- Երկարաժամկետ խնամքի կամ հմուտ բուժքույրական ծառայություններ բուժքույրական հաստատությունում (ներառյալ մեծահասակների և մանկական Ենթասուր խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր են կնքել Առողջապահական ծառայությունների բաժնի Ենթասուր խնամքի բաժանմունքի հետ) կամ միջանկյալ խնամքի հաստատություններում (ներառյալ Զարգացման հաշմանդամների միջանկյալ խնամքի հաստատությունը (ICF/DD), ICF/DD-Habilitative (ICF/DD-H), ICF/DD-Nursing (ICF/DD-N))
- Ընդլայնված պատկերում
- Բժշկական փոխադրման ծառայություններ, երբ արտակարգ իրավիճակ չկա

Շտապ օգնության փոխադրման ծառայությունները նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեն պահանջում:

Health Net-ը որոշում կկայացնի ընթացիկ նախնական հաստատումը (նախօրոք լիազորում) վերաբերյալ (հաստատել կամ մերժել) յոթ աշխատանքային օրվա ընթացքում, երբ Health Net-ը ստանա ողջամտորեն անհրաժեշտ տեղեկատվությունը որոշում կայացնելու համար: Երբ մատակարարի կողմից նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցում է արվում, և Health Net-ը գտնում է, որ ստանդարտ ժամանակացույցին հետևելը կարող է լրջորեն վտանգել ձեր կյանքը կամ առողջությունը կամ առավելագույն գործառույթը հասնելու, պահպանելու կամ վերականգնելու կարողությունը, Health Net-ը նախապես կկատարի - հաստատման (նախապես թույլտվության) որոշումը 72 ժամից ոչ ավելի: Սա նշանակում է, որ նախնական հաստատման (նախօրոք լիազորում) խնդրանքը ստանալուց հետո Health Net-ը ձեզ կտեղեկացնի այնքան արագ, որքան պահանջում է ձեր առողջական



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

վիճակը, և ոչ ուշ, քան ծառայությունների խնդրանքից 72 ժամվա կամ 7 օրացուցային օրվա ընթացքում: Նախնական հաստատման (նախօրոք լիազորում) խնդրանքները դիտարկվում են կլինիկական կամ բժշկական անձնակազմի կողմից, ինչպիսիք են բժիշկները, բուժքույրերը և դեղագործները:

Health Net-ը չի ազդում վերանայողների ապահովագրությունը կամ ծառայությունները մերժելու կամ հաստատելու որոշման վրա: Եթե Health Net-ը չի հաստատում խնդրանքը, ապա HealthNet-ը ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (NOA) նամակ: NOA կտեղեկացնի ձեզ՝ ինչպես բողոքարկում ներկայացնել, եթե համաձայն չեք որոշման հետ:

Health Net-ը կկապվի ձեզ հետ, եթե Health Net-ին անհրաժեշտ լինեն ավելի շատ տեղեկություններ կամ ժամանակ ձեր հայտը դիտարկելու համար:

Նախնական հաստատում (նախօրոք լիազորում) երբևէ պետք չէ շտապ օգնության խնամքի համար, եթե անգամ այն Health Net-ի ցանցից կամ ձեր սպասարկման տարածքից դուրս է: Սա ներառում է երկունքը և ծննդաբերությունը, եթե դուք հղի եք: Որոշ զգայուն խնամքի ծառայությունների համար նախնական հաստատման (նախօրոք լիազորում) կարիք չունեք: Զգայուն խնամքի ծառայությունների մասին ավելին իմանալու համար այս գլխում կարդացեք «Զգայուն խնամք» բաժինը:

Նախնական հաստատման (նախօրոք լիազորման) մասին հարցերի դեպքում զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Երկրորդ կարծիքներ

Հնարավոր է՝ դուք ցանկանաք ստանալ երկրորդ կարծիք այն խնամքի առնչությամբ, որը ձեր մատակարարն առաջարկում է՝ ըստ ձեր կարիքի, կամ կարծիք ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ: Օրինակ, դուք կարող եք ցանկանալ երկրորդ կարծիք, եթե ցանկանում եք հավաստիանալ, որ ախտորոշումը ճիշտ է, համոզված չեք՝ արդյոք դուք ունեք նշանակված բուժման կամ վիրահատության կարիք, կամ դուք փորձել եք հետևել բուժման ծրագրին, սակայն այն անարդյունավետ է եղել: Health Net-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե դուք կամ ցանցի մատակարարը խնդրի այն, և դուք ստանաք երկրորդ կարծիքը ցանցի մատակարարից: Կարիք չկա ստանալու Health Net-ի նախնական հաստատումը (նախօրոք լիազորում), որպեսզի երկրորդ կարծիք ստանաք ցանցի մատակարարից: Եթե ցանկանում եք ստանալ երկրորդ կարծիք, մենք ձեզ կուղարկենք ցանցի որակավորված մատակարարի մոտ, որը կարող է ձեզ տալ այդպիսի կարծիք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Երկրորդ կարծիք խնդրելու և մատակարարի ընտրության հարցում օգնություն ստանալու համար զանգահարեք՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Ձեր ներգանցային մատակարարը կարող է նաև օգնել ձեզ երկրորդ կարծիքի ուղեգիր ստանալ, եթե ցանկանում եք:

Եթե Health Net-ի ցանցում չկա մատակարար, ով կարող է տրամադրել երկրորդ կարծիք, Health Net-ը կվճարի երկրորդ կարծիքի համար արտացանցային մատակարարին: Health Net-ը հինգ աշխատանքային օրվա ընթացքում կտեղեկացնի ձեզ՝ արդյոք մատակարարը, որին ընտրել եք երկրորդ կարծիքի համար, հաստատված է: Եթե ունեք քրոնիկական, սաստիկ կամ լուրջ հիվանդություն, կամ հայտնվել եք հրատապ կամ լուրջ վտանգի առջև, որը կարող է վնասել ձեր առողջությունը, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ կյանքի կորուստ, վերջույթի, կամ մարմնի հիմնական մասերի, կամ մարմնի գործառույթի կորուստ, Health Net-ը կտեղեկացնի ձեզ 72 ժամվա ընթացքում:

Եթե Health Net-ը մերժի երկրորդ կարծիքի ձեր հայտը, դուք կարող եք բողոք ներկայացնել: Մանրամասների համար կարդացեք «Գանգատներ» հատվածն այս տեղեկագրի Գլուխ 6-ում:

Զգայուն խնամք

Անչափահասի համաձայնությամբ ծառայություններ

Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, ապա ձեզ ծնողի կամ խնամակալի թույլտվություն պետք չէ որոշ առողջապահական ծառայություններ ստանալու համար, և դուք կարող եք դրանք ստանալ գաղտնիության պայմաններում, ինչը նշանակում է, որ ձեր ծնողը կամ խնամակալը չի տեղեկացվի կամ կապ չի հաստատվի, եթե դուք ստանաք այդ ծառայությունները առանց ձեր գրավոր թույլտվության: Այս ծառայությունները կոչվում են անչափահասի համաձայնությամբ ծառայություններ:

Դուք կարող եք ստանալ հետևյալ ծառայություններն առանց ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության՝

- Ծառայություններ սեռական բռնության դեպքերում
- Հղիության թեստավորում կամ հղիության հետ կապված այլ ծառայություններ, ներառյալ՝ աբորտի ծառայություններ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Ընտանեկան պլանավորման ծառայություններ, ինչպիսիք են հակաբեղմնավորման ծառայությունները (օրինակ՝ հակաբեղմնավորիչ միջոցները)

Եթե դուք **12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք**, ապա ի լրումն վերոնշյալ ծառայությունների, կարող եք նաև ստանալ այս ծառայություններն առանց ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության.

- Հոգեկան առողջության ամբուլատոր բուժում կամ խորհրդատվություն: Մա կախված կլինի ձեր հասունությունից և ձեր առողջապահական խնամքին մասնակցելու կարողությունից, ի տարբերություն մասնագետի, որը կորոշի այն:
- Վարակների, վարակիչ կամ փոխանցելի հիվանդությունների ախտորոշում և բուժում, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ
- Մեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI) կանխարգելում, ստուգում և բուժում, որոնք կարող են ներառել STI, ինչպիսիք են՝ սիֆիլիսը, գոնորեան, քլամիդիա և պարզ հերպես:
- Զուգընկերոջ նկատմամբ բռնության ծառայություններ
- Թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) բուժում թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման համար, ներառյալ՝ զննում, գնահատում, միջամտություն և ուղեգրման ծառայություններ

Դուք կարող եք ստանալ անչափահասի համաձայնությամբ ծառայություններ ցանկացած Medi-Cal մատակարարից կամ կլինիկայից: Մատակարարները պարտադիր չէ, որ լինեն Health Net ցանցում: Ձեզ անհրաժեշտ չէ ձեր PCP-ի ուղեգիր կամ նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

Եթե դուք օգտվում եք ցանցից դուրս մատակարարից զգայուն խնամքի հետ **չկապված** ծառայությունների համար, ապա դրանք կարող են չապահովագրվել:

Health Net Medi-Cal ցանցից դուրս անչափահասի համաձայնությամբ ծառայությունների Medi-Cal մատակարար գտնելու համար կամ մատակարարի մոտ հասնելու համար փոխադրման օգնություն խնդրելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Հակաբեղմնավորման ծառայությունների մասին մանրամասների համար կարդացեք «Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ և քրոնիկ հիվանդությունների կառավարում» այս տեղեկագրի Գլուխ 4-ում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Health Net-ը չի ապահովագրում անչափահասի համաձայնությամբ ծառայությունները, որոնք մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ են (SMHS) կամ SUD ծառայությունների մեծ մասը: Այս ծառայություններն ապահովագրվում են ձեր բնակության վարչաշրջանի կողմից: Ավելին իմանալու համար, այդ թվում՝ այս ծառայություններից օգտվելու եղանակի մասին, կարդացեք այս տեղեկարգքի Գլխում 4-ի «Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (SMHS)» և «Թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) բուժման ծառայություններ» հատվածները: Մանրամասների համար զանգահարեք 1-800-675-6110 հեռախոսահամարով:

Բոլոր վարչաշրջանների SMHS-ի անվճար հեռախոսահամարներին առցանց ծանոթանալու համար այցելեք <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx> կայքը:

Բոլոր վարչաշրջանների SUD նույնիսկ ծառայությունների անվճար հեռախոսահամարներին առցանց ծանոթանալու համար այցելեք https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD_County_Access_Lines.aspx կայքը:

Անչափասները կարող են իրենց առողջական մտահոգությունների մասին ներկայացուցչի հետ խոսել առանձին՝ զանգահարելով 24/7 բուժքույրերի հեռախոսագծին 1-800-675-6110 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Դուք կարող եք նաև խնդրել ստանալ անձնական տեղեկատվություն ձեր բժշկական ծառայությունների մասին որոշակի ձևով կամ ձևաչափով, եթե հասանելի է: Դուք կարող եք խնդրել, որ այն ձեզ ուղարկեն մեկ այլ վայր: Խնդրում ենք կարդալ այս տեղեկագրի Գլուխ 7-ը՝ «Գաղտնիության գործելակերպերի ծանուցագիր», զգայուն ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցություն խնդրելու մասին տեղեկությունների համար:

Չափահասների զգայուն խնամքի ծառայություններ

Եթե դուք 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի չափահաս եք, ապա որոշակի զգայուն կամ անձնական խնամքի համար պարտադիր չէ դիմել ձեր PCP-ին: Դուք կարող եք ընտրել ցանկացած բժիշկ կամ կլինիկա նման խնամքի համար.

- Ընտանիքի պլանավորում և հակաբեղմնավորիչներ: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասների համար այս ծառայությունները ներառում են ստերիլիզացիա:
- Հղիության թեստավորում և խորհրդատվություն ու հղիության հետ կապված այլ ծառայություններ
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի (HIV/AIDS) կանխարգելում և ստուգում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, ստուգում և բուժում
- Սեռական բռնության խնամք
- Աբորտի ամբուլատոր ծառայություններ

Զգայուն խնամքի համար բժիշկը կամ կլինիկան պարտադիր չէ, որ լինեն Health Net-ի ցանցում: Կարող եք ցանկացած Medi-Cal մատակարարի ընտրել և գնալ նրա մոտ այս ծառայությունների համար՝ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորման) Health Net-ից: Եթե այստեղ չնշված զգայուն խնամք ստանաք արտացանցային մատակարարից, հնարավոր է, ստիպված լինեք վճարել դրա համար:

Այս ծառայությունները (ներառյալ՝ փոխադրում) ստանալու կամ այս ծառայությունները ստանալու օգնության համար բժիշկ կամ կլինիկա գտնելու օգնության համար կարող եք զանգահարել 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարին: Զանգահարեք 24/7 Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք 24-ժամյա Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծ տարբերակը:

Health Net-ը չի տրամադրի ձեր զգայուն խնամքի ծառայությունների մասին տեղեկատվություն ձեր Health Net ծրագրի ապահովատիրոջը կամ հիմնական բաժանորդին կամ Health Net-ի որևէ գրանցվածի առանց ձեր գրավոր թույլտվություն: Դուք կարող եք ստանալ անձնական տեղեկատվություն ձեր բժշկական ծառայությունների մասին որոշակի ձևով կամ ձևաչափով, եթե առկա է, և այն ուղարկել ձեզ այլ վայրում: Խնդրում ենք կարդալ այս տեղեկագրի Գլուխ 7-ը՝ «Գաղտնիության գործելակերպերի ծանուցագիր», զգայուն ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցություն խնդրելու մասին տեղեկությունների համար:

Բարոյական առարկություն

Որոշ մատակարարներ ունեն բարոյական առարկություն որոշակի ապահովագրված ծառայությունների նկատմամբ: Նրանք իրավունք ունեն **չառաջարկել** որոշ ապահովագրված ծառայություններ, եթե նրանք բարոյապես համաձայն չեն այդ ծառայությունների հետ: Այս ծառայությունները դեռ հասանելի են ձեզ մեկ այլ մատակարարից: Եթե ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա կօգնի ձեզ գտնել մեկ այլ մատակարար, որը կտրամադրի ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Health Net-ը նույնպես կարող է օգնել ձեզ, որպեսզի մատակարար գտնեք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Որոշ հիվանդանոցներ և մատակարարներ չեն տրամադրում այս ծառայություններից մեկը կամ ավելին, նույնիսկ եթե դրանք ապահովագրված են Medi-Cal-ի կողմից՝

- Ընտանիքի պլանավորում
- Հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ՝ շտապ հակաբեղմնավորում
- Ամլացում, ներառյալ՝ երկունքի ու ծննդաբերության ժամանակ արգանդափողի կապում
- Անպտղաբերության բուժումներ
- Հղիության արհեստական ընդհատում

Որպեսզի համոզվեք, որ ճիշտ մատակարար եք ընտրում, որը կարող է ձեզ և ձեր ընտանիքին անհրաժեշտ խնամք տրամադրել, զանգահարեք նոր բժշկին, բժշկական խմբին, անկախ պրատկիկայի ասոցիացիա կամ կլինիկա, որը ցանկանում եք: Հարցրեք, թե արդյոք մատակարարը կարող է տրամադրել և կտրամադրի ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Կամ զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Այս ծառայությունները ձեզ հասանելի են: Health Net-ը կերաշխավորի, որ դուք և ձեր ընտանիքը ձեզ անհրաժեշտ խնամք ստանաք մատակարարներից (բժիշկներ, հիվանդանոցներ և կլինիկաներ): Եթե հարցեր կամ մատակարար գտնելու օգնության կարիք ունեք, զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Հրատապ խնամք

Հրատապ խնամքն արտակարգ իրավիճակ կամ կյանքին սպառնացող իրավիճակ չէ: Սա ծառայությունների համար է, որոնք ձեզ անհրաժեշտ են կանխելու ձեր առողջության լուրջ վնասները հանկարծակի հիվանդությունից, վնասվածքից կամ այնպիսի իրավիճակի բարդացումից, որն արդեն ունեք: Հրատապ խնամքի ժամադրությունների մեծ մասը նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չի պահանջում: Եթե հրատապ խնամքի ժամադրություն եք խնդրում, դուք ժամադրություն կստանաք 48 ժամվա ընթացքում: Եթե հրատապ խնամքի ծառայությունները նախնական հաստատում (նախօրոք լիազորում) են պահանջում, ձեզ ժամադրություն կառաջարկեն ձեր խնդրանքից 96 ժամվա ընթացքում:

Հրատապ խնամքի համար զանգահարեք ձեր PCP-ին: Եթե չեք կարողանում զանգահարել ձեր PCP-ին, ապա զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Կամ կարող եք զանգահարել Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք 24-ժամյա Բուժքույրական խորհրդատվական հեռախոսագիծ ձեզ ամենահարմար խնամքի մակարդակի մասին տեղեկանալու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե դուք հրատապ խնամքի կարիք ունեք ձեր տարածքից դուրս, ապա դիմեք ձեզ ամենամոտ հրատապ խնամքի հաստատություն:

Հրատապ խնամքի կարիքները կարող են լինել՝

- Հարբուխ
- Կոկորդի ցավ
- Ջերմություն
- Ականջի ցավ
- Ձգված մկան
- Մայրության ծառայություններ

Երբ դուք գտնվում եք Health Net-ի սպասարկման տարածքում և շտապ օգնության կարիք ունեք, դուք պետք է ստանաք շտապ խնամքի ծառայությունները ներգանցային մատակարարից: Ձեզ անհրաժեշտ չէ նախնական հաստատում (նախօրոք լիազորում) հրատապ խնամքի համար ցանցի մատակարարների կողմից Health Net-ի սպասարկման տարածքում: Եթե ձեզ օգնություն է անհրաժեշտ ցանցում գործող հրատապ խնամքի մատակարար գտնելու հարցում, զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով կամ այցելեք www.healthnet.com կայքը:

Եթե դուք Health Net-ի սպասարկման տարածքից դուրս եք, սակայն Միացյալ Նահանգներում եք, ձեզ հարկավոր չէ նախնական հաստատում (նախօրոք լիազորում) սպասարկման տարածքից դուրս հրատապ խնամք ստանալու համար: Գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատություն:

Medi-Cal-ը չի ապահովագրում հրատապ խնամքի ծառայությունները Միացյալ Նահանգներից դուրս: Եթե դուք ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներից դուրս և ունեք հրատապ խնամքի կարիք, մենք չենք ապահովագրի ձեր խնամքը:

Եթե ունեք հոգեկան առողջության հրատապ խնամքի կամ թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայությունների կարիք, զանգահարեք ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր կամ Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Զանգահարեք ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության կամ թմրանյութերի օգտագործման խանգարման ծրագիր, կամ ձեր Health Net Վարքագծային առողջության ծրագիր ցանկացած պահի՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներին առցանց ծանոթանալու համար այցելեք <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե ձեր ապահովագրված հրատապ խնամքի այցելության շրջանակներում, քանի դեռ դուք այնտեղ եք, դեղեր եք ստանում, Health Net-ը կապահովագրի դեղերը որպես ձեր ապահովագրված հրատապ խնամքի մաս: Եթե ձեր շտապ օգնության մատակարարը ձեզ դեղատոմս տա, որը դուք պետք է տանեք դեղատոմս, Medi-Cal Rx-ը կորոշի, թե արդյոք այն ապահովագրված է: Medi-Cal Rx-ի մասին ավելին իմանալու համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 4-ի «Դեղատոմսով դեղերը, որոնք ապահովագրված են Medi-Cal Rx-ով» հատվածը:

Շտապ օգնություն

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց: Շտապ օգնության համար Health Net-իցնախնական հաստատման (նախօրոք լիազորման) կարիք **չկա**:

Միացյալ Նահանգների ներսում (ներառյալ այնպիսի տարածքներ, ինչպիսիք են American Samoa, Guam, Northern Mariana Islands, Puerto Rico կամ Միացյալ Նահանգների Virgin Islands), դուք իրավունք ունեք օգտվել ցանկացած հիվանդանոցից կամ այլ հաստատությունից շտապ օգնության համար:

Միացյալ Նահանգներից դուրս ապահովագրված են միայն շտապ օգնության ծառայությունները, որոնք հոսպիտալացում են պահանջում Կանադայում և Մեքսիկայում: Շտապ օգնությունը և այլ խնամքը մյուս երկրներում չի ապահովագրվում:

Շտապ օգնությունը կյանքին սպառնացող բժշկական վիճակների համար է: Այս խնամքը հիվանդության կամ վնասվածքի համար է, որը առողջության և բժշկության վերաբերյալ միջին գիտելիքներով ողջամիտ (խելամիտ) ոչ մասնագետը (ոչ առողջական խնամքի մասնագետ) կարող է ակնկալել, որ եթե դուք անմիջապես խնամք չստանաք, ձեր առողջությունը (կամ ձեր դեռ չծնված երեխայի առողջությունը) կարող է գտնվել վտանգի տակ: Սա ներառում է լուրջ վտանգ մարմնի գործառույթին, մարմնի օրգանին կամ մարմնի մասին: Օրինակները ներառում են, սակայն չի սահմանափակվում հետևյալով՝

- Երկունք
- Ոսկորի կոտրվածք
- Սաստիկ ցավ
- Կրծքավանդակի ցավ
- Շնչահեղձություն



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

- Սաստիկ այրվածք
- Դեղերի չափից մեծ դոզա
- Ուշագնացություն
- Սաստիկ արնահոսություն
- Հոգեբուժական արտակարգ վիճակներ, ինչպիսիք են՝ ուժեղ ընկճվածությունը կամ ինքնասպանության մտքերը

Մի այցելեք ER ընթացիկ խնամքի համար կամ անհապաղ չպահանջվող խնամքի համար: Դուք պետք է ստանաք ընթացիկ խնամք ձեր PCP-ից, ով լավագույնս է ճանաչում ձեզ: Կարիք չկա հարցնել ձեր PCP-ին կամ Health Net-ին, նախքան ER գնալը: Եթե վստահ չեք՝ արդյոք ձեր բժշկական վիճակն արտակարգ իրավիճակ է, զանգահարեք ձեր PCP-ին: Կարող եք զանգահարել 24/7 Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Եթե ունեք շտապ օգնության կարիք Health Net-ի սպասարկման տարածքից դուրս, այցելեք մոտակա ER, եթե անգամ այն Health Net-ի ցանցում չէ: Երբ գնաք ER, խնդրեք նրանց զանգահարել Health Net: Դուք կամ հիվանդանոցը, որտեղ ընդունվել եք, պետք է զանգահարի Health Net-ին ձեր կողմից շտապ օգնությունը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե դուք ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներից դուրս, Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներ, և ունեք շտապ օգնության կարիք, Health Net-ը չի ապահովագրի ձեր խնամքը:

Եթե ունեք շտապ օգնության փոխադրման կարիք, զանգահարեք **911**:

Եթե ձեր շտապ օգնությունից հետո ունեք խնամքի կարիք արտացանցային հիվանդանոցում (հետ-կայունացնող խնամք), հիվանդանոցը կզանգահարի Health Net-ին:

Եթե դուք կամ որևէ մեկը, ում ճանաչում եք, գտնվում է ճգնաժամի մեջ, խնդրում ենք կապվել **988** Ինքնասպանության և ճգնաժամի թեժ գծի հետ: **Զանգահարեք կամ գրեք 988 կամ առցանց զրուցեք 988lifeline.org/chat կայքում: 988** Ինքնասպանության և ճգնաժամի թեժ գիծն առաջարկում է անվճար և գաղտնի աջակցություն ճգնաժամի մեջ գտնվող յուրաքանչյուրին: Դա ներառում է այն մարդկանց, ովքեր հուզական անհանգստության մեջ են և նրանց, ովքեր աջակցության կարիք ունեն ինքնասպանության, հոգեկան առողջության և/կամ թմրամիջոցների օգտագործման ճգնաժամի համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Հիշեք. մի զանգահարեք **911**, քանի դեռ ողջամտորեն չեք կարծում, որ շտապ բժշկական օգնություն ունեք: Ստացեք շտապ օգնություն միայն արտակարգ իրավիճակի, այլ ոչ ընթացիկ խնամքի կամ փոքր հիվանդության համար, ինչպես օրինակ՝ մրսածությունը կամ կոկորդի բորբոքումը: Եթե արտակարգ իրավիճակ է, զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ կամ հիվանդանոց:

HealthNet-ի բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհուրդ է տալիս օրը 24 ժամ, տարվա բոլոր օրերին: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ

Health Net-ի Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհուրդ է տալիս օրը 24 ժամ, տարվա բոլոր օրերին: Զանգահարեք 1-800-675- 6110 (TTY 711) հեռախոսահամարով:

- Զրուցեք բուժքրոջ հետ, որը կպատասխանի ձեր բժշկական հարցերին, խնամքի խորհուրդ կտա և կօգնի որոշել, եթե պետք է անմիջապես մատակարարի այցելել
- Օգնություն ստացեք ձեր բժշկական վիճակների համար, օրինակ՝ շաքարախտ կամ ասթմա, ներառյալ՝ խորհուրդ, թե որ մատակարարն է ճիշտ ձեզ համար

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը **չի** կարող օգնել կլինիկական ժամադրությունների և դեղորայքի նորից լցնելու հարցերում: Զանգահարեք ձեր մատակարարի գրասենյակ, եթե այս հարցերում օգնության կարիք ունեք:

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը ծառայություններ է մատուցում անզլերեն և իսպաներեն լեզուներով՝ թարգմանչական ծառայություններով, որոնք հասանելի են այլ լեզուների համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Նախօրոք առողջապահական ցուցումներ

Նախնական առողջապահական հրահանգը կամ նախօրոք հրահանգը իրավական ձև է: Ձևում կարող եք նշել, թե ինչպիսի առողջական խնամք եք ցանկանում ստանալ, եթե ավելի ուշ չկարողանաք խոսել կամ որոշումներ կայացնել: Կարող եք նաև նշել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում ստանալ: Կարող եք նշել որևէ մեկին, օրինակ՝ ամուսնուն, կայացնել որոշումներ ձեր առողջական խնամքի վերաբերյալ, եթե դուք չկարողանաք:

Դուք կարող եք ձեռք բերել վաղօրոք հրահանգը դեղատներից, հիվանդանոցներից, իրավական գրասենյակներից և բժշկի գրասենյակներից: Հնարավոր է՝ ստիպված լինեք վճարել ձևի համար: Կարող եք նաև գտնել և ներբեռնել անվճար ձևն առցանց: Դուք կարող եք խնդրել ձեր ընտանիքին, PCP-ին կամ որևէ մեկին, ում վստահում եք, որպեսզի օգնեն ձեզ լրացնել ձևը:

Դուք ունեք ձեր վաղօրոք հրահանգը ձեր բժշկական արձանագրություններում պահելու իրավունք: Դուք իրավունք ունեք ցանկացած պահի փոխել կամ չեղարկել ձեր վաղօրոք հրահանգը:

Դուք իրավունք ունեք տեղեկանալ նախօրոք հրահանգի օրենքների փոփոխություններին: Health Net-ը ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքներում կատարված փոփոխության մասին ոչ ուշ, քան փոփոխության ամսաթվից 90 օր հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Health Net 1-800-675-6110 հեռախոսահամարով:

Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Չափահասները կարող են օգնել փրկել կյանքեր՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի դոնոր: Եթե դուք 15-ից 18 տարեկան եք, կարող եք դառնալ դոնոր՝ ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Ցանկացած ժամանակ կարող եք փոխել օրգանի դոնոր դառնալու ձեր որոշումը: Օրգանի կամ հյուսվածքի դոնոր դառնալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խոսեք ձեր PCP-ի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդու ծառայությունների բաժնի կայքը՝ www.organdonor.gov:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ նպաստներ և ծառայություններ է ներառում ձեր առողջապահական ծրագիրը

Այս գլուխը բացատրում է Health Net-ի կողմից փոխհատուցվող նպաստներն ու ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են, քանի դեռ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և տրամադրվում են Health Net ցանցի մատակարարի կողմից: Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) խնդրեք Health Net-ից, եթե խնամքն արտացանցային է, բացի որոշ զգայուն ծառայություններից, շտապ օգնության խնամքից և հրատապ խնամքից Health Net սպասարկման տարածքից դուրս: Ձեր առողջապահական ծրագիրը կարող է ապահովագրել բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ցանցից դուրս մատակարարից, սակայն դուք պետք է Health Net-ից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) խնդրեք:

Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները խելամիտ են և անհրաժեշտ՝ ձեր կյանքը պաշտպանելու, ձեզ հեռու պահելու լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից, կամ նվազեցնում են սաստիկ ցավն ախտորոշված հիվանդությունից կամ վնասվածքից: 21 տարեկանից փոքր անդամների համար Medi-Cal-ի ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է՝ բուժելու կամ օգնելու թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ իրավիճակը: Ապահովագրված ծառայությունների մասին մանրամասների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

21 տարեկանից փոքր անդամները ստանում են լրացուցիչ նպաստներ և ծառայություններ: Մանրամասների համար կարդացեք այս տեղեկագրի Գլուխ 5-ը՝ «Երեխաների և պատանիների բարեկեցություն»:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Health Net-ի կողմից առաջարկվող որոշ հիմնական առողջական նպաստները և ծառայությունները նշված են ներքևում: Աստղանիշով (*) նշված նպաստները և ծառայությունները կարող են նախնական հաստատում (նախօրոք լիազորում) պահանջել:

- Ասեղնաբուժություն*
- Սուր (կարճատև բուժում) տնային առողջության թերապիաներ և ծառայություններ*
- Ալերգիայի ստուգում և սրսկումներ
- Շտապ օգնության փոխադրման ծառայություններ
- Անեսթեզիոլոգի ծառայություններ*
- Ասթմայի կանխում
- Աուդիոլոգիա*
- Հիմնական խնամքի կառավարում
- Վարքագծային առողջության բուժում*
- Բիոմարկերի փորձարկում*
- Սրտի վերականգնողական ծառայություններ*
- Քիմիաթերապիա և ճառագայթային թերապիա*
- Քիրոպրակտիկ ծառայություններ*
- Նորածնի թլպատում (ծննդից մինչև 30 օրական)
- Կոգնիտիվ առողջության գնահատումներ
- Համայնքային բուժաշխատողների (CHW) ծառայություններ
- Համայնքային աջակցություններ*
- Բարդ խնամքի կառավարման (CCM) ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ՝ սահմանափակ (կատարվում են բժշկական մասնագետի/առաջնային խնամքի մատակարարի (PCP) կողմից բժշկական գրասենյակում)*
- Դիալիզի/հեմոդիալիզի ծառայություններ
- Դուլայի ծառայություններ
- Տեսական օգտագործման բժշկական սարքավորումներ (DME)*
- Միաժամանակ ծնողի և մանկան ծառայություններ
- Շտապ օգնության սենյակի այցեր
- Բարելավված խնամքի կառավարման (ECM) ծառայություններ
- Էնտերալ և հարենտերալ սնուցում*
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (կարող եք այցելել ցանցից դուրս մատակարարի)
- Սեռը հաստատող խնամք*
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Լսողական օժանդակ սարքեր
- Տանը մատուցվող առողջական խնամք*
- Անբուժելի հիվանդների խնամք*
- Պատվաստումներ (սրսկումներ)
- Ստացիոնար բժշկական և վիրաբուժական խնամք*



Չանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

4 | Նպաստներ և ծառայություններ

- Միջանկյալ խնամքի հաստատություն զարգացման հաշմանդամության ծառայությունների համար*
- Լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ*
- Երկարաժամկետ տնային առողջության թերապիաներ և ծառայություններ*
- Երկարաժամկետ ծառայություններ ու աջակցություններ*
- Մայրություն և նորածինների խնամք
- Հոգեկան առողջության բուժում*
- Աշխատանքային թերապիա*
- Օրգանների և ոսկրածուծի փոխպատվաստում*
- Օրթեզներ/պրոթեզներ*
- Ստոմաներ և ուրոլոգիական պարագաներ
- Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ*
- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ
- Ամբուլատոր վիրահատություն*
- Պալիատիվ խնամք*
- PCP-ի այցելություններ
- Մանկաբուժական ծառայություններ
- Մանկաբուժական մասնագիտացված ծառայություններ*
- Ֆիզիկական թերապիա*
- Ոտնաթաթի ծառայություններ*
- Թոքային վերականգնում
- Ամբողջական գենոմի արագ սեկվենավորում*
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Հմուտ բուժքույրական ծառայություններ, ներառյալ ենթասուր ծառայություններ*
- Մասնագետի այցեր
- Խոսքի թերապիա*
- Փողոցային բժշկության ծառայություններ
- Թմրանյութերի օգտագործման խանգարման բուժում
- Վիրաբուժական ծառայություններ*
- Հեռակա մատուցվող բժշկություն/հեռակա մատուցվող առողջություն
- Տրանսգենդերային ծառայություններ*
- Անցումային խնամքի ծառայություններ*
- Հրատապ խնամք
- Տեսողության ծառայություններ*
- Կանանց առողջապահական ծառայություններ

Ապահովագրված ծառայությունների սահմանումներ ու նկարագրերը կարող եք գտնել այս տեղեկագրի Գլուխ 8-ում՝ «Կարևոր հեռախոսահամարներ և բառեր, որոնք պետք է իմանալ»:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները խելամիտ են և անհրաժեշտ՝ ձեր կյանքը պաշտպանելու, ձեզ հեռու պահելու լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից, կամ նվազեցնում են սաստիկ ցավն ախտորոշված հիվանդությունից կամ վնասվածքից:

Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տարիքին համապատասխան աճի և զարգացման կամ ֆունկցիոնալ կարողությունները ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու համար:

21 տարեկանից ցածր անդամների համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե անհրաժեշտ է շտկել կամ բարելավել արատները, ֆիզիկական և մտավոր հիվանդությունները կամ պայմանները **Medi-Cal**-ի երեխաների և դեռահասների համար (նաև հայտնի է որպես վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (**EPSDT**)) նպաստ: Սա ներառում է խնամք, որն անհրաժեշտ է շտկելու կամ օգնելու համար թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը կամ պահպանել անդամի վիճակը, որպեսզի այն չվատթարանա:

Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները չեն ներառում՝

- Բուժումներ, որոնք չեն փորձարկվել կամ դեռ փորձարկվում են
- Ծառայություններ կամ ապրանքներ, որոնք ընդհանուր առմամբ ընդունված չեն որպես արդյունավետ
- Ծառայություններ, որոնք դուրս են նորմալ բուժման ընթացքից և երկարությունից, կամ ծառայություններ, որոնք չունեն կլինիկական ուղեցույցներ
- Ծառայություններ խնամողի կամ մատակարարի հարմարության համար

Health Net-ը համակարգում է այլ ծրագրերի հետ՝ համոզվելու համար, որ դուք ստանում եք բոլոր բժշկական անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրված են մեկ այլ ծրագրի, այլ ոչ թե **Health Net**-ի կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: **Health Net**-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները ներառում են ապահովագրված ծառայություններ, որոնք խելամիտ են և անհրաժեշտ, որպեսզի՝

- Պատշաճ կյանքը,
- Կանխեն լուրջ հիվանդություն կամ լուրջ հաշմանդամություն,
- Թեթևացնեն սաստիկ ցավը,
- Երաշխավորեն տարիքին համապատասխան աճ և զարգացում կամ
- Հասնեն, պահպանեն և վերականգնեն ֆունկցիոնալ ունակությունը:

21 տարեկանից փոքր անդամների համար բժշկական անհրաժեշտ ծառայությունները ներառում են վերը թվարկված բոլոր ապահովագրված ծառայությունները, ինչպես նաև ցանկացած այլ անհրաժեշտ առողջապահություն, զննում, պատվաստումներ, ախտորոշիչ ծառայություններ, բուժում և այլ միջոցներ՝ արատները, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու պայմանները շտկելու կամ բարելավելու համար, Medi-Cal երեխաների և դեռահասների համար նպաստը պահանջվում է: Այս նպաստը դաշնային օրենքով հայտնի է որպես Վադ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) նպաստ:

Medi-Cal երեխաների և դեռահասների համար նպաստը տրամադրում է կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայություններ նորածինների, երեխաների և մինչև 21 տարեկան դեռահասների համար: Medi-Cal երեխաների և դեռահասների համար նպաստն ապահովագրում է ավելի շատ ծառայություններ, քան չափահասների նպաստները: Այն մշակված է երաշխավորելու, որ երեխաները վաղ հայտնաբերում և խնամք ստանան առողջական խնդիրները որքան հնարավոր է շուտ կանխելու, ախտորոշելու և բուժելու համար: Medi-Cal երեխաների և դեռահասների համար նպաստի նպատակն է երաշխավորել, որ յուրաքանչյուր երեխա ստանա իրեն անհրաժեշտ բժշկական խնամքը, երբ դրա կարիքն ունի՝ ճիշտ խնամք ճիշտ երեխային ճիշտ ժամանակ ճիշտ վայրում:

Health Net-ը կհամակարգի այլ ծրագրերի հետ, որպեսզի դուք ստանաք բժշկական տեսակետից անհրաժեշտ բոլոր ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրում են այլ ծրագրի կողմից, այլ ոչ Health Net-ի կողմից: Կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ» հատվածն այս գլխում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Health Net-ի կողմից ապահովագրված Medi-Cal-ի նպաստներ

Ամբուլատոր (արտահիվանդանոցային) ծառայություններ

Մեծահասակների պատվաստումներ (սրսկումներ)

Դուք կարող եք ստանալ մեծահասակների պատվաստումներ (սրսկումներ) ցանցի մատակարարից առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորում), երբ դրանք կանխարգելիչ ծառայություն են: Health Net-ն ապահովագրում է պատվաստումները (սրսկումները), որոնք առաջարկվել են Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (CDC) Իմունականիսարգելման պրակտիկայի խորհրդատվական կոմիտեի (ACIP) կողմից՝ որպես կանխարգելիչ ծառայություններ, ներառյալ պատվաստումները (սրսկումները), որոնք ձեզ անհրաժեշտ են ճանապարհորդելիս:

Դուք կարող եք ստանալ մեծահասակների որոշ պատվաստումների (սրսկումներ) ծառայություններ դեղատանը՝ Medi-Cal Rx-ի միջոցով: Medi-Cal Rx-ի մասին մանրամասների համար կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ» հատվածն այս գլխում:

Ալերգիայի խնամք

Health Net-ն ապահովագրում է ալերգիայի ստուգումը և բուժումը, ներառյալ՝ ալերգիայի ապագգայունացում, հիպոգգայունացում կամ իմունոթերապիա:

Անեսթեզիոլոգի ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է անեսթեզիայի ծառայություններ, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ են, երբ դուք ստանում եք ամբուլատոր խնամք: Սա կարող է ներառել անզգայացում ատամնաբուժական պրոցեդուրաների համար, երբ տրամադրվում է անեսթեզիոլոգի կողմից, որը կարող է պահանջել նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

Քիրոպրակտիկ ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է քիրոպրակտիկ ծառայություններ՝ սահմանափակվելով մանուալ թերապիայի միջոցով ողնաշարի բուժմամբ: Քիրոպրակտիկ ծառայությունները սահմանափակվում են առնվազն ամսական երկու ծառայությամբ կամ առնվազն ամսական հետևյալ երկու ծառայությամբ՝ ասեղնաբուժություն, աուդիոլոգիա, աշխատանքային թերապիա և խոսքի թերապիա: Սահմանափակումները կիրառելի չեն 21 տարեկանից փոքր



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Երեխաների համար: Health Net-ը կարող է նախնական հաստատել այլ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

Այս անդամները որակավորվում են քիրոպրակտիկ ծառայությունների համար:

- 21 տարեկանից փոքր երեխաներ
- Հղի կանայք մինչև ամսվա ավարտը, որը ներառում է 60 օր մինչև հղիության ավարտը
- Հմուտ բուժքույրական հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչներ
- Բոլոր անդամները, երբ ծառայությունները տրամադրվում են վարչաշրջանի հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքներում, ամբուլատոր կլինիկաներում, Դաշնային որակավորված առողջական կենտրոնում (FQHC) կամ RHC-ներում, որոնք Health Net-ի ցանցում են: Ոչ բոլոր FQHC-ները, RHC-ները կամ վարչաշրջանի հիվանդանոցներն են առաջարկում ամբուլատոր քիրոպրակտիկ ծառայություններ:

Կոդնիտիվ առողջության գնահատումներ

Health Net-ն ապահովագրում է տարեկան իմացական առողջության գնահատում 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անդամների համար, որոնք այլապես չեն որակավորվում նման գնահատման համար իրենց բարեկեցության տարեկան այցելության շրջանակներում Medicare ծրագրի ներքո: Իմացական առողջության գնահատումը փնտրում է Ալցհայմերի հիվանդության կամ դեմենցիայի նշաններ:

Համայնքային բուժաշխատողների (CHW) ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է CHW ծառայություններն անհատների համար, երբ առաջարկվում է բժշկի կամ այլ լիցենզավորված մասնագետի կողմից՝ կանխելու հիվանդությունը, հաշմանդամությունը և առողջական այլ վիճակները կամ դրանց զարգացումը, երկարացնելու կյանքը և խթանելու ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու արդյունավետությունը: CHW ծառայությունները չունեն ծառայության տեղակայման սահմանափակումներ, և անդամները կարող են ծառայություններ ստանալ այնպիսի կարգավորումներում, ինչպիսին է շտապ օգնության սենյակ: Ծառայությունները կարող են ներառել՝

- Առողջապահական կրթություն և անհատական աջակցություն կամ շահերի պաշտպանություն, ներառյալ քրոնիկական կամ վարակիչ հիվանդությունների վերահսկումն ու կանխարգելումը. վարքային, պերինատալ և բերանի խոռոչի առողջության պայմաններ. և բռնության կամ վնասվածքների կանխարգելում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Առողջության խթանում և ուսուցում, ներառյալ նպատակների սահմանումը և գործողությունների ծրագրերի ստեղծումը՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը և կառավարմանը
- Առողջապահական նավարկություն, ներառյալ տեղեկատվության տրամադրումը, ուսուցումը և աջակցությունը, որոնք կօգնեն ստանալ առողջապահություն և համայնքային ռեսուրսներ
- Ջննման և գնահատման ծառայություններ, որոնք վկայագիր չեն պահանջում և օգնում են անդամին կապել ծառայությունների հետ՝ նրանց առողջությունը բարելավելու համար

CHW բոնության կանխարգելման ծառայությունները հասանելի են այն անդամներին, ովքեր բավարարում են հետևյալ հանգամանքներից որևէ մեկը, ինչպես որոշվել է արտոնագրված մասնագետի կողմից.

- Անդամը դաժանորեն վիրավորվել է համայնքի բոնության հետևանքով:
- Անդամը համայնքային բոնության հետևանքով բռնի վնասվածք ստանալու զգալի վտանգի տակ է:
- Անդամը ենթարկվել է համայնքային բոնության քրոնիկական ազդեցության:

CHW բոնության կանխարգելման ծառայությունները հատուկ են համայնքային բոնությանը (օրինակ՝ խմբակային բոնությունը): CHW ծառայությունները կարող են տրամադրվել անդամներին միջանձնային/ընտանեկան բոնության համար այլ ուղիների միջոցով՝ հատուկ այդ կարիքներին համապատասխան ուսուցում/փորձով:

Ղիալիզի և հեմոդիալիզի ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է ղիալիզի բուժումները: Health Net-ը նաև ապահովագրում է հեմոդիալիզի (քրոնիկական ղիալիզի) ծառայությունները, եթե ձեր բժիշկը խնդրանք է ներկայացնում և Health Net-ը հաստատում է այն:

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում հետևյալ ծառայությունները՝

- Հարմարության, հարմարավետության կամ շքեղ սարքավորումներ, պարագաներ և առանձնահատկություններ
- Ոչ բժշկական իրեր, ինչպիսիք են գեներատորներ կամ համալրիչներ՝ տնային ղիալիզի սարքավորումը ճանապարհորդելու համար շարժական դարձնելու նպատակով



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Դուլայի ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է դուլայի ծառայությունները, որոնք տրամադրվում են ներքանցային դուլայի մատակարարների կողմից անդամի հղիության ընթացքում, ծննդաբերության և երկունքի ժամանակ, ներառյալ մահացած ծնունդը, վիժումը և հղիության արհեստական ընդհատումը, և անդամի հղիության ավարտից հետո մեկ տարվա ընթացքում: Medi-Cal-ը չի ապահովագրում բոլոր դուլայի ծառայությունները: Դուլայի ծառայությունները չեն ներառում բժշկական վիճակների որոշումը, բժշկական խորհրդատվության տրամադրումը կամ որևէ տեսակի կլինիկական գնահատում, հետազոտություն կամ ընթացակարգ: Հետևյալ Medi-Cal ծառայությունները դուլայի նպաստի մաս չեն կազմում՝

- Վարքագծային առողջության ծառայություններ
- Կլինիկական մասնագետի կողմից կեսարյան հատումից հետո որովայնի կապում
- Կլինիկական գործի համակարգում
- Ծննդաբերության կրթության խմբային դասընթացներ
- Համապարփակ առողջապահական կրթություն, ներառյալ կողմնորոշում, գնահատում և պլանավորում (Համապարփակ պերինատալ ծառայությունների ծրագրի ծառայություններ)
- Հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանի հետ կապված առողջապահական ծառայություններ
- Հիպնոթերապիա (ոչ մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություն (NSMHS))
- Կրծքով կերակրման խորհրդատվություն, խմբային դասընթացներ և պարագաներ
- Բժշկական տեսակետից անհրաժեշտ համայնքային աջակցության ծառայություններ
- Սնուցման ծառայություններ (գնահատում, խորհրդատվություն և խնամքի ծրագրի մշակում)
- Փոխադրում

Եթե անդամին անհրաժեշտ է կամ ցանկանում է դուլա կամ հղիության հետ կապված ծառայություններ, որոնք **չեն** ապահովագրվում, անդամը կամ դուլան կարող է խնամք խնդրել: Զանգահարեք անդամի PCP-ին կամ Health Net Անդամների ծառայությունների բաժին:

Դուլայի մատակարարները ծննդաբերման աշխատողներ են, որոնք տրամադրում են առողջական կրթություն, ֆիզիկական, հուզական և ոչ բժշկական աջակցություն հղի և ծննդաբերած անձանց ծննդաբերությունից առաջ, ընթացքում և հետո, ներառյալ աջակցություն վիժման, մեռելածնության և հղիության արհեստական ընդհատման դեպքերում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ցանկացած հղի կամ ծննդաբերությունից հետո անդամ կարող է ստանալ հետևյալ ծառայությունները ցանցային դուրա մատակարարից՝

- Մեկ նախնական այցելություն
- Մինչև ութ լրացուցիչ այցեր, որոնք կարող են լինել նախածննդյան և հետծննդյան այցերի խառնուրդ
- Աջակցություն ծննդաբերության և երկունքի ժամանակ (ներառյալ ծննդաբերությունը և երկունքը, որը հանգեցնում է մահացած ծննդաբերության), հղիության արհեստական ընդհատման կամ վիժման
- Հղիության ավարտից հետո մինչև երկու երկարաձգված երեքժամյա հետծննդյան այցեր:

Անդամները կարող են ստանալ մինչև ինը լրացուցիչ հետծննդյան այցելություններ՝ բժշկի կամ այլ հավաստագրված պրակտիկ բժշկի գրավոր առաջարկությամբ:

Դուլայի ծառայություններ ցանկացող ցանկացած հղի կամ ծննդաբերությունից հետո անդամ կարող է դուրա գտնել՝ զանգահարելով 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ը պետք է համակարգի անդամների համար դուլայի ծառայությունների ցանցից դուրս հասանելիությունը, եթե ներցանցային դուրա մատակարարը հասանելի չէ:

Միաժամանակ ծնողի և մանկան ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ Դիադիկ վարքագծային առողջության (DBH) խնամքի ծառայություններ անդամների և իրենց խնամողների համար: Դիադը երեխան է 0-ից 20 տարեկան և նրա ծնողները կամ խնամակալները: Դիադիկ խնամքը սպասարկում է միաժամանակ երեխաններին և նրանց ծնողներին կամ խնամակալներին: Այս սատարում է ընտանիքի բարեկեցությունը, որպեսզի օգնի երեխայի առողջ զարգացմանն ու հոգեկան առողջությանը:

Միաժամանակ ծնողի և մանկան խնամքի ծառայությունները ներառում են.

- Երեխայի բարօրության DBH այցելություններ
- Դիադիկ համապարփակ համայնքային աջակցության ծառայություններ
- Դիադիկ հոգե-կրթական ծառայություններ
- Դիադիկ ծնողների կամ խնամակալների ծառայություններ
- Դիադիկ ընտանիքի ուսուցում, և
- Խորհրդատվություն երեխաների զարգացման և մայրական հոգեկան առողջության համար



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Ամբուլատոր վիրահատություն

Health Net-ն ապահովագրում է ամբուլատոր վիրաբուժական ընթացակարգեր: Որոշ ընթացակարգերի համար դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախօրոք լիազորում), նախքան դրանց ստացումը: Ախտորոշման պրոցեդուրաները և որոշ ամբուլատոր բժշկական կամ ատամնաբուժական պրոցեդուրաներ համարվում են ընտրովի: Դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

Բժշկի ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական ծառայությունները, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

Ոտնաթաթի (ոտքի) ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ ոտնաթաթի ծառայություններ՝ ոտքերի՝ ախտորոշման և բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, մանիպուլյատիվ և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է բուժում ոտքի կոճի և ոտքին կապված ջիլերի բուժում: Սա ներառում է նաև ոտքի գործառնությունները կառավարող մկանների և ջլերի ոչ-վիրաբուժական բուժում:

Բուժական թերապիաներ

Health Net-ն ապահովագրում է տարբեր բուժական թերապիաներ, ներառյալ՝

- Քիմիաթերապիա
- Ճառագայթային թերապիա

Մայրություն և նորածինների խնամք

Health Net-ն ապահովագրում է մայրության և նորածինների խնամքի հետևյալ ծառայությունները՝

- Ծննդաբերություն ծննդաբերական կենտրոնում, տանը կամ հիվանդանոցում՝ կախված անդամի նախընտրություններից և բժշկական տեսանկյունից նրա համար լավագույնից:
- Կրծքի պոմպեր և պաշարներ
- Կրծքով կերակրման ուսուցում և միջոցներ
- Խնամքի համակարգում
- Խորհրդատվություն
- Պտղի գենետիկական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Դուլայի ծառայություններ
- Մայրերի հոգեկան առողջության ծառայություններ
- Նորածնի խնամք
- Սնուցման կրթություն
- Հղիությանը վերաբերող առողջական կրթություն
- Նախածննդյան, ծննդաբերական և հետծննդյան խնամք վկայագրված մանկաբարձ-բուժքույրի (CNM), լիցենզավորված մանկաբարձի (LM) կամ բժշկի կողմից՝ կախված անդամի նախընտրություններից և բժշկական տեսանկյունից նրա համար լավագույնից:
- Սոցիալական և հոգեկան առողջության գնահատումներ և ուղեգրեր
- Վիտամիններ և հանքային նյութերի հավելումներ

Յուրաքանչյուր հղի և ծննդաբերած անդամ կարող է ստանալ վերը նշված բոլոր ծառայությունները: Անդամները կարող են կապ հաստատել 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով՝ ծառայություններ ստանալու հարցում օգնություն ստանալու համար:

Ընդլայնված հետծննդյան ապահովագրություն

Health Net-ը ընդգրկում է հղիության ավարտից հետո մինչև 12 ամիս՝ անկախ քաղաքացիությունից, ներգաղթի կարգավիճակից, եկամտի փոփոխություններից կամ հղիության ավարտից:

Հեռավար մատուցվող առողջության ծառայություններ

Հեռակա մատուցվող առողջությունը ծառայությունների ստացման եղանակ է, երբ դուք ձեր մատակարարի հետ ֆիզիկապես նույն վայրում չեք: Հեռավար մատուցվող առողջությունը կարող է ներառել կենդանի զրույց ձեր մատակարարի հետ հեռախոսով, տեսախցիկով կամ այլ ձևով: Կամ հեռավար մատուցվող առողջությունը կարող է ներառել տեղեկությունների փոխանակում ձեր մատակարարի հետ՝ առանց կենդանի տեսագրույցի: Դուք կարող եք շատ ծառայություններ ստանալ հեռավար մատուցվող առողջության միջոցով:

Հեռավար մատուցվող առողջության ծառայությունները կարող են հասանելի չլինել բոլոր ապահովագրված ծառայությունների համար: Դուք կարող եք կապվել ձեր մատակարարի հետ՝ պարզելու, թե որ ծառայություններն են հասանելի հեռավար մատուցվող առողջության միջոցով: Կարևոր է, որպեսզի դուք և ձեր մատակարարը համաձայնվեք, որ տվյալ ծառայության համար հեռավար մատուցվող առողջությունը ճիշտ է ձեզ համար: Դուք իրավունք ունեք դեմ-առ-դեմ ծառայություններ ստանալ: Դուք պարտավոր չեք օգտնվել



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

հեռավար մատուցվող առողջության ծառայություններից, նույնիսկ եթե ձեր մատակարարը համաձայն է, որ դա հարմար է ձեզ համար:

Հոգեկան առողջության ծառայություններ

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է նախնական հոգեկան առողջության գնահատումն՝ առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Դուք կարող եք ստանալ հոգեկան առողջության գնահատում ցանկացած ժամանակ հավաստագրված հոգեկան առողջության մատակարարից Health Net-ի ցանցում՝ առանց ուղեգրի:

Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը կարող է տրամադրել ուղեգիր՝ հոգեկան առողջության հավելյալ ստուգման համար Health Net-ի ցանցի մասնագետի մոտ՝ որոշելու ախտահարման մակարդակը: Եթե ձեր զննման արդյունքները ցույց տան, որ դուք ունեք թեթև կամ միջին մակարդակի հաշմանդամություն՝ հոգեկան առողջության որևէ խնդրի պատճառով, Health Net-ը կարող է ձեզ համար տրամադրել հոգեկան առողջության ծառայություններ: Health Net-ն ապահովագրում է հետևյալ հոգեկան առողջության ծառայությունները՝

- Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեթերապիա)
- Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես նպատակահարմար է հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
- Կոգնիտիվ կարողությունների զարգացում՝ բարելավելու ուշադրությունը, հիշողությունը կամ խնդիրների լուծումը
- Ամբուլատոր ծառայություններ դեղորայքային թերապիային հետևելու նպատակով
- Ամբուլատոր լաբորատոր ծառայություններ
- Ամբուլատոր դեղամիջոցներ, որոնք արդեն ներառված չեն Medi-Cal Rx պայմանագրային դեղերի ցանկում (<https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home/>), պարագաներն հավելումներ
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ընտանեկան թերապիա, որը ներառում է ընտանիքի առնվազն երկու անդամի: Ընտանեկան թերապիայի օրինակները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝
 - Երեխա-ծնող հոգեթերապիա (0-ից 5 տարեկան)
 - Ծնողների-երեխաների ինտերակտիվ թերապիա (2-ից 12 տարեկան)
 - Ճանաչողական-վարքագծային զույգերի թերապիա (չափահասներ)



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Health Net-ի կողմից հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների օգնության համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Եթե ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը չի կարող ձեզ բուժում տրամադրել հոգեկան առողջության խանգարման համար, որը հասանելի է Health Net-ի ցանցում և «Ժամանակին խնամքի ստացում» բաժնում վերը նշված ժամկետներում, Health Net-ը կապահովագրի և կօգնի ձեզ կազմակերպել ցանցից դուրս ծառայություններ:

Եթե ձեր հոգեկան առողջության ստուգման արդյունքները ցույց են տալիս, որ դուք կարող եք ունենալ խանգարման ավելի բարձր մակարդակ և ունեք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների (SMHS) կարիք, ապա ձեր PCP-ն կամ ձեր հոգեկան առողջության մատակարարը կուղարկեն ձեզ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին՝ անհրաժեշտ խնամքը ստանալու համար: Health Net-ը կօգնի ձեզ համակարգել ձեր առաջին հանդիպումը վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի հետ՝ ձեզ համար ճիշտ խնամք ընտրելու համար: Մանրամասների համար կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ» հատվածը այս տեղեկագրի Գլուխ 4-ում:

Եթե դուք կամ ձեր ծանոթներից մեկը ճգնաժամի մեջ է, կապվեք **988** Ինքնասպանության և ճգնաժամի թեժ գծի հետ: **Զանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք 988** համարով կամ **առցանց խոսեք 988lifeline.org/chat կայքում: 988** Ինքնասպանության և ճգնաժամի թեժ գիծն առաջարկում է անվճար և գաղտնի օգնություն: Օգնություն կարող է ստանալ ցանկացած մարդ, այդ թվում՝ հուզական տառապանքի մեջ գտնվողները և նրանք, ովքեր աջակցության կարիք ունեն ինքնասպանության, հոգեկան առողջության և/կամ թմրամոլության ճգնաժամի դեպքում:

Շտապ օգնության ծառայություններ

Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակը բուժելու համար

Health Net-ն ապահովագրում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակը բուժելու համար, որը տեղի է ունենում ԱՄՆ-ում (ներառյալ հետևյալ տարածքները՝ American Samoa, Guam, Northern Mariana Islands, Puerto Rico կամ Միացյալ Նահանգների Virgin Islands): Health Net-ն ապահովագրում է նաև շտապ օգնությունը, որը պահանջում է հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բժշկական արտակարգ իրավիճակը բժշկական վիճակ է սաստիկ ցավով կամ լուրջ վնասվածքով: Վիճակն այնքան լուրջ է, որ եթե այն չստանա անհապաղ բժշկական ուշադրություն, ապա ողջամիտ (խելամիտ) որևէ մարդ (ոչ բժշկական մասնագետ) կարող է ակնկալել, որ տեղի կունենա հետևյալից որևէ մեկը՝

- Լուրջ վտանգ ձեր առողջությանը
- Լուրջ վնաս մարմնի գործառնություններին
- Մարմնի օրգանի կամ որևէ մասի լուրջ դիսֆունկցիա
- Ակտիվ երկունքում գտնվող հղի անձի դեպքում լուրջ ռիսկ, այսինքն երկունք, երբ տեղի է ունենում հետևյալը.
 - Չկա բավարար ժամանակ ձեզ ապահով կերպով մեկ այլ հիվանդանոց տեղափոխելու համար, նախքան ծննդաբերության սկիզբը
 - Տեղափոխումը կարող է վտանգի տակ դնել ձեր ու դեռ չծնված երեխայի առողջությունն ու անվտանգությունը

Եթե հիվանդանոցի շտապ օգնության սենյակը ձեզ տալիս է ամբուլատոր դեղատոմսային դեղի 72 ժամվա պաշար որպես ձեր բուժման մաս, դեղատոմսային դեղը կապահովագրվի Health Net-ի կողմից որպես ձեր ապահովագրված շտապ խնամքի մաս: Եթե հիվանդանոցի շտապ օգնության մատակարարը ձեզ դեղատոմս է տալիս, որը պետք է լրացնեք ամբուլատոր դեղատանը, Medi-Cal Rx պատասխանատու է այլ դեղատոմսի ապահովագրման համար:

Եթե ճանապարհորդելիս դեղորայքի շտապ մատակարարման կարիք ունեք ամբուլատոր դեղատնից, Medi-Cal Rx-ը պատասխանատու կլինի դեղի ապահովագրման համար, և ոչ թե Health Net-ը: Թող դեղատոմսը զանգահարի Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով, եթե իրենց օգնություն է հարկավոր ձեզ շտապ օգնության դեղորայքի պաշար տալու հարցում:

Շտապ օգնության փոխադրման ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է շտապ օգնության մեքենայի ծառայություններն՝ օգնելու ձեզ հասնել մոտակա խնամքի մատուցման վայր արտակարգ իրավիճակների դեպքում: Սա նշանակում է, որ ձեր վիճակն այնքան լուրջ է, որ խնամքի մատուցման վայր հասնելու մյուս միջոցները կարող են վտանգել ձեր առողջությունը կամ կյանքը: Միացյալ Նահանգներից դուրս ոչ մի ծառայություն չի ապահովագրվում, բացառությամբ շտապ օգնության ծառայությունների, որոնք պահանջում են, որ դուք հիվանդանոցում գտնվեք Կանադայում կամ Մեքսիկայում: Եթե շտապ օգնության փոխադրման ծառայություններ եք ստանում Կանադայում և Մեքսիկայում, և չեք հոսպիտալացվում, ձեր փոխադրման ծառայությունները չեն ապահովագրվի Health Net-ի կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Անբուժելի հիվանդների և պալիատիվ խնամք

Health Net-ն ապահովագրում է երեխաների և մեծահասակների համար անբուժելի հիվանդների խնամք և պալիատիվ խնամք, որն օգնում է նվազեցնել ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և՛ անբուժելի հիվանդների, և՛ պալիատիվ խնամք:

Անբուժելի հիվանդների խնամք

Անբուժելի հիվանդների խնամքը ծառայություն է անբուժելի հիվանդությամբ անդամների համար: Անբուժելի հիվանդների խնամքը պահանջում է, որ անդամն ունենա վեց ամիս կամ ավելի քիչ կյանքի տևողություն: Սա միջամտություն է, որը կենտրոնանում է հիմնականում ցավի և ախտանիշների կառավարման վրա, այլ ոչ թե կյանքը երկարացնելու բուժման վրա:

Անբուժելի հիվանդների խնամքը ներառում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային կամ խոսքի ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Տանն առողջապահական սպասարկում տրամադրող օգնականներ և տան մաքրման ծառայություններ
- Բժշկական պաշարներ և սարքեր
- Որոշ դեղեր և կենսաբանական ծառայություններ (որոշները կարող են հասանելի լինել Medi-Cal Rx միջոցով)
- Խորհրդատվական ծառայություններ
- 24-ժամյա շարունակական բուժքույրական ծառայություններ ճգնաժամի ժամանակ և ըստ անհրաժեշտության՝ անբուժելի հիվանդությամբ անդամներին տանը սպասարկելու համար
 - Շնչարգելության ստացիոնար խնամք մինչև հինգ հաջորդական օր հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունում գտնվելու ընթացքում
 - Կարճաժամկետ ստացիոնար խնամք ցավի կամ ախտանիշների կառավարման համար հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունում գտնվելու ընթացքում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Health Net-ը կարող է պահանջել, որ դուք հոսպիսային խնամք ստանաք ներքանցային մատակարարից, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում:

Պալիատիվ խնամք

Պալիատիվ խնամքը հիվանդակենտրոն և ընտանիքակենտրոն խնամք է, որը բարելավում է կյանքի որակը՝ կանխատեսելով, կանխարգելելով և բուժելով հիվանդի տանջանքները:

Պալիատիվ խնամքը հասանելի է ծանր կամ կյանքին սպառնացող հիվանդություն ունեցող երեխաների և չափահասների համար: Այն չի պահանջում, որպեսզի անդամն ունենա վեց ամիս կամ ավելի քիչ կյանքի տևողություն: Պալիատիվ խնամքը կարող է տրամադրվել բուժիչ խնամքի հետ միաժամանակ:

Պալիատիվ խնամքը ներառում է՝

- Առաջադեմ խնամքի պլանավորում
- Պալիատիվ խնամքի գնահատում և խորհրդատվություն
- Խնամքի ծրագիր, ներառյալ ամբողջ հաստատված պալիատիվ և բուժիչ խնամքը
- Պալիատիվ խնամքի թիմ, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.
 - Բժշկության կամ ոսկրախտություն բժիշկ
 - Օգնական բժիշկ
 - Գրանցված բուժքույր
 - Հավաստագրված մասնագիտական բուժքույր կամ պրակտիկ բուժքույր
 - Սոցիալական աշխատող
 - Հոգևորական
- Խնամքի համակարգում
- Ցավի և ախտանիշների կառավարում
- Հոգեկան առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ

21 տարեկան և ավելի չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ և՛ բուժիչ, և՛ հոսպիսային խնամք: Եթե պալիատիվ խնամք եք ստանում և որակավորվում եք անբուժելի հիվանդների խնամքի համար, կարող եք ցանկացած պահի խնդրել, որ ձեզ փոխեն անբուժելի հիվանդների խնամքի:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Հոսպիտալացում

Անեսթեզիոլոգի ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ անեսթեզիոլոգի ծառայությունները հիվանդանոցում մնալու ընթացքում: Անեսթեզիոլոգը մատակարար է, որը մասնագիտացված է հիվանդներին անեսթեզիա տալու համար: Անզգայացումը դեղամիջոցի տեսակ է, որն օգտագործվում է որոշ բժշկական կամ ատամնաբուժական ընթացակարգերի ժամանակ:

Հիվանդանոցային ստացիոնար ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ ստացիոնար հիվանդանոցային խնամքը, երբ դուք ընդունվում եք հիվանդանոց:

Ամբողջական գենոմի արագ սեկվենավորում

Ամբողջական գենոմի արագ սեկվենավորումն (RWGS) ապահովագրված նպաստ է Medi-Cal-ի ցանկացած անդամի համար, ով մեկ տարեկան կամ ավելի փոքր է, և ստանում է ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ վերակենդանացման բաժանմունքում: Այն ներառում է անհատական սեկվենավորում, եռյակ սեկվենավորում ծնողի կամ ծնողների և նրանց երեխայի համար և ծայրահեղ արագ սեկվենավորում:

RWGS-ն հիվանդությունները ժամանակին ախտորոշելու նոր միջոց է, որը կազդի մեկ տարեկան և ավելի փոքր երեխաների Ինտենսիվ խնամքի միավորի (ICU) խնամքի վրա: Եթե ձեր երեխան իրավասու է California-ի Երեխաների ծառայությունների (CCS) ծրագրի համար, CCS-ը կարող է պատասխանատու լինել հիվանդանոցում մնալու և RWGS-ի ապահովագրության համար:

Վիրաբուժական ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ վիրահատությունները, որոնք կատարվում են հիվանդանոցում:

Վերականգնողական և վերականգնման (թերապիա) ծառայություններ ու սարքեր

Այս նպաստը ներառում է ծառայություններ և սարքեր, որոնք օգնում են վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական վիճակներ ունեցող մարդկանց վերականգնել կամ ապաքինել հոգեկան կամ ֆիզիկական հմտությունները:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Health Net-ն ապահովագրում է այս բաժնում նկարագրված վերականգնողական և վերականգնման ծառայությունները, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պահանջները՝

- Ծառայությունները բժշկական տեսակետից անհրաժեշտ են
- Ծառայությունները նախատեսված են առողջական վիճակը լուծելու համար
- Ծառայություններն օգնում են ձեզ պահպանել, սովորել կամ բարելավել կարողությունները և ամենօրյա կյանքի գործառնությունը
- Դուք ծառայությունները ստանում եք ցանցի հաստատությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ցանցի բժիշկը որոշում է, որ բժշկական տեսակետից անհրաժեշտ է ծառայությունները ստանալ այլ վայրում, կամ ցանցի հաստատությունը հասանելի չէ ձեր առողջական վիճակը բուժելու համար

Health Net-ն ապահովագրում է հետևյալ վերականգնողական/վերականգնման ծառայությունները՝

Ասեղնաբուժություն

Health Net-ն ապահովագրում է ասեղնաբուժության ծառայություններ տևական, քրոնիկական ցավի կանխման, փոփոխման կամ թեթևացման համար, որի պատճառն է լայնորեն ճանաչված բժշկական վիճակը:

Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունները (ասեղների էլեկտրական խթանմամբ կամ առանց դրա) սահմանափակված են ամսական երկու ծառայությամբ՝ աուդիոլոգիայի, քիրոպրակտիկայի, աշխատանքային բուժման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ մեկտեղ, երբ տրամադրվում են բժշկի, ատամնաբույժի, ոտնաբույժի կամ ասեղնաբույժի կողմից: Սահմանափակումները կիրառելի չեն 21 տարեկանից փոքր երեխաների համար: Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

Աուդիոլոգիա (լսողություն)

Health Net-ն ապահովագրում է աուդիոլոգիայի ծառայությունները: Ամբուլատոր աուդիոլոգիան սահմանափակված է երկու ծառայությամբ ամսական՝ ասեղնաբուժության, քիրոպրակտիկայի, աշխատանքային բուժման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ մեկտեղ (21 տարեկանից փոքր երեխաների համար սահմանափակում չկա):

Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:



Չանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Վարքագծային առողջության բուժումներ

Health Net-ն ապահովագրում է վարքագծային առողջության բուժման (BHT) ծառայությունները մինչև 21 տարեկան անդամների համար Medi-Cal Երեխաների և դեռահասների նպաստի միջոցով: BHT-ն ներառում է ծառայություններ և բուժման ծրագրեր, օրինակ՝ վարքագծի կիրառական վերլուծություն և ապացույցների հիման վրա վարքագծային միջամտության ծրագրեր, որոնք զարգացնում կամ վերականգնում են, առավելագույն հնարավորինս չափով, 21 տարեկանից փոքր անդամի գործունեությունը:

BHT ծառայություններն ուսուցանում են կարողություններ՝ վարքագծային դիտարկման և ամրապնդման կիրառմամբ կամ հուշմամբ ուսուցանելով թիրախային վարքագծի յուրաքանչյուր քայլը: BHT ծառայությունները հիմնված են վստահելի ապացույցների վրա: Դրանք փորձնական չեն: BHT ծառայությունների օրինակներ են՝ վարքագծային միջամտությունները, կոգնիտիվ վարքագծային միջամտության փաթեթները, համապարփակ վարքագծային բուժումը և վարքագծի կիրառական վերլուծությունը:

BHT ծառայությունները պետք է լինեն բժշկական տեսակետից անհրաժեշտ, նշանակված արտոնագրված բժշկի կամ հոգեբանի կողմից, հաստատված Health Net-ի կողմից և տրամադրված այնպես, որ բուժման հաստատված ծրագիրը պահպանվի:

Սրտի վերականգնողական ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է ստացիոնար և ամբուլատոր սրտային վերականգնողական ծառայություններ:

Տնական օգտագործման բժշկական սարքավորում (DME)

- Health Net-ն ապահովագրում է DME պաշարների, սարքավորումների և այլ ծառայությունների ձեռք բերումը կամ վարձակալումը, եթե առկա է բժշկի, բժշկի օգնականի, պրակտիկ բուժքրոջ կամ կլինիկական բուժքույր մասնագետի դեղատոմս: Դեղատոմսով նշանակված DME պարագաները կարող են ապահովագրվել, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ են՝ պահպանելու մարմնի գործառնությունները, որոնք էական են առօրյա կյանքի գործողությունների համար կամ կանխելու ֆիզիկական լուրջ հաշմանդամությունը:
- Medi-Cal Rx-ն ապահովագրում է արյան մեջ գլյուկոզի կամ մեզի ստուգման համար դեղատներում սովորաբար մատչելի միանգամյա օգտագործման ամբուլատոր սարքեր, ինչպիսիք են շաքարախտի արյան մեջ գլյուկոզի մոնիտորները, գլյուկոզի անընդհատ ստուգման մոնիտորները, թեստային ժապավենները և լանցետները:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Սովորաբար Health Net-ը չի ապահովագրում՝

- Հարմարության, հարմարավետության կամ շքեղ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ, բացի խանութում վաճառվող կրծքի պոմպերից, ինչպես նկարագրվում է նախկինում այս գլխում «Կրծքի պոմպեր և պաշարներ» հատվածում՝ «Մայրություն և նորածինների խնամք» վերնագրի տակ
- Պարագաներ, որոնք նախատեսված չեն առօրյա կյանքի սովորական գործունեությունը պահպանելու համար, օրինակ՝ մարզական սարքեր (ներառյալ սարքեր, որոնք տրամադրում են լրացուցիչ աջակցություն հանգստի և սպորտային գործողությունների համար)
- Հիգիենայի սարքեր, բացի բժշկական տեսակետից անհրաժեշտներից, 21 տարեկանից փոքր անդամների համար
- Որ բժշկական պարագաներ, օրինակ՝ սաունաներ և վերելակներ
- Ձեր տան կամ մեքենայի փոփոխություններ (եթե դրանք հասանելի չեն և առաջարկվում են Համայնքային աջակցությունների միջոցով)
- Սրտի և թոքերի էլեկտրոնային մոնիտորներ, բացի նորածինների քնի շնչադադարի մոնիտորներից
- Սարքերի նորոգում կամ փոխարինում՝ կորստի, գողության կամ սխալ օգտագործման պատճառով, բացի բժշկական տեսակետից անհրաժեշտներից, 21 տարեկանից փոքր անդամների համար
- Այլ իրեր, որոնք սովորաբար չեն օգտագործվում առողջական խնամքի համար

Որոշ դեպքերում այս պարագաները կարող են հաստատվել, երբ ձեր բժիշկը նախնական հաստատման (նախօրոք լիազորում) խնդրանք է ներկայացնում, և պարագաները բժշկական տեսակետից անհրաժեշտ են և համապատասխանում են DME-ի սահմանմանը:

Էնտերալ և հարէնտերալ սնուցում

Սնունդ ստանալու այս եղանակներն օգտագործվում են, երբ բժշկական վիճակը թույլ չի տալիս ստանալ սնունդ նորմալ ճանապարհով: Էնտերալ և հարէնտերալ սնուցման արտադրանքներն ապահովագրվում են Medi-Cal Rx-ի միջոցով, երբ կա բժշկական անհրաժեշտություն: Health Net-ն ապահովագրում է էնտերալ և հարէնտերալ սնուցման արտադրանքներ, երբ կա բժշկական անհրաժեշտություն:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Լսողական օժանդակ սարքեր

Health Net-ն ապահովագրում է լսողական օժանդակ սարքերը, եթե դուք ստուգվել եք լսողության կորստի համար, եթեդրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են և ունեք բժշկի դեղատոմս: Ապահովագրումը սահմանափակվում է ամենաէժան լսողական սարքերով, որոնք բավարարում են ձեր բժշկական կարիքները: Health Net-ը կտրամադրի մեկ լսողական սարք, եթե յուրաքանչյուր ականջի համար լսողական ապարատ չպահանջվի ավելի լավ արդյունքների համար, քան այն, ինչ դուք կարող եք ստանալ մեկ լսողական սարքով:

Լսողական օժանդակ սարքեր 21 տարեկանից փոքր տարիքի անդամների համար Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջաններում նահանգայինօրենքը պահանջում է, որ մինչև 21 տարեկան երեխաները, ում լսողական սարքեր են անհրաժեշտ, ուղարկվեն California-ի Երեխաների ծառայությունների (CCS) ծրագիր, որոշելու համար, եթե երեխան իրավասու է CCS-ի համար: Եթե երեխան որակավորվում է CCS-ի համար, CCS-ը կապահովագրի բժշկական տեսակետից անհրաժեշտ լսողական սարքերի ծախսերը, եթե դրանք նախատեսված են բժշկական վիճակը բուժելու համար: Եթե երեխան չի որակավորվում CCS-ի համար, Health Net-ը կապահովագրի բժշկական տեսակետից անհրաժեշտ լսողական սարքերը՝ որպես Medi-Cal-ի ապահովագրության մաս:

Լսողական օժանդակ սարքեր 21 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար:

Medi-Cal-ի ներքո Health Net-ը կապահովագրի հետևյալը յուրաքանչյուր ապահովագրված լսողական օժանդակ սարքի համար՝

- Ականջի կաղապարներ, որոնք անհրաժեշտ են սարքը հարմարեցնելու համար
- Մարտկոցների մեկ ստանդարտ փաթեթ
- Այցելություններ՝ հավաստիանալու համար, որ լսողական սարքը ճիշտ է աշխատում
- Այցելություններ՝ լսողական սարքը մաքրելու և հարմարեցնելու համար
- Ձեր լսողական օժանդակ սարքի նորոգում
- Լսողական ապարատի պարագաներ և վարձույթ

Medi-Cal-ի ներքո Health Net-ը կապահովագրի լսողական օժանդակ սարքի փոխարինումը, եթե՝

- Ձեր լսողության կորուստն այնքան ծանր է, որ ձեր ընթացիկ լսողական սարքը չի կարող ուղղել դա



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Ձեր լսողական սարքը կորել, գողացվել կամ կոտրվել է, և չի կարող նորոգվել, և դա ձեր մեղքով չի եղել: Դուք պետք է մեզ գրավոր բացատրեք՝ ինչպես է դա տեղի ունեցել:

21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասների համար Medi-Cal-ը չի ապահովագրում՝

- Լսողական օժանդակ սարքերի մարտկոցների փոխարինում

Տանը մատուցվող առողջապահական ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է տանը մատուցվող առողջապահական ծառայություններ, եթե դրանք բժշկականորեն անհրաժեշտ են և նշանակվել են բժշկի կամ բժշկի օգնականի, բուժքույր-պրակտիկ բժշկի կամ կլինիկական բուժքույր մասնագետի կողմից:

Տնային առողջության ծառայությունները սահմանափակվում են այն ծառայություններով, որոնք ապահովագրում է Medi-Cal-ը, ներառյալ՝

- Կես դրույքով հմուտ բուժքույրական խնամք
- Կես դրույքով տանն առողջական սպասարկում տրամադրող օգնական
- Հմուտ ֆիզիկական, աշխատանքային և խոսքի թերապիաներ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Բժշկական պաշարներ

Բժշկական պաշարներ, սարքավորումներ և սարքեր

Health Net-ն ապահովագրում է բժշկական պաշարները, որոնք նշանակված են բժշկի, բժշկի օգնականի, պրակտիկ բուժքրոջ և կլինիկական բուժքույր մասնագետի կողմից: Որոշ բժշկական պաշարներն ապահովագրվում են Medi-Cal Rx-ի՝ Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի մասի, այլ ոչ Health Net-ի կողմից: Երբ Medi-Cal Rx-ը պարագաներ է ապահովագրում, մատակարարը հաշիվ կուղարկի Medi-Cal-ին:

Medi-Cal-ը չի ապահովագրում՝

- Սովորական կենցաղային պարագաներ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝
 - Կպչուն ժապավեն (բոլոր տեսակների)
 - Բժշկական սպիրտ
 - Կոսմետիկա
 - Բամբակե գնդիկներ և ձողիկներ
 - Փռփռներ
 - Անձեռոցիկներ
 - Գամամելիս (witch hazel)



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Սովորական կենցաղային բուժամիջոցներ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝
 - Սպիտակ վազելին
 - Չոր մաշկի յուղեր և լոսյոններ
 - Տալկ և տալկ պարունակող ապրանքներ
 - Օքսիդացնող գործոններ, օրինակ՝ ջրածնի պերօքսիդ
 - Կարբամիդի պերօքսիդ և սոդիումի պերփորատ
- Ոչ դեղատոմսային շամպուններ
- Տեղային օգտագործման պատրաստույներ, որոնք պարունակում են բենզոյական կամ սալիցիլային թթվի քսուկ, սալիցիլային թթվի կրեմ, քսուկ կամ հեղուկ և ցինկի օքսիդի մածուկ
- Այլ իրեր, որոնք սովորաբար չեն օգտագործվում առողջական խնամքի համար, և որոնք սովորաբար և առաջին հերթին օգտագործվում են այն մարդկանց կողմից, ովքեր չունեն դրանց հատուկ բժշկական կարիքը

Աշխատանքային թերապիա

Health Net-ն ապահովագրում է աշխատանքային բուժման ծառայություններ, ներառյալ՝ աշխատանքային բուժման գնահատումը, բուժման պլանավորումը, բուժումը, հրահանգման և խորհրդատվական ծառայությունները: Աշխատանքային թերապիայի ծառայությունները սահմանափակված են երկու ծառայությամբ ամսական՝ ասեղնաբուժության, աուդիոլոգիայի, քիրոպրակտիկ բուժման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ միասին (21 տարեկանից փոքր երեխաների համար սահմանափակում չկա): Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

Օրթեզներ/պրոթեզներ

Health Net-ն ապահովագրում է օրթոպեդիկ և պրոթեզային սարքերն ու ծառայությունները, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ են և նշանակված ձեր բժշկի, ոտնաբույժի, ատամնաբույժի կամ ոչ-բժիշկ բժշկական մատակարարի կողմից: Սա ներառում է իմպլանտավորված լսողական սարքերը, կրծքի պրոթեզները/մաստէկտոմիայի կրծկալները, այրվածքների կոմպրեսիոն հագուստներ և պրոթեզներ՝ վերականգնելու գործառույթը կամ փոխաինելու մարմնի մասը, կամ աջակցելու մարմնի թուլացած կամ ձևափոխված մասին:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Ստոմաներ և ուրոլոգիական պարագաներ

Health Net-ն ապահովագրում է ստոմայի տոպրակները, միզային կաթետրները, հեղուկների հեռացման տոպրակները, հեղուկների սնուցման պարագաները և սոսնձանյութերը: Սա չի ներառում պարագաները, որոնք հարմարության կամ հարմարավետության կամ շքեղության սարքավորումներ ու գործիքներ են:

Ֆիզիկական թերապիա

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ ֆիզիկական թերապիայի ծառայությունները, երբ դրանք նշանակվում են բժշկի, ատամնաբույժի կամ ոտնաբույժի կողմից: Ծառայությունները ներառում են ֆիզիկական թերապիայի գնահատում, բուժման պլանավորում, բուժում, հրահանգներ, խորհրդատվական ծառայություններ և տեղային դեղամիջոցների կիրառում: Դեղատոմսերը սահմանափակված են վեց ամսով և կարող են թարմացվել բժշկական անհրաժեշտության դեպքում:

Թոքային վերականգնում

Health Net-ն ապահովագրում է թոքային վերականգնումը, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է և նշանակված ձեր բժշկի կողմից:

Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ, ըստ բժշկական տեսակետից անհրաժեշտության, եթե դուք հաշմանդամ եք և ունեք խնամքի բարձր մակարդակի կարիք: Այս ծառայությունները ներառում են սենյակ և բնակություն արտոնագրված հաստատությունում՝ հմուտ բուժքույրական խնամքով օրական 24 ժամ հիմունքով:

Խոսքի թերապիա

Health Net-ն ապահովագրում է խոսքի թերապիան, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է և նշանակված է բժշկի կամ ատամնաբույժի կողմից: Դեղատոմսերը սահմանափակված են վեց ամսով և կարող են թարմացվել բժշկական անհրաժեշտության դեպքում: Խոսքի թերապիայի ծառայությունները սահմանափակված են երկու ծառայությամբ ամսական՝ կապված ասեղնաբուժության, ատոլիոլոգիայի, քիրոպրակտիկ և աշխատանքային բուժման հետ: Սահմանափակումները կիրառելի չեն 21 տարեկանից փոքր երեխաների համար: Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) ամսական երկու ծառայություններից ավել, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Տրանսգենդերային ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է տրանսգենդերային ծառայությունները (զենդերի հաստատման ծառայություններ), երբ բժշկական տեսակետից անհրաժեշտ են, կամ երբ ծառայությունները համապատասխանում են ռեկոնստրուկտիվ վիրահատության կանոններին:

Կլինիկական փորձարկումներ

Health Net-ն ապահովագրում է հիվանդի սովորական խնամքի ծախսերն այն հիվանդների համար, որոնք մասնակցում են կլինիկական հետազոտություններին, ներառյալ՝ քաղցկեղի կլինիկական հետազոտություններին, որոնք նշված են Միացյալ Նահանգների համար այստեղ՝ <https://clinicaltrials.gov>: Medi-Cal Rx-ը՝ FFS Medi-Cal-ի մի մասը, ապահովագրում է ամբուլատոր դեղատոմսով դեղերի մեծ մասը: Մանրամասների համար կարդացեք ներքևում «Ամբուլատոր դեղատոմսային դեղեր» հատվածն այս գլխում:

Լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է ամբուլատոր և ստացիոնար լաբորատոր և ռենտգենային ծառայությունները, երբ դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են: Ապահովագրվում են առաջավոր ռենտգենային պրոցեդուրաներ, ինչպիսիք են՝ համակարգչային տոմոգրաֆիան, MRI և PET սկանավորումը՝ ըստ բժշկական անհրաժեշտության:

Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ ու քրոնիկական հիվանդության կառավարում

Health Net-ի կողմից ապահովագրված կարևոր օրգանների փոխադաստումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Պատվաստանյութեր, որոնք խորհուրդ են տրվում Պատվաստման գործառույթների խորհրդատվական հանձնաժողովի (ACIP) կողմից
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ
- Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի «Bright Futures»-ի խորհուրդներ (https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf)
- Մանկության անբարենպաստ փորձառությունների (ACE) զննում
- Ասթմայի կանխարգելիչ ծառայություններ
- Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան քոլեջի կողմից խորհուրդ տրվող կանխարգելիչ ծառայություններ կանանց համար



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Օգնություն ծխելը դադարեցնելու համար, որը նաև կոչվում է ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Միացյալ Նահանգների Կանխարգելիչ ծառայությունների աշխատանքային խումբ Ա-ի և Բ-ի կողմից խորհուրդ տրվող կանխարգելիչ ծառայություններ

Ընտանիքի պլանավորման ծառայություններ

Ընտանիքի պլանավորման ծառայությունները տրամադրվում են վերարտադրողական տարիքի անդամներին՝ խթանելու նրանց սահմանել երեխաների քանակն ու տարիքային տարբերությունը: Այս ծառայություններն ընդգրկում են Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից հաստատված բոլոր հակաբեղմնավորիչ միջոցները: Health Net-ի PCP և մանկաբարձ/գինեկոլոգ մասնագետները հասանելի են ընտանիքի պլանավորման ծառայությունների համար:

Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած բժիշկ կամ կլինիկա, որը ցանցում չէ Health Net-ի հետ՝ առանց Health Net-ից նախնական հաստատում (նախօրոք լիազորում) ստանալու: Եթե դուք ստանում եք ծառայություններ, որոնք կապված չեն ընտանիքի պլանավորման հետ արտացանցային մատակարարից, այդ ծառայությունները կարող են ապահովագրված չլինել: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Քրոնիկ հիվանդությունների կառավարում

Health Net-ը նաև ապահովագրում է քրոնիկական հիվանդության կառավարման ծրագրերը, որոնք կենտրոնանում են հետևյալ վիճակների վրա՝

- Շաքարախտ
- Սրտանոթային հիվանդություն
- Ասթմա
- Թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություն (COPD)

21 տարեկանից փոքր անդամների կանխարգելիչ խնամքի մասին տեղեկությունների համար կարդացեք այս տեղեկագրի «Երեխայի և երիտասարդության լավ խնամք» Գլուխ 5-ը:

Շաքարախտի կանխարգելման ծրագիր

Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (DPP) ապացույցների հիման վրա կյանքի ոճի փոփոխման ծրագիր է: Այս 12-ամսյա ծրագիրը կենտրոնացած է ապրելակերպի փոփոխության վրա: Այն մշակված է կանխելու կամ հետաձգելու 2-րդ տիպի շաքարախտի



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

զարգացումը նախաշաքարախտի ախտորոշում ունեցող մարդկանց մոտ: Այն անդամները, ովքեր համապատասխանում են չափանիշներին, կարող են որակավորվել երկրորդ տարվա համար: Ծրագիրը տրամադրում է կրթություն և խմբային աջակցություն: Մեթոդները ներառում է, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Հավասարակից մարզիչի տրամադրում
- Ինքնուրույն վերահսկման և խնդիրների լուծման սովորեցում
- Խրախուսման և կարծիքի տրամադրում
- Նպատակներին աջակցելու նպատակով տեղեկությունների տրամադրում
- Նպատակներին հասնելու համար քաշի կանոնավոր հետևում

DPP-ին միանալու համար անդամները պետք է համապատասխանեն որոշ կանոնների: Զանգահարեք Health Net պարզելու համար, եթե դուք որակավորվում եք այս ծրագրի համար:

Ռեկոնստրուկտիվ ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է վիրահատությունն՝ ուղղելու կամ վերականգնելու մարմնի ոչ նորմալ կառուցվածքները, որպեսզի բարելավի կամ ստեղծի նորմալ տեսք այնքանով, որքանով դա հնարավոր է: Մարմնի խաթարված կառուցվածքները նրանք են, որոնց պատճառ են հանդիսանում բնածին թերությունները, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները, հիվանդությունները կամ հիվանդության բուժումը, որի պատճառով կորել է մարմնի կազմվածքը, օրինակ՝ կրծքագեղձի հեռացումը: Կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ և բացառություններ:

Թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) գնման ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է՝

- Ալկոհոլի և թմրանյութերի զննում, գնահատում, հակիրճ միջամտություն և բուժման ուղեգիր (SABIRT)
- Ծառայություններ չափահասների համար (18 և ավելի բարձր տարիքի), որոնք ունեն ալկոհոլի և ուրիշ նյութերի օգտագործման խանգարման վիճակներ, առաջարկվում են անվճար: Ալկոհոլի սխալ օգտագործման համար ապահովագրված ծառայություններն են՝
 - Տարեկան մեկ լայնածավալ զննում ալկոհոլի վտանգավոր օգտագործման համար (գնման գործիք, որը ձեզանից մանրամասն տեղեկություններ է հայցում ձեր ալկոհոլի օգտագործման մասին):



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Տարեկան երեք 15-րդականոց միջամտության սեանսներ ակոհոլի վտանգավոր օգտագործման մասին խոսելու նպատակով:
- Ծրագիրը նաև ապահովագրում է ստացիոնար բուժում թմրանյութերի կամ ակոհոլի սուր գերդոզավարման ժամանակ, երբ բժշկական տեսակետից անհրաժեշտ է:

Վարչաշրջանի միջոցով բուժման ապահովագրմանը տեղեկանալու համար կարդացեք «Թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) բուժման ծառայություններ» հատվածը ներքևում այս գլխում:

Տեսողության նպաստներ

Health Net-ն ապահովագրում է՝

- Աչքերի ընթացիկ ստուգում յուրաքանչյուր 24 ամիսը մեկ անգամ. ավելի հաճախակի աչքերի ստուգումները կարող են ապահովագրվել, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են անդամների համար, օրինակ՝ շաքարախտ ունեցողների համար
- Ակնոցներ (շրջանակներ և ոսպնյակներ) յուրաքանչյուր 24 ամիսը մեկ անգամ, եթե ունեք վավեր դեղատոմս
- Փոխարինող ակնոցներ 24 ամսվա ընթացքում, եթե փոխվել է ձեր դեղատոմսը, կամ եթե ձեր ակնոցները կորել, գողացվել կամ կոտրվել են (չեն կարող նորոգվել), և դա ձեր մեղքով չի եղել: Դուք պետք է մեզ գրավոր բացատրեք՝ ինչպես են կորել, գողացվել կամ կոտրվել ձեր ակնոցները:
- Ցածր տեսողության սարքերը, եթե դուք ունեք տեսողության խանգարում, որը ազդում է ձեր ամենօրյա գործողություններ կատարելու ունակության վրա (օրինակ՝ տարիքային մակույաբ դեգեներացիա), և ստանդարտ ակնոցները, կոնտակտային ոսպնյակները, դեղորայքը կամ վիրահատությունը չեն կարող շտկել ձեր տեսողության խանգարումը:
- Բժշկական տեսակետից անհրաժեշտ կոնտակտային ոսպնյակներ: Կոնտակտային ոսպնյակների ստուգումը և կոնտակտային ոսպնյակները կարող են ապահովագրվել, եթե ակնոցների օգտագործումը հնարավոր չէ աչքի հիվանդության կամ վիճակի պատճառով (օրինակ՝ մի ականջը չկա): Բժշկական վիճակները, որոնք համապատասխանում են հատուկ կոնտակտային ոսպնյակների անհրաժեշտությանը, ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ անիրիդիա, աֆակիա և կերատոկոնուս:
- Արհեստական աչքի ծառայություններ և նյութեր այն անդամների համար, ովքեր կորցրել են աչքը կամ աչքերը հիվանդության կամ վնասվածքի պատճառով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Փոխադրման նպաստներ արտակարգ իրավիճակ չհանդիսացող դեպքերում

Դուք կարող եք բժշկական փոխադրում ստանալ, եթե ունեք բժշկական կարիքներ, որոնք թույլ չեն տալիս օգտագործել մեքենա, ավտոբուս, գնացք, տաքսի, կամ հանրային կամ մասնավոր փոխադրման այլ տեսակ՝ բժշկական օգնության համար ձեր տեսակցություններին հասնելու համար: Կարող եք ստանալ բժշկական փոխադրում ապահովագրված ծառայությունների և Medi-Cal-ի ապահովագրված դեղատան ժամադրությունների համար: Դուք կարող եք բժշկական փոխադրում խնդրել՝ դիմելով ձեր մատակարարին: Սա ներառում է ձեր բժշկին, ատամնաբույժին, ոտնաբույժին, ֆիզիկական թերապևտին, խոսքի թերապևտին, աշխատանքային թերապևտին, հոգեկան առողջության կամ թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) մասնագետին, բժշկի օգնականին, բուժքույր-մասնագետին կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձին: Ձեր մատակարարը կորոշի փոխադրման ճիշտ տեսակը՝ ձեր կարիքները բավարարելու համար:

Եթե նրանք որոշեն, որ ձեզ բժշկական փոխադրում է հարկավոր, նրանք դա կնշանակեն՝ լրացնելով ձևաթուղթը և այն ներկայացնելով Health Net-ին: Երբ այն հաստատվի, այն վավեր է մինչև 12 ամսվա համար՝ կախված բժշկական կարիքից: Հաստատվելուց հետո դուք կարող եք ստանալ այնքան ուղևորություն, որքան անհրաժեշտ է ձեր ապահովագրված բժշկական և դեղատնային հանդիպումների համար: Ձեր մատակարարը պետք է վերագնահատի բժշկական փոխադրման ձեր բժշկական կարիքը և, անհրաժեշտության դեպքում, նորից հաստատի բժշկական փոխադրման ձեր դեղատոմսը, երբ դրա ժամկետը լրանա, եթե դուք դեռ իրավասու եք: Ձեր բժիշկը կարող է վերահաստատել բժշկական փոխադրումը մինչև 12 ամիս կամ ավելի քիչ:

Բժշկական փոխադրումը շտապ օգնության մեքենան է, պատգարակի ֆուրգոնը, անվասայլակի ֆուրգոնը կամ օդային փոխադրամիջոցը: Health Net-ը թույլ է տալիս ամենաեժան բժշկական փոխադրումը ձեր բժշկական կարիքների համար, երբ ձեզ հարկավոր է հասնել ձեր ժամադրության վայրը: Օրինակ, սա նշանակում է, որ եթե դուք ֆիզիկապես կամ հոգեպես կարող եք տեղափոխվել անվասայլակի համար նախատեսված վեճով, ապա Health Net-ը չի վճարի շտապ օգնության մեքենայի համար: Դուք իրավասու եք օդային փոխադրամիջոցի համար միայն այն դեպքում, երբ ձեր բժշկական վիճակն անհնար է դարձնում փոխադրել ցամաքային որևէ փոխադրամիջոցով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Դուք բժշկական փոխադրում կատանաք, եթե.

- Դա ֆիզիկապես կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ է՝ ձեր մատակարարի գրավոր թույլտվությամբ, քանի որ դուք ֆիզիկապես կամ բժշկական ի վիճակի չեք օգտագործել մեքենա, ավտոբուս, գնացք, տաքսի, կամ հանրային կամ մասնավոր փոխադրման այլ տեսակ՝ ձեր հանդիպմանը հասնելու համար:
- Դուք վարորդի օգնության կարիքն ունեք գնալու և վերադառնալու ձեր տնից, փոխադրամիջոցից կամ բուժման վայրից՝ կախված ձեր ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամությունից:

Ձեր բժշկի կողմից նշանակված ոչ շտապ օգնության (սովորական) բժշկական փոխադրում խնդրելու համար, զանգահարեք Health Net 1-800-675-6110 հեռախոսահամարով ձեր ժամադրությունից առնվազն 48 ժամ (երկուշաբթիից ուրբաթ) առաջ: Հրատապ ժամադրությունների դեպքում զանգահարեք որքան հնարավոր է շուտ: Պատրաստ ունեցեք ձեր Health Net-ի անդամի ID քարտը, երբ զանգահարում եք:

Բժշկական փոխադրման սահմանափակումներ

Health Net-ը տրամադրում է ամենաէժան բժշկական փոխադրումը ձեր բժշկական կարիքների համար՝ ձեր տնից դեպի մոտակա մատակարարի գրասենյակ, որտեղ ժամադրություն է մատչելի: Դուք չեք կարող բժշկական փոխադրում ստանալ, եթե Medi-Cal-ը չի ապահովագրում ձեր ստացված ծառայությունը, կամ դա Medi-Cal-ի կողմից ապահովագրված դեղատան ժամադրություն չէ: Ապահովագրված ծառայությունների ցանկը գտնվում է սույն ձեռնարկի 4-րդ գլխի «Նպաստներ և ծառայություններ» բաժնում:

Եթե ժամադրության տեսակն ապահովագրված է Medi-Cal-ի կողմից, բայց ոչ առողջապահական ծրագրի միջոցով, ապա Health Net-ը չի ապահովագրի բժշկական փոխադրումը, սակայն կօգնի ձեզ նշանակել ձեր փոխադրումը Medi-Cal-ի միջոցով: Փոխադրումը չի ապահովագրվում Health Net-ի ցանցից կամ սպասարկման տարածքից դուրս, եթե նախնական հաստատված (նախօրոք լիազորված) չէ Health Net-ի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների կամ բժշկական փոխադրում հայցելու համար զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Վճար անդամի համար

Անվճար է, երբ փոխադրումը կազմակերպվել է Health Net-ի կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ինչպես ստանալ ոչ բժշկական փոխադրում

Ձեր նպաստները ներառում են ձեր ժամադրություններին գնալու համար փոխադրամիջոց ստանալը, երբ ժամադրությունը Medi-Cal ապահովագրված ծառայության համար է, և դուք փոխադրում չունեք: Դուք կարող եք անվճար փոխադրում ստանալ, երբ փորձել եք փոխադրում ձեռք բերելու բոլոր այլ միջոցները, և.

- Ուղևորվում և վերադառնում եք ժամադրությունից Medi-Cal-ի ծառայության համար, որը լիազորվել է ձեր մատակարարի կողմից, կամ
- Ստանում եք դեղատոմսային դեղեր կամ բժշկական պաշարներ:

Health Net-ը ձեզ թույլ է տալիս օգտվել մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցից մեկնելու ձեր բժշկական ժամադրությանը Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար: Health Net-ն ապահովագրում է ամենաեժան ոչ բժշկական փոխադրումը, որը բավարարում է ձեր կարիքները:

Երբեմն Health Net-ը կարող է փոխհատուցել (հետ վճարել) ձեր կողմից կազմակերպված ուղևորությունն անհատական մեքենայով: Health Net-ը պետք է հաստատի սա, նախքան ուղևորություն կստանաք: Դուք պետք է տեղեկացնեք մեզ և ասեք, ինչու չեք կարող որևէ այլ կերպ ուղևորվել, օրինակ՝ ավտոբուսով: Եթե փոխադրում ունեք կամ ինքներդ եք վարում ժամադրությանը, Health Net-ը չի փոխհատուցի ձեզ: Այն նպաստը միայն այն անդամների համար է, որոնք փոխադրում չունեն:

Հաստատված անհատական մեքենայի մոդոնների փոխհատուցման համար պետք է ներկայացնեք վարորդի փաստաթղթերի պատճենները՝

- Վարորդի վավեր վարորդական վկայականը,
- Մեքենայի վավեր գրանցումը, և
- Մեքենայի վավեր ապահովագրությունը:

Փոխադրման ծառայությունները հայցելու համար զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով ձեր ժամադրությունից առնվազն 24 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ կամ զանգահարեք որքան հնարավոր է շուտ, եթե ունեք հրատապ ժամադրություն: Պատրաստ ունեցեք ձեր Health Net-ի անդամի ID քարտը, երբ զանգահարում եք:

Նշում. ամերիկյան հնդկացիները կարող են նաև հնդկացիները կարող են նաև կապվել իրենց տեղական Հնդկացիների առողջական կլինիկայի հետ ոչ բժշկական փոխադրում խնդրելու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ոչ-բժշկական փոխադրման սահմանափակումներ

Health Net-ը տրամադրում է ամենաէժան ոչ բժշկական փոխադրումը ձեր կարիքների համար՝ ձեր տնից դեպի մոտակա մատակարարի գրասենյակ, որտեղ ժամադրություն է մատչելի: Անդամները չեն կարող ինքնուրույն վարել կամ ուղղակիորեն փոխհատուցվել ոչ բժշկական փոխադրման համար: Կամ զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ոչ-բժշկական փոխադրումը կիրառելի չէ, եթե.

- Medi-Cal ապահովագրված ծառայություն ստանալու համար բժշկական տեսակետից անհրաժեշտ է շտապ օգնության մեքենա, պատգարակի վեն կամ անվասայլակի վեն կամ բժշկական փոխադրման այլ տարբերակ:
- Դուք վարորդի օգնության կարիքն ունեք՝ ֆիզիկական կամ առողջական վիճակի պատճառով բնակության վայր, տրանսպորտային միջոց կամ բուժման վայր հասնելու և վերադառնալու համար:
- Դուք անվասայլակում եք և չեք կարող մեքենա նստել և դուրս գալ առանց վարորդի օգնության:
- Medi-Cal-ը չի ապահովագրում ծառայությունը:

Վճար անդամի համար

Անվճար է, երբ ոչ բժշկական փոխադրումը կազմակերպվել է Health Net-ի կողմից:

Ճամփորդական ծախսեր

Որոշակի դեպքերում Health Net-ը կարող է ապահովագրել ճամփորդական ծախսերը, ինչպիսիք են սնունդը, հյուրանոցում մնալը և հարակից այլ ծախսերը, օրինակ՝ կայանատեղի, վճարովի ճանապարհները և այլն, եթե դուք պետք է ճանապարհորդեք բժշկի այցելությունների համար, որոնք հասանելի չեն ձեր տան մոտ: Դուք պետք է խնդրեք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) այս ծառայությունների համար՝ կապվելով Health Net 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ատամնաբուժական ծառայություններ

Եթե դուք ապրում եք LA և Sacramento վարչաշրջանում, Medi-Cal-ն օգտագործում է կառավարվող խնամքի ծրագրեր՝ ձեզ ատամնաբուժական ծառայությունները տրամադրելու համար: Եթե դուք ապրում եք Sacramento վարչաշրջանում, պետք է գրանցվեք ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագրում: Մանրամասների համար այցելեք Health Care Options՝ <http://dhcs.ca.gov/myMedi-Cal>: Եթե դուք ապրում եք LA վարչաշրջանում,



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

21 տարեկանից փոքր երեխա և պատանի անդամները կարող են անհրաժեշտ առողջական ծառայություններ ստանալ, հենց որ անդամագրվեն: Սա երաշխավորում է, որ նրանք ճիշտ կանխարգելիչ, ատամնաբուժական, հոգեկան առողջության խնամքի ծառայություններ ստանան՝ ներառյալ զարգացման և մասնագիտական ծառայությունները: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

Medi-Cal Երեխաների և դեռահասների համար

Անհրաժեշտ առողջական ծառայություններն ապահովագրված են և անվճար 21 տարեկանից ցածր անդամների համար: Ներքևի հետևյալ ցուցակը ներառում է սովորական բժշկական անհրաժեշտ ծառայություններ՝ արատները և ֆիզիկական կամ հոգեկան ախտորոշումները բուժելու կամ խնամելու համար: Ապահովագրված ծառայությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Երեխաների բարեկեցության այցեր և դեռահասների ստուգումներ (երեխաներին անհրաժեշտ կարևոր այցեր)
- Պատվաստումներ (սրսկումներ)
- Վարքագծային առողջության (հոգեկան առողջության և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարում) գնահատում և բուժում
- Հոգեկան առողջության գնահատում և բուժում՝ ներառյալ անհատական, խմբային և ընտանեկան հոգեթերապիա (հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները (SMHS) ապահովագրվում են վարչաշրջանի կողմից)
- Մանկության անբարենպաստ փորձառությունների (ACE) գնում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

- Ընդլայնված խնամքի կառավարում (ECM) ուշադրության կենտրոնում գտնվող երեխաների և երիտասարդների համար (POFs) (Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրի (MCP) նպաստ)
- Լաբորատոր անալիզներ, ներառյալ՝ արյան կապարով թունավորման ստուգում
- Առողջական և կանխարգելիչ կրթություն
- Տեսողության ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ (ապահովագրված է Medi-Cal Dental-ի ներքո)
- Լսողության ծառայություններ (ապահովագրվում է California-ի Երեխաների ծառայությունների (CCS) կողմից որակավորված երեխաների համար: Health Net-ը կապահովագրի ծառայությունները CCS-ի համար չորակավորվող երեխաների համար)
- Տնային առողջության ծառայություններ, ինչպիսիք են մասնավոր հերթապահություն (PDN), աշխատանքային թերապիա, ֆիզիկական թերապիա և բժշկական սարքավորումներ և պարագաներ

Այս ծառայությունները կոչվում են Medi-Cal Երեխաների և դեռահասների համար (նաև հայտնի է որպես Վադ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (EPSDT)) ծառայություններ: Անդամների համար լրացուցիչ տեղեկություններ Medi-Cal -ի երեխաների և դեռահասների վերաբերյալ կարող եք գտնել այստեղ՝

<https://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal-For-Kids-and-Teens/Pages/Member-Information.aspx>:

Medi-Cal Երեխաների և դեռահասների համար նախատեսված ծառայությունները, որոնք առաջարկվում են մանկաբույժների Bright Futures ուղեցույցներով, որոնք կօգնեն ձեզ կամ ձեր երեխային առողջ մնալ, ապահովագրվում են անվճար: Bright Futures-ի ուղեցույցները կարդալու համար այցելեք՝ https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf:

Ընդլայնված խնամքի կառավարումը (ECM) Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրի (MCP) նպաստ է, որը հասանելի է California-ի բոլոր շրջաններում՝ բարդ կարիքներ ունեցող MCP անդամների խնամքի համալիր կառավարմանն աջակցելու համար: Քանի որ բարդ կարիքներ ունեցող երեխաներին և երիտասարդներին հաճախ արդեն սպասարկում են մեկ կամ մի քանի դեպքերի կառավարիչներ կամ ծառայություններ մատուցող այլ ծառայություններ մատուցման մասնատված համակարգում, ECM-ն առաջարկում է համակարգում համակարգերի միջև: Ուշադրության կենտրոնում գտնվող երեխաները և երիտասարդները, որոնք իրավասու են այս նպաստի համար, ներառում են՝

- Անօթևանություն ապրող երեխաներն ու երիտասարդները
- Հիվանդանոցի կամ շտապ օգնության սենյակի օգտագործման վտանգի տակ գտնվող երեխաները և երիտասարդները



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Հոգեկան առողջության և/կամ նյութերի օգտագործման լուրջ խանգարումներ (SUD) ունեցող երեխաներ և երիտասարդներ
- Երեխաները և երիտասարդները, որոնք գրանցված են Կալիֆոռնիայի մանկական ծառայություններում (CCS) կամ CCS Ամբողջական մանկական մոդելում (WCM)՝ CCS պայմանից դուրս լրացուցիչ կարիքներով
- Երեխաները և երիտասարդները, որոնք ներգրավված են Երեխաների բարեկեցության մեջ
- Երեխաների և երիտասարդների ուղղիչ հաստատությունից տեղափոխում

ECM-ի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝

<https://www.dhcs.ca.gov/CalAIM/ECM/Documents/ECM-Children-And-Youth-POFs-Spotlight.pdf>

Ի լրումն, ECM-ի առաջատար խնամքի մենեջերներին խստորեն խրախուսվում է ստուգել ECM անդամներին Համայնքային աջակցության ծառայությունների կարիքների համար, որոնք տրամադրվում են MCP-ների կողմից՝ որպես ծախսարդյունավետ այլընտրանքներ ավանդական բժշկական ծառայություններին կամ կարգավորումներին, և հղում կատարել այդ Համայնքային աջակցությանը, երբ դրանք իրավասու և մատչելի են: Երեխաները և երիտասարդները կարող են օգտվել Համայնքի աջակցության ծառայություններից, այդ թվում՝ ասթմայի վերացման, բնակարանային նավիգացիայի, բժշկական հանգստի և սթափեցման կենտրոններից:

Համայնքային աջակցությունը ծառայություններ են, որոնք տրամադրվում են Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրերի (MCPs) կողմից և հասանելի են Medi-Cal-ի իրավասու անդամներին՝ անկախ այն բանից, թե արդյոք նրանք համապատասխանում են ECM ծառայություններին:

Համայնքային աջակցության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ <https://www.dhcs.ca.gov/CalAIM/Documents/DHCS-Medi-Cal-Community-Supports-Supplemental-Fact-Sheet.pdf>

Medi-Cal երեխաների և դեռահասների համար հասանելի ծառայություններից մի քանիսը, ինչպիսին է PDN-ը, համարվում են լրացուցիչ ծառայություններ: Դրանք հասանելի չեն Medi-Cal-ի 21 տարեկան և բարձր անդամների համար: Այս ծառայություններն անվճար շարունակելու համար դուք կամ ձեր երեխան կարող է գրանցվել 1915(c) Տնային և համայնքի վրա հիմնված ծառայությունների (HCBS) հրաժարման կամ այլ երկարաժամկետ ծառայությունների և աջակցության (LTSS) 21 տարին լրանալուց առաջ: Եթե դուք կամ ձեր երեխան լրացուցիչ ծառայություններ եք ստանում Medi-Cal-ի միջոցով երեխաների և դեռահասների համար և շուտով կդառնա 21 տարեկան, կապվեք Health Net-ի հետ՝ խոսելու շարունակական խնամքի ընտրության մասին:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Երեխայի բարեկեցության առողջական ստուգումներ և կանխարգելիչ խնամք

Կանխարգելիչ խնամքը ներառում է առողջության կանոնավոր ստուգումներ, զննումներ՝ օգնելու ձեր բժշկին բացահայտել խնդիրները շատ վաղ, ինչպես նաև խորհրդատվության ծառայություններ՝ հայտնաբերելու հիվանդությունը կամ բժշկական վիճակները, նախքան խնդիրների առաջացումը: Կանոնավոր ստուգումներն օգնում են ձեր կամ ձեր երեխայի բժշկին խնդիրներ փնտրել: Խնդիրները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողական, լսողական, հոգեկան առողջության և թմրանյութերի (ալկոհոլ կամ դեղորայք) օգտագործման խանգարումներ: Health Net-ն ապահովագրում է ստուգումները՝ խնդիրները գտնելու համար (այդ թվում՝ արյան մեջ կապարի մակարդակի ստուգում) ցանկացած ժամանակ, երբ դրանց կարիքը կա, անգամ երբ դա ձեր կամ ձեր երեխայի կանոնավոր ստուգման ժամանակ չէ:

Կանխարգելիչ խնամքը նույնպես ներառում է պատվաստումներ (սրսկումներ) ձեզ կամ ձեր երեխայի համար: Health Net-ը պետք է երաշխավորի, որ բոլոր անդամագրված երեխաները ստանում են բոլոր պատվաստումները (սրսկումները), երբ այցելում են բժշկի: Կանխարգելիչ խնամքի ծառայությունները և զննումները հասանելի են անվճար և առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման):

Ձեր երեխան պետք է ստուգվի այս տարիքում՝

- Ծննդից 2-4 օրական
- 1 ամսական
- 2 ամսական
- 4 ամսական
- 6 ամսական
- 9 ամսական
- 12 ամսական
- 15 ամսական
- 18 ամսական
- 24 ամսական
- 30 ամսական
- Տարին մեկ անգամ 3-ից 20 տարեկան հասակում

Բարեկեցության առողջական ստուգումները ներառում են՝

- Ամբողջական պատմություն և ոտքից գլուխ ֆիզիկական ստուգում
- Տարիքին համապատասխան պատվաստումներ (սրսկումներ) (California-ն հետևում է Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի Bright Futures-ի ժամանակացույցին՝ https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf)
- Լաբորատոր անալիզներ, ներառյալ՝ արյան կապարով թունավորման ստուգում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Առողջության վերաբերյալ կրթության ծառայություններ
- Տեսողություն և լսողության զննում
- Բերանի խոռոչի առողջական զննում
- Վարքագծային առողջության գնահատում

Եթե ստուգման կամ զննման ընթացքում բժիշկը խնդիր է տեսնում ձեր կամ ձեր երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության հետ կապված, դուք կամ ձեր երեխան պետք է հետագա բժշկական խնամք ստանաք: Health Net-ը ձեզ համար անվճար կապահովագրի այդ խնամքը, ներառյալ՝

- Բժիշկ, պրակտիկ բուժքույր և հիվանդանոցային խնամք
- Ձեզ առողջ պահելու պատվաստումներ (սրսկումներ)
- Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
- Տանը մատուցվող առողջապահական ծառայություններ՝ բժշկական սարքավորումները, պարագաները և սարքերը ներառյալ
- Տեսողության խնդիրների բուժում՝ ներառյալ ակնոցներ
- Տեսողության խնդիրների բուժում, ներառյալ՝ լսողական օժանդակ սարքեր, երբ դրանք չեն ապահովագրվում California-ի Երեխաների ծառայությունների (CCS) կողմից
- Վարքագծային առողջության բուժում առողջական վիճակների համար, ինչպիսիք են՝ աուտիզմի սպեկտրի խանգարումները և զարգացման այլ հաշմանդամությունները
- Գործի կառավարում և առողջության կրթություն
- Ռեկոնստրուկտիվ վիրահատություն նշանակում է վիրահատություն, որն անցկացվում է մարմնի խեղված մասերի ուղղման կամ վերականգնման համար, որոնց պատճառն են հանդիսանում բնածին թերությունները, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները կամ հիվանդությունը՝ բարելավելու գործառնությունները կամ ստեղծելու նորմալ տեսք:

Արյան կապարով թունավորման ստուգում

Health Net-ին անդամագրված բոլոր երեխաները պետք է արյան կապարի թունավորման ստուգում անցնեն 12 և 24 ամսականում կամ 24 ամսականից մինչև 72 ամսական տարիքում, եթե ավելի վաղ չեն ստուգվել: Երեխաները կարող են արյան մեջ կապարի հետազոտություն անցնել, եթե ծնողը կամ խնամակալը դա պահանջի: Երեխաները պետք է նաև զննվեն, երբ բժիշկը համարում է, որ կյանքի փոփոխությունը երեխային վտանգի տակ է դնում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Երեխաներին և պատանիներին բարեկեցության ծառայությունների ստացման օգնություն

Health Net-ը կօգնի 21 տարեկանից փոքր անդամներին և իրենց ընտանիքներին ստանալ անհրաժեշտ ծառայությունները: Health Net-ի խնամքի համակարգողը կարող է՝

- Պատմել ձեզ մատչելի ծառայությունների մասին
- Օգնել գտնել ցանցի մատակարարներ կամ արտացանցային մատակարարներ, երբ հարկավոր է
- Օգնել ժամադրություններ նշանակել
- Կազմակերպել բժշկական փոխադրում, որպեսզի երեխաները հասնեն իրենց ժամադրություններին
- Օգնել համակարգել Health Net-ի կողմից չապահովագրված խնամքը, սակայն կարող են հասանելի լինել Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի միջոցով հասանելի ծառայությունները, ինչպիսիք են՝
 - Բուժում և վերականգնողական ծառայություններ՝ հոգեկան առողջության ու թմրանյութերի օգտագործման խանգարումների (SUD) համար
 - Ատամնաբուժական խնդիրների բուժում, ներառյալ՝ օրթոդոնտիա

Այլ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի կամ այլ ծրագրերի միջոցով

Ատամնաբուժական ստուգումներ

Մաքուր պահեք ձեր մանկան լնդերը՝ ամեն օր նրբորեն մաքրելով լնդերը կտորով: Չորսից վեց ամիս անց սկսում է ատամների ծկթումը, և մանկան ատամները սկսում են դուրս գալ: Պետք է ժամադրություն նշանակեք ձեր երեխայի առաջին ատամնաբուժական այցի համար, հենց որ դուրս գա նրա առաջին ատամը կամ մեկ տարեկանում, որը որ ավելի շուտ տեղի ունենա:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Այս Medi-Cal ատամնաբուժական ծառայություններն անվճար են՝

0-ից 3 տարեկան երեխաների համար

- Երեխայի առաջին ատամնաբուժական այց
- Երեխայի առաջին ատամնաբուժական ստուգման համար
- Ատամնաբուժական ստուգումների համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ռենտգեններ
- Ատամների մաքրման համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ֆտորիդի կիրառման համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Պլոմբավորում
- Հեռացումների համար (ատամի հեռացում)
- Շտապ ատամնաբուժական ծառայությունների համար
- *Անզգայացման համար (եթե անհրաժեշտ է բժշկական տեսակետից)

4-ից 12 տարեկան երեխաների համար

- Ատամնաբուժական ստուգումների համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ռենտգեններ
- Ֆտորիդի կիրառման համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ատամների մաքրման համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Սեղանատամների պլոմբավորման համար
- Պլոմբավորում
- Արմատների խողովակների բուժման համար
- Հեռացումների համար (ատամի հեռացում)
- Շտապ ատամնաբուժական ծառայությունների համար
- *Անզգայացման համար (եթե անհրաժեշտ է բժշկական տեսակետից)

13-ից 20 տարեկան պատանիների համար

- Ատամնաբուժական ստուգումների համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ռենտգեններ
- Ֆտորիդի կիրառման համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Ատամների մաքրման համար (ամեն վեց ամիսը մեկ և երբեմն ավել)
- Օրթոդոնտիայի համար (բրեկետներ) նրանց համար, ովքեր որակավորվում են
- Պլոմբավորում
- Ատամնաապսակներ
- Արմատների խողովակների բուժման համար
- Մասնակի և ամբողջական պրոթեզներ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

5 | Երեխաների և պատանիների բարեկեցություն

- Խորը մաքրումներ
- Հեռացումների համար (ատամի հեռացում)
- Շտապ ատամնաբուժական ծառայությունների համար
- *Անզգայացման համար (եթե անհրաժեշտ է բժշկական տեսակետից)

*Մատակարարները պետք է անզգայացումը և ընդհանուր անեսթեզիան դիտարկեն, երբ նրանք որոշում և փաստում են, թե ինչու տեղային անզգայացումը բժշկական տեսանկյունից տեղին չէ, և ատամնաբուժական բուժումը նախապես հաստատված է կամ նախնական հաստատման կարիք չունի (նախնական թույլտվություն):

Սրանք են որոշ պատճառները, թե ինչու չի կարող օգտագործվել տեղային անզգայացումը, և փոխարենը կարող է օգտագործվել ընդհանուր անզգայացումը՝

- Ֆիզիկական, վարքագծային, զարգացման կամ հուզական վիճակ, որն արգելափակում է հիվանդին արձագանքել մատակարարի կողմից բուժում իրականացնելու փորձերին
- Բարդ վերականգնողական կամ վիրաբուժական միջամտություններ
- Չհամագործակցող երեխա
- Սուր վարակ ներարկման տեղում
- Ցավը վերահսկելու տեղային անզգայացնող միջոցի ձախողում

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք Medi-Cal Dental Հաճախորդների սպասարկման գիծ՝ 1-800-322-6384 (TTY 1-800-735-2922 կամ 711) հեռախոսահամարով, կամ այցելեք <https://smilecalifornia.org/>:

Լրացուցիչ կանխարգելիչ կրթության ուղեգրման ծառայություններ

Եթե անհանգստանում եք, որ ձեր երեխան դասերին լավ չի մասնակցում և լավ չի սովորում դպրոցում, գրուցեք ձեր երեխայի առաջնային խնամքի բժշկի, ուսուցիչների կամ դպրոցի ադմինիստրացիայի հետ: Ի լրումն Health Net-ի կողմից ապահովագրված բժշկական նպաստների, կան ծառայություններ, որոնք դպրոցը պետք է տրամադրի, որպեսզի օգնի ձեր երեխային սովորել և հետ չմնալ: Ձեր երեխային սովորելու հարցում օգնող ծառայությունների օրինակներից են՝

- Խոսքի և լեզվական ծառայություններ
- Աշխատանքային թերապիա
- Հոգեբանական ծառայություններ
- Օժանդակող տեխնոլոգիա
- Ֆիզիկական թերապիա



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

5 | Երեխաների և պատանիների բարեկեցություն

- Սոցիալական աշխատանքի ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Դպրոցի բուժքրոջ ծառայություններ
- Փոխադրում դպրոց և հետ

Այս ծառայությունները տրամադրվում և վճարվում են California-ի Կրթության վարչության կողմից: Ձեր երեխայի բժիշկների և ուսուցիչների հետ դուք կարող եք անհատականացված ծրագիր մշակել, որը լավագույնս կօգնի ձեր երեխային:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

6. Խնդիրների զեկուցում և լուծում

Գոյություն ունի խնդիրները զեկուցելու և լուծելու երկու տարբերակ՝

- Օգտագործեք **զանգատ (բողոք)**, երբ դուք Health Net-ի կամ մատակարարի հետ ունեք խնդիր, կամ խնդիր ունեք մատակարարից ստացված առողջական խնամքի կամ բուժման վերաբերյալ:
- Օգտագործեք բողոքարկում, երբ դուք համաձայն չեք ձեր ծառայությունները փոփոխելու կամ չապահովագրելու Health Net-ի որոշման հետ

Դուք իրավունք ունեք Health Net-ին բողոքներ և բողոքարկումներ ներկայացնել՝ ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելու համար: Սա չի դադարեցնում ձեր որևէ իրավական իրավունք կամ միջոց: Բողոք ներկայացնելու կամ խնդիրները զեկուցելու համար մենք խտրականություն չենք դրսևորի կամ վրեժխնդիր չենք լինի ձեր հանդեպ: Ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելը կօգնի մեզ բարելավել խնամքը բոլոր անդամների համար:

Դուք մշտապես պետք է առաջինը կապվեք Health Net-ի հետ՝ ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելու համար: Զանգահարեք մեզ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Տեղեկացրեք մեզ ձեր խնդրի մասին:

Եթե ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռ լուծված չէ 30 օր հետո, կամ դուք բավարարված չեք արդյունքներով, կարող եք զանգահարել California-ի Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC): Խնդրենք DMHC-ին վերանայել ձեր զանգատը կամ Անկախ բժշկական վերանայում (IMR) անցկացնել: Եթե ձեր խնդիրը հրատապ է, ինչպես օրինակ՝ ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգ, կարող եք զանգահարել DMHC՝ առանց սկզբից զանգատ կամ բողոքարկում ներկայացնելու Health Net-ին: Կարող եք զանգահարել DMHC 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891 կամ 711) հեռախոսահամարով կամ այցելել DMHC-ի <https://www.dmhc.ca.gov> կայքը մանրամասների համար:

California-ի Առողջական խնամքի ծառայությունների բաժինը (DHCS) Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Օմբուդսմենը կարող են նույնպես օգնել: Նրանք կարող են օգնել, եթե խնդիրներ ունեք առողջապահական ծրագրին միանալու, փոխելու կամ նրանից



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

հեռանալու վերաբերյալ: Նրանք նաև կարող են օգնել, եթե դուք տեղափոխվել եք, և խնդիրներ են առաջացել ձեր Medi-Cal-ը ձեր նոր վարչաշրջան տեղափոխելու ընթացքում: Կարող եք զանգահարել Medi-Cal Օմբուդսմենին երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 8 a.m.-ից մինչև 5 p.m.-ը, 1-888-452-8609 հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

Դուք կարող եք նաև ձեր Medi-Cal-ի իրավասության վերաբերյալ բողոք ներկայացնել ձեր վարչաշրջանի իրավասության գրասենյակ: Եթե համոզված չեք, թե ում կարող եք դիմել բողոքի վերաբերյալ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Ձեր առողջության ապահովագրության վերաբերյալ սխալ տեղեկությունները հաղորդելու համար խնդրում ենք զանգահարել Medi-Cal երկուշաբթիից ուրբաթ՝ 8 a.m.-ից մինչև 5 p.m.-ը, 1-800-541-5555 հեռախոսահամարով:

Գանգատներ

Գանգատ (կամ բողոք) է համարվում, երբ դուք խնդիր ունեք կամ բավարարված չեք Health Net-ից կամ մատակարարից ստացված ծառայություններից: Գանգատ ներկայացնելու համար ժամանակի սահմանափակում չկա: Դուք կարող եք գանգատ ներկայացնել Health Net-ին ցանկացած ժամանակ՝ հեռախոսով, գրավոր՝ փոստով, կամ առցանց: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը նույնպես կարող է գանգատ ներկայացնել ձեր փոխարեն՝ ձեր թույլատվությամբ:

- **Հեռախոսով.** զանգահարեք Health Net՝ 1-800-675-6110 (TTY՝ 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Տրամադրեք ձեր առողջապահական ծրագրի ID համարը, ձեր անունը և ձեր գանգատի պատճառը:
- **Փոստով.** զանգահարեք Health Net-ին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով և խնդրեք ուղարկել ձեզ ձևաթուղթը: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Անպայման ներառեք ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և ձեր գանգատի պատճառը: Տեղեկացրեք մեզ, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք մենք օգնել ձեզ:

Ուղարկեք ձևաթուղթը հետևյալ հասցեով՝

Health Net Appeals & Grievances

P.O. Box 10348

Van Nuys, CA 91410-0348

Ձեր բժշկի գրասենյակը կունենա գանգատի ձևաթղթերը:

- **Առցանց.** ացելեք Health Net-ի կայքը՝ www.healthnet.com:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե օգնության կարիք ունեք ձեր գանգատը լրացնելիս, մենք կարող ենք ձեզ օգնել: Մենք կարող են տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր գանգատը ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում Health Net-ը ձեզ նամակ կուղարկի՝ տեղեկացնելով, որ այն ստացել ենք: 30 օրվա ընթացքում մենք կուղարկենք մեկ այլ նամակ, որը կտեղեկացնի, թե ինչպես է լուծվել ձեր խնդիրը: Եթե դուք զանգահարում եք Health Net-ին բողոքի հետ կապված, որն առողջական խնամքի ապահովագրության մասին չէ, բժշկական տեսանկյունից անհրաժեշտություն է, փորձնական կամ հետազոտական բուժում, և ձեր բողոքը լուծված է մինչև հաջորդ աշխատանքային օրը, դուք հնարավոր է նամակ չստանաք:

Եթե ունեք հրատապ խնդիր, որը կապված է լուրջ առողջական խնդիրների հետ, մենք կսկսենք արագացված (արագ) վերանայում: Մենք որոշում կկայացնենք 72 ժամվա ընթացքում: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք մեզ 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր գանգատը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք որոշում կկայացնենք ձեր գանգատը մշակելու վերաբերյալ, և թե արդյոք արագացնել ձեր գանգատը, թե ոչ: Եթե որոշենք չարագացնել ձեր գանգատը, մենք կտեղեկացնենք ձեզ, որ կլուծենք ձեր գանգատը 30 օրվա ընթացքում: Դուք կարող եք ուղղակիորեն կապվել DMHC-ի հետ ցանկացած պատճառով, ներառյալ, եթե կարծում եք, որ ձեր մտահոգությունը համապատասխանում է արագացված վերանայման, Health Net-ը չի պատասխանում ձեզ 72 ժամվա ընթացքում, կամ եթե դուք դժգոհ եք Health Net-ի որոշումից:

Medi-Cal Rx դեղատան նպաստներին վերաբերող գանգատները ընթակա չեն Health Net-ի գանգատի գործընթացին և իրավասու չեն Անկախ բժշկական վերանայման Կառավարվող առողջական խնամքի բաժնի (DMHC) միջոցով: Անդամները կարող են Medi-Cal Rx դեղատան նպաստներին վերաբերող գանգատներ ներկայացնել՝ զանգահարելով 1-800-977-2273 հեռախոսահամարով (TTY 1-800-977-2273) և սեղմելով 7 կամ 711: Կամ այցելեք <https://Medi-Calrx.dhcs.ca.gov/home/> կայքը:

Դեղատան նպաստների հետ կապված բողոքները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ին, կարող են իրավասու լինել վերանայման Health Net-ի բողոքարկման և բողոքարկման գործընթացի և DMHC-ի հետ Անկախ բժշկական վերանայման միջոցով: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891): Կարող եք գտնել Անկախ բժշկական վերանայման/Գանգատի ձևաթուղթը և առցանց ցուցումներն առցանց՝ <https://www.dmhc.ca.gov/>:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբերվում է զանգատից: Բողոքարկումը Health Net-ին ուղղված հայտ է՝ վերանայելու և փոխելու որոշումը, որը կայացվել է հայցված ծառայությունների վերաբերյալ: Եթե մենք ուղարկել ենք Գործողության ծանուցագրի (NOA) նամակ, տեղեկացնելով ձեզ, որ մենք մերժում, հետաձգում, փոխում կամ ավարտում ենք ծառայությունը, և դուք համաձայն չեք մեր որոշման հետ, ապա կարող եք բողոքարկում խնդրել: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը նույնպես կարող է բողոքարկում խնդրել մեզանից ձեր փոխարեն՝ ձեր գրավոր թույլտվությամբ:

Դուք պետք է բողոքարկում խնդրեք Health Net-ից NOA-ի ստացման ամսաթվից 60 օրվա ընթացքում: Եթե մենք որոշենք նվազեցնել, կանգնեցնել կամ դադարեցնել ծառայությունը, որը դուք այժմ ստանում եք, դուք կարող եք շարունակել ստանալ ծառայությունը, քանի դեռ սպասում ենք ձեր բողոքարկման որոշմանը: Սա կոչվում է՝ Օգնության վճարումն առկախ է (Aid Paid Pending): Օգնության վճարումն առկախ կարգավիճակ ստանալու համար դուք պետք է բողոքարկում խնդրեք մեզանից NOA-ի ստացման ամսաթվից 10 օրվա ընթացքում, կամ նախքան այն ամսաթիվը, երբ մենք ասում ենք, որ դադարեցնելու ենք ձեր ծառայությունը, որը որ ավելի ուշ տեղի ունենա: Երբ այս հանգամանքներում բողոքարկում եք խնդրում, ձեր ծառայությունը կշարունակվի մինչև դուք սպասում եք ձեր բողոքարկման որոշմանը:

Կարող եք բողոքարկում ներկայացնել հեռախոսով, գրավոր՝ փոստով կամ առցանց.

- **Հեռախոսով.** զանգահարեք Health Net՝ 1-800-675- 6110 (TTY՝ 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Տրամադրեք ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և ծառայությունը, որը բողոքարկում եք:
- **Փոստով.** զանգահարեք Health Net-ին 1 -800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով և խնդրեք ուղարկել ձեզ ձևաթուղթը: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Անպայման ներառեք ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և ծառայությունը, որը բողոքարկում եք:

Ուղարկեք ձևաթուղթը հետևյալ հասցեով՝

Health Net Appeals & Grievances

P.O. Box 10348

Van Nuys, CA 91410-0348

Ձեր բժշկի գրասենյակն ունի բողոքարկման ձևաթղթերը:

- **Առցանց.** այցելեք Health Net-ի կայքը: Անցեք www.healthnet.com կայքը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե օգնության կարիք ունեք բողոքարկում խնդրելու կամ Օգնության վճարման առկաի կարգավիճակի հետ կապված, մենք կարող ենք ձեզ օգնել: Մենք կարող են տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Ձեր բողոքարկումը ստանալուց հինգ օրվա ընթացքում Health Net-ը ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ այն ստացված է: 30 օրվա ընթացքում մենք կտեղեկացնենք ձեզ բողոքարկման մեր որոշման մասին և ձեզ Բողոքարկման վճռի ծանուցագիր (NAR) նամակ կուղարկենք: Եթե մենք ձեզ բողոքարկման վերաբերյալ որոշում չտանք 30 օրվա ընթացքում, դուք կարող եք Նահանգային լսում խնդրել California-ի Սոցիալական ծառայությունների բաժնից (CDSS) կամ Անկախ բժշկական վերանայում (IMR) խնդրել DMHC-ից:

Բայց եթե նախ Նահանգային լսում եք խնդրում, և ձեր կոնկրետ խնդիրների լուծման համար լսումներն արդեն տեղի են ունեցել, դուք չեք կարող նույն հարցերի շուրջ DMHC-ից պահանջել IMR: Այս դեպքում վերջնական որոշումը կայացնում է Նահանգային լսումը: Բայց դուք դեռ կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե ձեր խնդիրները չեն համապատասխանում IMR-ին, նույնիսկ եթե Նահանգային լսումն արդեն տեղի է ունեցել:

Եթե դուք կամ ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք արագ որոշում կայացնենք, քանի որ բողոքարկումը լուծելուն հասկացված ժամանակը վտանգի է ենթարկում ձեր կյանքը, առողջությունը կամ գործառնական կարողությունը, ապա կարող եք խնդրել արագացված (արագ) վերանայում: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք որոշում կկայացնենք: Եթե առկա է հրատապ առողջապահական խնդիր, ինչպիսին է ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգը, ապա ձեզ հարկավոր չէ բողոքարկել Health Net նախքան DMHC-ին բողոք ներկայացնելը:

Ինչ անել, եթե համաձայն չեք բողոքարկման որոշման հետ

Եթե բողոքարկում եք ներկայացրել և ստացել եք NAR նամակ, որը տեղեկացնում է ձեզ, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ եթե NAR նամակ չեք ստացել, և 30 օրն արդեն անցել է, դուք կարող եք՝

- Նահանգային լսում խնդրել California-ի Սոցիալական ծառայությունների բաժնից (CDSS), և դատավորը կուսումնասիրի ձեր գործը: CDSS-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-800-743-8525 (TTY 1-800-952-8349): Կարող եք նաև Նահանգային լսում խնդրել



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

առցանց՝ <https://www.cdss.ca.gov> կայքում: Նահանգային լսում խնդրելու ավելի շատ եղանակներ կարելի է գտնել այս գլխի հետագա «Նահանգային լսումներ» բաժնում:

- Դուք կարող եք Անկախ բժշկական վերանայում/Գանգատ ներկայացնել Կառավարվող առողջական խնամքի բաժնին (DMHC), որպեսզի վերանայեն Health Net-ի որոշումը: Եթե ձեր բողոքը որակավորվում է DMHC-ի Անկախ բժշկական վերանայման (IMR) գործընթացի համար, ապա Health Net-ի մաս չհանդիսացող բժիշկը կուսումնասիրի ձեր գործը և որոշում կկայացնի, որը Health Net-ը պետք է կատարի:

DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891): Դուք կարող եք գտնել IMR/Բողոքի ձևը և հրահանգներն առցանց՝ <https://www.dmhc.ca.gov> կայքում:

Դուք ոչինչ չեք վճարում Նահանգային լսման կամ IMR-ի համար:

Դուք իրավասու եք թե՛ Նահանգային լսման, թե՛ և IMR-ի: Բայց եթե նախ Նահանգային լսում եք խնդրում, և ձեր կոնկրետ խնդիրների լուծման համար լսումներն արդեն տեղի են ունեցել, դուք չեք կարող նույն հարցերի շուրջ DMHC-ից պահանջել IMR: Այս դեպքում վերջնական որոշումը կայացնում է Նահանգային լսումը: Բայց դուք դեռ կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե խնդիրները չեն համապատասխանում IMR-ին, նույնիսկ եթե Նահանգային լսումն արդեն տեղի է ունեցել:

Ստորև ներկայացված բաժինները պարունակում են լրացուցիչ տեղեկություններ, թե ինչպես պետք է Նահանգային լսում և IMR խնդրել:

Medi-Cal Rx դեղատան նպաստներին վերաբերող գանգատները և բողոքարկումները չեն մշակվում Health Net-ի կողմից: Medi-Cal Rx դեղատան նպաստների վերաբերյալ բողոքներ և բողոքարկումներ ներկայացնելու համար գանգահարեք 1-800-977-2273

(TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711: Medi-Cal Rx-ի ենթակայության տակ դեղատան նպաստներին վերաբերող գանգատները և բողոքարկումները կարող են իրավասու լինել Անկախ բժշկական վերանայմանը (IMR) DMHC-ի հետ:

Եթե համաձայն չեք Medi-Cal Rx դեղատան նպաստներին վերաբերող որոշման հետ, կարող եք Նահանգային լսում խնդրել: Դուք չեք կարող DMHC-ից IMR խնդրել Medi-Cal Rx դեղատան նպաստի համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Գանգատներ և Անկախ բժշկական վերանայումներ (IMR) Կառավարվող առողջական խնամքի բաժնի (DMHC) միջոցով

IMR է համարվում, երբ արտաքին բժիշկը, ով չի առնչվում Health Net-ին, վերանայում է ձեր գործը: Եթե ցանկանում եք IMR, նախ պետք է բողոքարկեք Health Net-ին ոչ հրատապ խնդիրների համար: Եթե 30 օրացուցային օրվա ընթացքում չլսեք Health Net-ից, կամ եթե դժգոհ եք Health Net-ի որոշումից, ապա կարող եք IMR պահանջել: Դուք պետք է IMR խնդրեք բողոքարկման որոշման մասին ծանուցման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, բայց դուք ունեք ընդամենը 120 օր՝ Նահանգային լսում պահանջելու համար: Այսպիսով, եթե ցանկանում եք IMR և Նահանգային լսում, ներկայացրեք ձեր գանգատը որքան հնարավոր է շուտ:

Հիշեք, եթե նախ Նահանգային լսում եք խնդրում, և ձեր կոնկրետ խնդիրների լուծման համար լսումներն արդեն տեղի են ունեցել, դուք չեք կարող նույն հարցերի շուրջ DMHC-ից պահանջել IMR: Այս դեպքում վերջնական որոշումը կայացնում է Նահանգային լսումը: Բայց դուք դեռ կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե խնդիրները չեն համապատասխանում IMR-ին, նույնիսկ եթե Նահանգային լսումն արդեն տեղի է ունեցել:

Հնարավոր է, որ կարողանաք անմիջապես IMR ստանալ՝ առանց սկզբից բողոքարկում ներկայացնելու Health Net-ին: Սա այն դեպքերում է, երբ ձեր առողջական մտահոգությունը հրատապ է, ինչպես օրինակ՝ ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգը:

Եթե ձեր գանգատը DMHC-ին չի որակավորվում IMR-ի համար, DMHC միևնույն է կվերանայի ձեր գանգատը՝ համոզվելու համար, որ Health Net-ը ճիշտ որոշում է կայացրել, երբ դուք բողոքարկել էիք ծառայությունների մերժումը:

California-ի Կառավարվող առողջական խնամքի բաժինը պատասխանատու է առողջապահական խնամքի ծառայության ծրագրերը կարգավորելու համար: Եթե ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, ապա, նախքան բաժին դիմելը, զանգահարեք ձեր առողջապահական ծրագիր 1-800-675-6110(TTY 711) հեռախոսահամարով, և օգտագործեք ձեր առողջապահական ծրագրի բողոքի գործընթացը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի խոչընդոտում, որպեսզի դուք օգտվեք նաև հնարավոր որևէ այլ իրավական իրավունքներից կամ միջոցներից: Եթե բողոք ներկայացնելու օգնության կարիք ունեք, որը կապված է արտակարգ իրավիճակի հետ, բողոք, որը բավարար կերպով չի լուծվել ձեր առողջապահական ծրագրի կողմից, կամ բողոք, որը չի լուծվել ավելի քան 30 օրվա ընթացքում, կարող եք զանգահարել բաժին օգնության համար: Դուք կարող եք



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

նաև իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման (IMR) համար: Եթե որակավորվում եք IMR համար, IMR գործընթացը կապահովի անկողմնակալ վերանայում այն բժշկական որոշումների մասով, որոնք ընդունվել են առողջապահական ծրագրի կողմից՝ կապված առաջարկված ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտության հետ, ապահովագրության որոշումների այն բուժումների վերաբերյալ, որոնք փորձարարական են կամ հետազոտական բնույթի, ինչպես նաև վճարման հետ կապված վեճերի հրատապ կամ անհապաղ բժշկական ծառայությունների համար: Բաժին ունի նաև անվճար հեռախոսահամար (1-888-466-2219) և TDD գիծ (1-877-688-9891) լսողության կիսոսքի խնդիրներ ունեցողների համար: Բաժին www.dmh.ca.gov կայքում կան գանգատի ձևաթղթեր, IMR դիմումի ձևաթղթեր և առցանց հրահանգներ:

Նահանգային լսումներ

Նահանգային լսումը Health Net-ի և California-ի Սոցիալական ծառայությունների վարչության (CDSS) դատավորի հետ հանդիպում է: Դատավորը կօգնի լուծել ձեր խնդիրը և որոշել՝ արդյոք Health Net-ը ճիշտ որոշում է կայացրել, թե ոչ: Դուք իրավունք ունեք Նահանգային լսում խնդրել, եթե արդեն բողոքարկում եք խնդրել Health Net-ից, սակայն դեռ բավարարված չեք մեր որոշմամբ կամ, եթե դուք չեք ստացել ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում 30 օրվա ընթացքում:

Դուք պետք է Նահանգային լսում խնդրեք NAR նամակի ամսաթվից 120 օրվա ընթացքում: Եթե մենք ձեզ Օգնության վճարումն առկաի կարգավիճակ տանք ձեր բողոքարկման ընթացքում, և դուք ցանկանաք շարունակել այն մինչև ձեր Նահանգային լսման որոշումը, դուք պետք է Նահանգային լսում խնդրեք մեր NAR նամակի ամսաթվից 10 օրվա ընթացքում, կամ նախքան այն ամսաթիվը, երբ մենք ասել ենք որ ձեր ծառայությունները դադարեցվելու են, որը որ ավելի ուշ տեղի ունենա:

Եթե ձեզ օգնություն է հարկավոր հավաստիանալու, որ Օգնության վճարումն առկաի կարգավիճակը շարունակվելու է, մինչև Նահանգային լսման վերջնական որոշումը, դիմեք Health Net օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ գանգահարելով 1-800-675-6110 հեռախոսահամարով: Եթե լավ չեք լսում կամ խոսում, գանգահարեք TTY 711: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է խնդրել Նահանգային լսում ձեզ համար՝ ձեր գրավոր թույլտվությամբ:

Երբեմն կարող եք Նահանգային լսում խնդրել առանց մեր բողոքարկման գործընթացի:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Օրինակ, կարող եք Նահանգային լսում խնդրել առանց սկզբից բողոքարկման գործընթացն իրականացնելու, եթե Health Net-ը չի տեղեկացրել ձեզ պատշաճ կերպով կամ ժամանակին ձեր ծառայությունների մասին: Մա կոչվում է Համարված սպառում: Ահա Համարված սպառման մի քանի օրինակներ.

- Մենք ձեզ NOA կամ NAR նամակը չենք ուղարկել ձեր նախընտրած լեզվով
- Մենք սխալ ենք գործել, որն ազդում է ձեր որևէ իրավունքի վրա
- Մենք ձեզ NOA նամակ չենք ուղարկել
- Մենք ձեզ NAR նամակ չենք ուղարկել
- Մենք NOA նամակում սխալ ենք թույլ տվել
- Մենք որոշում չենք կայացրել ձեր բողոքարկման մասին 30 օրվա ընթացքում
- Մենք որոշել ենք, որ ձեր գործը հրատապ է, սակայն չենք պատասխանել ձեր բողոքարկմանը 72 ժամվա ընթացքում

Դուք կարող եք Նահանգային լսում խնդրել այս եղանակներով.

- **Հեռախոսով.** զանգահարեք Նահանգային լսումների բաժին՝ 1-800-743-8525 (TTY 1-800-952-8349 կամ 711) հեռախոսահամարով:

- **Փոստով.** լրացրեք ձեր բողոքարկման ծանուցման հետ տրամադրված ձևը և ուղարկեք այստեղ՝

California Department of Social Services
State Hearings Division
744 P Street, MS 9-17-433
Sacramento, CA 95814

- **Առցանց.** լսում հայցեք առցանց՝ www.cdss.ca.gov

- **Էլ. փոստով.** լրացրեք ձեր բողոքարկման ծանուցման հետ տրամադրված ձևը և ուղարկեք էլ. փոստով՝ Scopeofbenefits@dss.ca.gov

- Նշում. եթե այն ուղարկում եք էլ. փոստով, վտանգ կա, որ Նահանգային լսումների բաժնից բացի որևէ մեկը կարող է տեսնել ձեր էլ. փոստը: Ձեր հարցումն ուղարկելու համար օգտագործեք ավելի ապահով մեթոդ:

- **Ֆաքսով.** լրացրեք ձեր բողոքարկման ծանուցման հետ տրամադրված ձևը և ֆաքսով ուղարկեք Նահանգային լսումների բաժին՝ 1-833-281 կամ անվճար՝ 1-833-281-0903



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե օգնության կարիք ունեք Նահանգային լսում խնդրելու հարցում, մենք կարող ենք ձեզ օգնել: Մենք կարող են տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով:

Նիստի ժամանակ դուք դատավորին կպատմեք, թե ինչու համաձայն չեք Health Net-ի որոշման հետ: Health Net-ը դատավորին կպատմի, թե ինչպես ենք մենք կայացրել մեր որոշումը: Ձեր գործի մասով որոշում կայացնելու համար դատավորից կարող է պահանջվել մինչև 90 օր: Health Net-ը պետք է հետևի դատավորի որոշմանը:

Եթե ցանկանում եք, որ CDSS-ն արագ որոշում կայացնի, քանի որ Նահանգային լսմանը հատկացված ժամանակը վտանգի է ենթարկում ձեր կյանքը, առողջությունը կամ գործառական կարողությունը, ապա դուք, ձեր լիազորված ներկայացուցիչը կամ ձեր մատակարարը կարող եք կապվել CDSS-ի հետ և խնդրել արագացված (արագ) Նահանգային լսում: DSS-ը պետք է որոշում կայացնի ձեր գործի ամբողջական հայտը Health Net-ից ստանալուց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր հետո:

Խարդախություն, սպառում և չարաշահում

Եթե դուք կասկածում եք, որ մատակարարը կամ որևէ այլ անձ, ով ստանում է Medi-Cal, կատարել է խարդախություն, սպառում կամ չարաշահում, ապա դուք ունեք այն զեկուցելու պարտականություն՝ զանգահարելով գաղտնի անվճար հեռախոսահամարով՝ 1-800-822-6222 կամ զանգատ ներկայացնելով առցանց՝ <https://www.dhcs.ca.gov/>:

Մատակարարի խարդախությունը, սպառումը և չարաշահումը ներառում են՝

- Բժշկական արձանագրությունների կեղծում
- Ավելի շատ դեղորայքի նշանակում, քան անհրաժեշտ է բժշկական տեսակետից
- Ավելի շատ առողջական խնամքի ծառայությունների տրամադրում, քան անհրաժեշտ է բժշկական տեսակետից
- Չմատուցված ծառայությունների համար հաշվի ներկայացում
- Մասնագիտական ծառայությունների համար հաշվի ներկայացում, երբ մասնագետը չի մատուցել ծառայությունը
- Անդամներին անվճար կամ զեղչով պարագաների կամ ծառայությունների առաջարկում՝ անդամի կողմից մատակարարի ընտրության վրա ազդելու նպատակով
- Անդամի առաջնային խնամքի մատակարարի փոփոխություն՝ առանց անդամի իմացության



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Նպաստներ ստացող անձի կողմից խարդախությունը, սպառումը և չարաշահումը ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Առողջապահական ծրագրի ID քարտի կամ Medi-Cal Նպաստների նույնականացման քարտի (BIC) որևէ այլ անձի տրամադրումը, վաճառումը կամ փոխանցումը
- Մեկից ավելի մատակարարի կողմից նման կամ նույն բուժումների կամ դեղորայքի ստացումը
- Շտապ օգնության սենյակից օգտվելը, երբ արտակարգ իրավիճակ չկա
- Մեկ այլ անձի Սոցիալական ապահովության համարի կամ առողջապահական ծրագրի ID համարի օգտագործումը
- Բժշկական և ոչ բժշկական տրանսպորտով ուղևորություններ կատարելը ոչ առողջապահական ծառայությունների համար, Medi-Cal-ով չապահովված ծառայությունների համար, կամ երբ չկա բժշկական նշանակում կամ դեղատոմս վերցնելու համար:

Խարդախություն, սպառում կամ չարաշահում զեկուցելու համար գրեք այն անձի անունը, հասցեն և ID համարը, ով իրականացրել է խարդախություն, սպառում կամ չարաշահում: Որքան հնարավոր է շատ տեղեկություն տրամադրեք անձի մասին, օրինակ՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե նա մատակարար է: Տրամադրեք իրադարձությունների ամսաթվերը և ճշգրիտ կերպով հակիրճ ներկայացրեք տեղի ունեցածը:

Ուղարկեք ձեր զեկույցը հետևյալ հասցեով՝

Centene Special Investigations Unit

7700 Forsyth Blvd.

Clayton, MO 63105

1-866-685-8664

Special_Investigations_Unit@centene.com



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

7. Իրավունքներ և պարտականություններ

Որպես Health Net-ի անդամ՝ դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այս գլուխը բացատրում է այս իրավունքներն ու պարտականությունները: Այս գլուխը նաև ներառում է իրավական ծանուցագրերը, որոնց իրավունքն ունեք՝ ունեք որպես Health Net-ի անդամ:

Ձեր իրավունքները

Սա ձեր՝ որպես Health Net-ի անդամի իրավունքները և պարտականություններն են:

- Հարգանքով և արժանապատվությամբ վերաբերվելու համար՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ձեր գաղտնիության իրավունքը և ձեր բժշկական տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը, ինչպիսիք են բժշկական պատմությունը, հոգեկան և ֆիզիկական վիճակը կամ բուժումը, ինչպես նաև վերարտադրողական կամ սեռական առողջությունը:
- Առողջապահական ծրագրի և դրա ծառայությունների, ներառյալ ապահովագրված ծառայությունների, մատակարարների, պրակտիկանտների, ինչպես նաև անդամների իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվություն տրամադրվելու համար
- Ստանալ ամբողջությամբ թարգմանված անդամի գրավոր տեղեկատվություն ձեր նախընտրած լեզվով, ներառյալ բողոքների և բողոքարկումների վերաբերյալ բոլոր ծանուցումները
- Խորհուրդներ տալ Health Net-ի անդամների իրավունքների և պարտականությունների քաղաքականությունների վերաբերյալ:
- Ի վիճակի լինել ընտրել առաջնային խնամքի մատակարար Health Net-իցանցից:
- Ժամանակին խնամք ստանալ ցանցի մատակարարներից



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

- Մասնակցել ձեր առողջական խնամքի վերաբերյալ որոշումների կայացմանը, ներառյալ՝ բուժման մերժման իրավունքը
- Բարձրացնել բանավոր կամ գրավոր բողոքներ կազմակերպության կամ ստացված խնամքի վերաբերյալ
- Իմանալ Health Net-ի կողմից բժշկական խնամքի խնդրանքը մերժելու, հետաձգելու, դադարեցնելու (ավարտելու) կամ որոշումը փոփոխելու բժշկական պատճառը:
- Խնամքի համակարգում ստանալ
- Հայցել բողոքարկում՝ կապված ծառայությունների կամ նպաստների մերժման, դադարեցման կամ սահմանափակման առնչությամբ
- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական և գրավոր թարգմանչական ծառայություններ ձեր լեզվով
- Խնդրել անվճար իրավաբանական օգնություն ձեր տեղային իրավաբանական օգնության գրասենյակում կամ այլ խմբերից:
- Ձևակերպել նախօրոք հրահանգներ
- Նահանգային լսում խնդրել, եթե ծառայությունը կամ նպաստը մերժվել է, և դուք արդեն բողոքարկում եք ներակայացրել Health Net-ին, սակայն դեռ բավարարված չեք որոշմամբ, կամ եթե դուք չեք ստացել ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում 30 օր հետո, ներառյալ տեղեկություններ հանգամանքների մասին, երբ հնարավոր է արագացված լսում անցկացնել
- Դադարեցնել անդամակցությունը (լքել) Health Net-ին և, խնդրանքի դեպքում, տեղափոխվել մեկ այլ առողջապահական ծրագիր վարչաշրջանում
- Հասանելիություն ունենալ համաձայնությամբ տրվող անչափահասների ծառայություններին
- Գրավոր կերպով ստանալ անդամների տեղեկատվական անվճար նյութերն այլ ձևաչափով (ինչպես օրինակ՝ բրայլ, խոշոր տառերով տպված տեքստը, ձայնագրությունը և մատչելի էլեկտրոնային ձևաչափերը) խնդրանքի դեպքում և այնքան ժամանակում, որը հարկավոր է պահանջվող ձևաչափը պատրաստելու համար՝ համաձայն Բարեկեցության և հաստատությունների (W&I) օրենքի 14182 (b)(12) բաժնի
- Ձերձ մնալ որևէ ֆիզիկական սահմանափակումից կամ մեկուսացումից, որը կարող է օգտագործվել որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարավետության կամ վրեժխնդրության միջոց
- Ազատորեն քննարկել հասանելի բուժման ընտրանքների և այլընտրանքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք ներկայացված են ձեր վիճակին և հասկանալու կարողությանը համապատասխան՝ անկախ արժեքից կամ ապահովագրությունից



Ձանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- Տեսնել և ստանալ ձեր բժշկական արձանագրությունների պատճենը և հայցել, որպեսզի դրանք փոփոխվեն կամ ուղղվեն՝ ինչպես սահմանված է 45 Դաշնային կանոնակարգերի (CFR) օրենքի 164.524 և 164.526 բաժիններում
- Ազատ կիրառել այս իրավունքներն առանց բացասական կերպով ազդելով, թե ինչպես է ձեզ վերաբերվում Health Net-ը, ձեր մատակարարները կամ Նահանգը:
- Ունենալ հասանելիություն ընտանիքի պլանավորման ծառայություններին, Անկախ ծննդատներին, Դաշնային որակավորված առողջական կենտրոններին, Հնդկացիների առողջական խնամքի մատակարարներ, բուժքույր-մանկաբարձի ծառայություններին, Գյուղական առողջական կենտրոններին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ծառայություններին և արտակարգ իրավիճակների ծառայություններին Health Net-իցանցից դուրս՝ համաձայն դաշնային օրենքի
- Մերժված պահանջի բողոքարկում պահանջելու համար ձեր ստացած ծանուցման օրվանից մինչև 60 օր: Այս ծանուցումը կոչվում է «Անբարենպաստ օգուտի որոշման ծանուցում (NABD)»: Բողոքարկման գործընթացն իրականացվում է Նահանգային արդար լսումների միջոցով: Դուք կարող եք նաև հարցնել, թե ինչպես շարունակել ձեր առողջական խնամքը Բողոքարկման գործընթացում

Ձեր պարտականությունները

Health Net-ի անդամներն ունեն հետևյալ պարտականությունները.

- **Լինել քաղաքավարի և հարգալից:** Դուք պարտավոր եք քաղաքավարությամբ ու հարգանքով վերաբերվել ձեր բժշկին, բոլոր մատակարարներին ու անձնակազմին: Դուք պատասխանատու եք ձեր այցելությունների ժամանակին լինելու համար: Այցելությունից առնվազն 24 ժամ առաջ զանգահարեք ձեր բժշկի գրասենյակ՝ չեղարկելու կամ հետաձգելու համար:
- **Տրամադրել արդի, ճշգրիտ ու ամբողջական տեղեկություններ:** Դուք պարտավոր եք ճշգրիտ ու հնարավորինս ամբողջական տեղեկություն տալ ձեր բոլոր մատակարարներին և Health Net-ին: Դուք պարտավոր եք պարբերական բժշկական ստուգում անցնել և ձեր բժշկին տեղյակ պահել ձեր առողջական խնդիրների մասին, նախքան դրանց լրջանալը:
- **Հետևել ձեր բժշկի խորհուրդներին և մասնակցել ձեր խնամքին:** Դուք պատասխանատու եք ձեր բժշկի հետ ձեր առողջական կարիքների մասին խոսելու համար: Աշխատել ձեր բժշկի հետ՝ նպատակները մշակելու և համաձայնեցնելու համար: Ամեն ինչ արեք ձեր



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Եթե ձեր նախընտրած լեզվով թարգմանություն հասանելի չէ, Health Net-ից պահանջվում է բանավոր օգնություն առաջարկել ձեր նախընտրած լեզվով, որպեսզի կարողանաք հասկանալ ստացած տեղեկատվությունը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Երրորդ կողմի պատասխանատվություն

Health Net-ը չի փորձի վերականգնել անդամին վճարված ապահովագրված ծառայությունների համար միջոցները, եթե վերականգնումը ներառում է երրորդ կողմ: Օրինակ՝ աշխատանքային վնասվածքների դեպքում բժշկական օգնությունը կամ ավտովթարի համար վճարված ապահովագրական գումարը: Սակայն Health Net-ը կտեղեկացնի DHCS-ին և կօգնի նրանց վերականգնել միջոցները: Ակնկալվում է, որ անդամները կօգնեն Health Net-ին և DHCS-ին նման դեպքերում:

Անկախ կապալառուներ

Health Net-ն առողջական խնամքի մատակարար չէ: Ձեր բժիշկը, օրինակ, առողջապահական խնամքի մատակարար է: Health Net-ը պայմանագրեր է կնքում բժիշկների, հիվանդանոցների և այլ առողջապահական խնամքի մատակարարի հետ: Այս մատակարարները չեն աշխատում Health Net-ի համար: Health Net-ը և նրա աշխատակիցները չեն աշխատում որևէ առողջական խնամքի մատակարարի մոտ: Health Net-ը պատասխանատվություն չի կրում որևէ առողջապահական ծառայություններ մատակարարի անօրինական գործողությունների համար:

Առողջական խնամքի ծրագրի խարդախություն

Առողջական խնամքի ծրագրի խարդախությունը սահմանվում է որպես մատակարարի, անդամի, գործատուի կամ նրանց անունից գործող որևէ անձի կողմից խաբեության կամ սխալի ներկայացում: Դա քրեական հանցագործություն է, որը կարող է դատական կարգով հետապնդելի լինել: Ցանկացած անձ, ով իր կամքով և գիտակցաբար ներգրավվում է այնպիսի գործողության մեջ, որի նպատակն է վնաս հասցնել առողջական խնամքի ծրագրին՝ ներկայացնելով սխալ կամ խաբուսիկ տվյալներ պարունակող հայց, մեղադրվում է ապահովագրության խարդախություն կատարելու մեջ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման

հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Եթե մտահոգություններ ունեք հաշվի կամ Նպաստների բացատրության ձևաթղթի վրա որևէ գումարների մասին, կամ եթե գիտեք կամ կասկածում եք որևէ ապօրինի գործունեություն, զանգահարեք մեր ծրագրի խարդախության թեժ գիծ՝ 1-866-685-8664 անվճար հեռախոսահամարով: Խարդախություն թեժ գիծն աշխատում է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր զանգերը խիստ գաղտնի են:

Խնամքի խախտում

Health Net-ի վերահսկողությունից դուրս բնական աղետը կամ արտակարգ իրավիճակները կարող են խաթարել ձեր խնամքը: Health Net-ը կպահպանի California-ի պահանջները՝ տրամադրելու կամ կազմակերպելու առողջապահական ծառայություններ և պարագաներ հայտարարված արտակարգ դրության ընթացքում: Եթե ձեր բնակության վայրում արտակարգ դրություն է հայտարարված, օգնության համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին՝ 1800-675-6110 (TTY 711): Արտակարգ իրավիճակների դեպքում դիմեք մոտակա բժշկին կամ հիվանդանոցին:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

8. Կարևոր հեռախոսահամարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

Կարևոր հեռախոսահամարներ

- Health Net-ի Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)
- Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711

Ծառայություններ հաշմանդամների համար

- California-ի հեռախոսական չի փոխանցման ծառայություն (CRS)՝ TTY/TDD՝ 711
- Sprint 1-888-877-5379 (ձայնային)
- MCI 1-800-735-2922 (ձայնային)
- Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների ակտի (ADA) մասին տեղեկություններ՝ 1-800-514-0301 (ձայնային), 1-800-514-0383 (TDD)

California-ի Երեխաների ծառայություններ (CCS ծրագիրը)

- Amador վարչաշրջան՝ 1-209-223-6630
- Calaveras վարչաշրջան՝ 1-209-754-6460
- Inyo վարչաշրջան՝ 1-760-873-7868
- Los Angeles վարչաշրջան՝ 1-800-288-4584
- Mono վարչաշրջան՝ 1-760-924-1841
- Sacramento վարչաշրջան՝ 1-916-875-9900



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

- San Joaquin վարչաշրջան՝ 1-209-468-3900
- Stanislaus վարչաշրջան՝ 1-209-558-7515
- Tulare վարչաշրջան՝ 1-559-685-5800
- Tuolumne վարչաշրջան՝ 1-209-533-7404

Երեխայի առողջության և հաշմանդամության կանխման (CHDP) ծրագիր

- Amador վարչաշրջան՝ 1-209-223-6630
- Calaveras վարչաշրջան՝ 1-209-754-6460
- Inyo վարչաշրջան՝ 1-760-873-7868
- Los Angeles վարչաշրջան՝ 1-800-993-2437
- Mono վարչաշրջան՝ 1-760-924-1841
- Sacramento վարչաշրջան՝ 1-916-875-7151
- San Joaquin վարչաշրջան՝ 1-209-468-8335
- Stanislaus վարչաշրջան՝ 1-209-558-8860
- Tulare վարչաշրջան՝ 1-559-685-5800
- Tuolumne վարչաշրջան՝ 1-209-533-7404

California-ի նահանգային ծառայություններ

- DHCS Օմբուդսմենի գրասենյակ՝ 1-888-452-8609
- Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-800-952-5253
- Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC)՝ 1-888-466-2219 (1-888-HMO-2219)

Սոցիալական ապահովության վարչություն

- Հավելյալ ապահովության եկամուտ (SSI)՝ 1-800-772-1213, TTY/TDD՝ 1-800-325-0778

Amador վարչաշրջան

- Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-209-223-6550
Հոգեկան առողջության ծառայություններ՝ 1-888-310-6555

Calaveras վարչաշրջան

- Առողջապահության և մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-209-754-6448
Հոգեկան առողջության ծառայություններ՝ 1-800-499-3030

Inyo վարչաշրջան

- Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-760-872-1394
Հոգեկան առողջության ծառայություններ՝ 1-800-841-5011



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Los Angeles վարչաշրջան

- Հասարակական սոցիալական ծառայությունների բաժին (DPSS)
- Կենտրոնական օգնության գիծ (ներառում է լեզվական ծառայությունները)՝ 1-877-481-1044
- DPSS Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-866-613-3777, 1-310-258-7400
- Los Angeles վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժին՝ 1-800-854-7771

Mono վարչաշրջան

- Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-760-924-1770 (հարավային վարչաշրջանի գրասենյակ), 1-760-932-5600 (հյուսիսային վարչաշրջանի գրասենյակ)
- Հոգեկան առողջության ծառայություններ՝ 1-800-687-1101

Sacramento վարչաշրջան

- Մարդու օգնության բաժին՝ 1-800-560-0976
- Առողջապահության և մարդու ծառայությունների բաժին (Հոգեկան առողջություն)՝ 1-888-881-4881

San Joaquin վարչաշրջան

- Հասարակական առողջության բաժին՝ 1-209-468-3400
- Վարքագծային առողջություն՝ 1-888-468-9370
- Մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-209-468-1000

Stanislaus վարչաշրջան

- Համայնքային ծառայությունների գործակալություն՝ 1-877-652-0734
- Վարքագծային առողջության և վերականգնողական ծառայություններ՝ 1-888-376-6246

Tulare վարչաշրջան

- Առողջապահության և մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-800-540-6880
- Հոգեկան առողջության բաժին՝ 1-800-320-1616

Tuolumne վարչաշրջան

- Հանրային առողջություն՝ 1-209-533-7401
- Վարքագծային առողջության բաժին՝ 1-209-533-6245



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բառեր, որոնք պետք է իմանալ

Ակտիվ երկունք. Ժամանակահատված, երբ հղի անդամը ծննդաբերության երեք փուլերում է, և կամ չի կարող անվտանգ կերպով ժամանակին տեղափոխվել մեկ այլ հիվանդանոց նախքան ծննդաբերությունը, կամ տեղախոխումը կարող է ազդել անդամի կամ դեռ չծնված երեխայի առողջության և անվտանգության վրա:

Սուր. կարճ, հանկարծակի բժշկական վիճակ, որը պահանջում է անհապաղ բժշկական ուշադրություն:

Ամերիկյան հնդկացի. անհատ, որը համապատասխանում է «հնդկացի» սահմանմանը՝ ըստ դաշնային օրենքի 42 CFR հատված 438.14-ի, որը սահմանում է անձին, որպես «հնդկացի», եթե անձը համապատասխանում է հետևյալին՝

- Դաշնայնորեն ճանաչված հնդկացի տոհմի անդամ է
- Բնակվում է քաղաքային կենտրոնում և համապատասխանում է հետևյալից մեկին կամ ավելիին՝
 - Տոհմի, խմբի կամ հնդկացիների այլ կազմակերպված խմբի անդամ է, ներառյալ այն տոհմերն ու խմբերը, որոնք դադարեցվել են 1940-ից ի վեր, և նրանք, որոնք այժմ և ապագայում ճանաչվում են իրենց բնական նահանգի կողմից, կամ ով նման անդամի առաջին կամ երկրորդ աստիճանի ժառանգն է
 - Էսկիմո, կամ Ալեուտ, կամ Ալյասկայի այլ բնիկ է
 - Ներքին գործերի նախարարի կողմից համարվում է հնդկացի
- Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարի կողմից մշակված կարգադրմամբ սահմանվում է հնդկացի, կամ
- Ներքին գործերի նախարարի կողմից համարվում է հնդկացի
- Առողջության և մարդու ծառայությունների նախարարի կողմից համարվում է հնդկացի Հնդկացիների առողջական խնամքի ծառայությունների համար որակավորվելու նպատակով, ներառյալ California-ի հնդկացի, Էսկիմո, կամ Ալեուտ, կամ Ալյասկայի այլ բնիկ:

Բողոքարկում. անդամի կողմից Health Net-ին ուղղված հայտ՝ վերանայելու և փոխելու որոշումը, որը կայացվել է հայցված ծառայության ապահովագրության վերաբերյալ:



Չանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Վարքագծային առողջության ծառայություններ. ներառում են մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (SMHS), ոչ մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (NSMHS) և թմրանյութերի օգտագործման խանգարման (SUD) բուժման ծառայություններ՝ անդամների հոգեկան և հուզական բարեկեցությունը աջակցելու համար: NSMHS-ը տրամադրվում է առողջապահական ծրագրի միջոցով՝ թեթևից մինչև միջին ծանրության հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անդամների համար: SMHS-ը տրամադրվում է վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագրերի (MHP) միջոցով այն անդամների համար, ովքեր ունեն ծանր խանգարում կամ հոգեկան առողջության խանգարման պատճառով ֆունկցիոնալ վատթարացման բարձր վտանգ: Անհետաձգելի հոգեկան առողջության ծառայությունները ներառված են, ներառյալ գնահատումները և բուժումը արտակարգ իրավիճակներում: Ձեր շրջանը նաև մատուցում է ակոհոլի կամ թմրանյութերի օգտագործման դեմ պայքարի ծառայություններ, որոնք կոչվում են SUD ծառայություններ:

Նպաստներ. առողջական խնամքի ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրված են այս առողջապահական ծրագրով:

California-ի Երեխաների ծառայություններ (CCS). Medi-Cal ծրագիր, որը տրամադրում է ծառայություններ որոշակի առողջական վիճակներ, հիվանդություններ կամ քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող մինչև 21 տարեկան երեխաներին:

Գործի կառավարիչ. գրանցված բուժքույրեր կամ սոցիալական աշխատողներ, որոնք կարող են օգնել անդամին հասկանալ հիմնական առողջական խնդիրները և կազմակերպել խնամքն անդամի մատակարարների հետ:

Վկայագրված բուժքույր մանկաբարձուհի (CNM). անձ, ով լիցենզավորվել է որպես գրանցված բուժքույր և հավաստագրված բուժքույր-մանկաբարձ California-ի գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Հավաստագրված բուժքույր-մանկաբարձին թույլ է տրվում մասնակցել նորմալ ծննդաբերությանը:

Քիրոպրակտոր. ողնաշարը մանուալ թերապիայի միջոցով բուժող մատակարար:

Քրոնիկական վիճակ. հիվանդություն կամ այլ բժշկական խնդիր, որն ամբողջովին չի կարող բուժվել կամ որը ժամանակի ընթացքում վատթարանում է, կամ պահանջում է բուժում, որպեսզի անդամի վիճակը չբարդանա:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Կլինիկա. հաստատություն, որն անդամները կարող են ընտրել որպես իրենց առաջնային խնամքի մատակարար (PCP): Այն կարող է լինել կա՛մ Դաշնային որակավորված առողջապահական կենտրոն (FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջական կլինիկա (RHC), Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP), կա՛մ առաջնային խնամքի այլ հաստատություն:

Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS). ամբուլատոր, հաստատությունում տրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի, սոցիալական ծառայությունների, թերապիաների, անձնական խնամքի, ընտանիքների/խնամակալների ուսուցման և աջակցության, սնուցման ծառայությունների, փոխադրման և այլ ծառայություններ անդամների համար, որոնք որակավորվում են:

Համայնքային աջակցություն. Համայնքային աջակցությունները ծառայություններ են, որոնք օգնում են բարելավել անդամների ընդհանուր առողջությունը: Նրանք մատուցում են առողջապահական սոցիալական կարիքների համար ծառայություններ, ինչպիսիք են բնակարանը, սնունդը և անձնական խնամքը: Նրանք օգնում են համայնքի անդամներին՝ կենտրոնանալով առողջության, կայունության և անկախության խթանման վրա:

Գանգատ. անդամի կողմից ծառայության վերաբերյալ բանավոր կամ գրավոր դժգոհության արտահայտություն, որը կարող է ներառել, բայց չսահմանափակվելով՝

- մատուցվող խնամքի կամ ծառայությունների որակը,
- փոխադրեցություններ մատակարարի կամ աշխատակցի հետ,
- Անդամի իրավունքը՝ վիճարկելու Health Net-ի, վարչաշրջանի հոգեկան առողջության կամ թմրամոլության խանգարման ծրագրի կամ Medi-Cal մատակարարի կողմից առաջարկված ժամանակի երկարաձգումը:

Գանգատը և բողոքը նույնն են:

Խնամքի շարունակականություն. Ծրագրի անդամի կարողությունը շարունակել ստանալ Medi-Cal ծառայություններ իրենց գոյություն ունեցող մատակարարից մինչև 12 ամիս, եթե մատակարարը և Health Net-ը համաձայնվում են:

Պայմանագրային դեղերի ցանկ (CDL). Medi-Cal Rx-ի հաստատված դեղերի ցանկը, որից մատակարարը կարող է պատվիրել անդամին անհրաժեշտ ապահովագրված դեղեր:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Նպաստների համակարգում (COB). որոշման գործընթացը, թե որ ապահովագրական ծածկույթը (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտականություններ առողջության ապահովագրության մեկից ավելի տեսակի ծածկույթ ունեցող անդամների համար:

Համավճար (համատեղ վճար). անդամի կողմից արվող վճարում, սովորաբար ծառայության ժամանակ, ի լրումն Health Net-ի վճարների:

Վարչաշրջանի կազմակերպված առողջապահական համակարգ (COHS). վարչաշրջանի վերահսկողների խորհրդի կողմից ստեղծված գործակալություն՝ Medi-Cal ծրագրի հետ պայմանագիր կնքելու համար: Անդամն ավտոմատ կերպով գրանցվում է COHS ծրագրում, եթե նրանք համապատասխանում են գրանցման կանոններին: Անդամագրված անդամներն ընտրում են իրենց առողջական խնամքի մատակարարին բոլոր COHS մատակարարներից:

Ապահովագրված ծառայություններ. Medi-Cal ծառայություններ, որոնց վճարման համար Health Net-ը պատասխանատու է: Ապահովագրվող ծառայությունները ենթակա են Medi-Cal պայմանագրի պայմաններին, պայմաններին, սահմանափակումներին և բացառություններին, պայմանագրի ցանկացած փոփոխությանը և ինչպես նշված է այս Անդամների ձեռնարկում (նաև հայտնի է որպես Ապահովագրության համակցված ապացույց (EOC) և Բացահայտման ձև):

DHCS. California-ի Առողջական խնամքի ծառայությունների բաժին: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է Medi-Cal ծրագիրը:

Դադարեցնել ապահովագրությունը. դադարեցնել առողջապահական ծրագրի օգտագործումը, քանի որ անդամն այլևս չի համապատասխանում կամ չի փոխում առողջապահական նոր ծրագիր: Անդամը պետք է ստորագրի ձև, որտեղ ասվում է, որ նրանք այլևս չեն ցանկանում օգտվել առողջապահական ծրագրից կամ զանգահարել Health Care Options և դուրս գալ ծրագրից հեռախոսով:

DMHC. California-ի Կառավարվող առողջական խնամքի բաժին: Սա նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է կառավարվող խնամքի առողջապահական ծրագիրը:

Դուլայի ծառայություններ. դուլայի ծառայությունները ներառում են առողջապահական կրթություն, պաշտպանություն, ինչպես նաև ֆիզիկական, հուզական և ոչ բժշկական աջակցություն: Անդամները կարող են դուլայի ծառայություններ ստանալ ծննդաբերությունից առաջ, ընթացքում և հետո կամ հղիության ավարտից հետո, ներառյալ հետծննդյան շրջանը: Դուլայի ծառայությունները մատուցվում են որպես կանխարգելիչ ծառայություններ և պետք է առաջարկվեն բժշկի կամ այլ լիցենզավորված մասնագետի կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Երկարաժամկետ բժշկական սարքավորումներ (DME). Բժշկական սարքավորումներ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և պատվիրված են անդամի բժշկի կամ այլ մատակարարի կողմից, որն անդամն օգտագործում է տանը, համայնքում կամ հաստատությունում, որն օգտագործվում է որպես տուն:

Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (EPSDT). անցեք «Medi-Cal երեխաների և դեռահասների համար» ծրագիր:

Շտապ օգնության խնամք. Բժշկի կամ համաձայն օրենքի բժշկի վերահսկողությամբ անձնակազմի կողմից կատարվող ստուգում, բացահայտելու՝ արդյոք առկա է արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ: Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները պետք է ձեր վիճակը կլինիկորեն կայունացնեն՝ հաստատության կարողությունների սահմաններում:

Շտապ օգնություն պահանջող բժշկական վիճակ. Բժշկական կամ հոգեբուժական վիճակ այնպիսի սաստիկ ախտանիշներով, ինչպիսիք են՝ ակտիվ երկունքը (տեսեք սահմանումը վերևում) կամ սաստիկ ցավերը, երբ ողջամիտ որևէ մեկը ոչ մասնագետի առողջության և բժշկության վերաբերյալ միջին գիտելիքներով կարող է ակնկալել, որ եթե դուք անմիջապես բժշկական խնամք չստանաք, ապա՝

- Անդամի առողջությունը կամ չճշմամբ երեխայի առողջությունը լուրջ վտանգի տակ է
- Կարող է առաջացնել մարմնի գործառույթի զգալի խանգարում
- Կարող է առաջացնել մարմնի մասի կամ օրգանի սխալ աշխատանք
- Բերում է մահվան

Շտապ բժշկական փոխադրում. փոխադրում շտապ օգնությամբ կամ արտակարգ իրավիճակի փոխադրամիջոցով շտապ օգնության սենյակ՝ արտակարգ իրավիճակի բժշկական խնամք ստանալու համար:

Բարելավված խնամքի կառավարում (ECM). ECM-ը խնամքի նկատմամբ ամբողջական, միջառարկայական մոտեցում է, որը հասցեագրում է ամենաբարդ բժշկական և սոցիալական կարիքներ ունեցող անդամների կլինիկական և ոչ կլինիկական կարիքները:

Անդամ. անձ, ով առողջապահական ծրագրի անդամ է և ստանում է ծառայություններ ծրագրի միջոցով:

Հաստատված հիվանդ. հիվանդ, որը գոյություն ունեցող հարաբերություն ունի մատակարարի հետ, և այցելել է այդ մատակարարին որոշակի ժամանակահատվածում, ինչպես սահմանված է առողջապահական ծրագրի կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Փորձարարական բուժում. դեղեր, սարքավորում, ընթացակարգեր կամ ծառայություններ, որոնք ստուգման փուլում են լաբորատորիայում կամ կենդանիների վրա անցկացվող հետազոտություններում, նախքան մարդկանց վրա փորձարկելը: Փորձարարական ծառայությունները չեն ենթարկվում կլինիկական հետազոտության:

Հնտանիքի պլանավորման ծառայություններ. հղիության կանխարգելման կամ հետաձգման ծառայություններ: Ծառայությունները տրամադրվում են ծննդաբերելու ունակ տարիքի անդամներին՝ խթանելու նրանց սահմանել երեխաների քանակն ու տարիքային տարբերությունը:

Դաշնային որակավորված առողջական կենտրոն (FQHC). առողջական կենտրոն այնպիսի տարածքում, որը չունի շատ առողջական խնամքի ծառայություններ: Անդամը կարող է առաջնային և կանխարգելիչ խնամք ստանալ FQHC-ում:

Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal. երբեմն Health Net-ը չի ապահովագրում ծառայությունները, սակայն անդամը դեռ կարող է դրանք ստանալ FFS Medi-Cal-ի միջոցով, ինչպես օրինակ՝ դեղատների բազմաթիվ ծառայություններ Medi-Cal Rx-ի միջոցով:

Հետազա խնամք. ընթացիկ բժշկական խնամք՝ ստուգելու անդամի բարելավումը հոսպիտալացումից հետո կամ բուժման ընթացքում:

Խարդախություն. անձի կողմից՝ խաբելու կամ սխալ ներկայացնելու կանխամտածված գործողություն, ով տեղյակ է, որ խաբեությունը կարող է առաջացնել որոշ չլիազորված նպաստ անձի կամ որևէ մեկի համար:

Freestanding Birth Centers (FBCs). առողջապահական հաստատություններ, որտեղ նախատեսվում է ծննդաբերել հղի անդամի բնակության վայրից հեռու, որոնք լիցենզավորված են կամ այլ կերպ հաստատված են պետության կողմից՝ նախաձննդյան և ծննդաբերության կամ հետձննդյան խնամքի և այլ ամբուլատոր ծառայություններ մատուցելու համար, որոնք ներառված են պլանում: Այս հաստատությունները հիվանդանոց չեն:

Բողոք. անդամի կողմից ծառայության վերաբերյալ բանավոր կամ գրավոր դժգոհության արտահայտություն, որը կարող է ներառել, բայց չսահմանափակվելով՝

- մատուցվող խնամքի կամ ծառայությունների որակը,
- փոխազդեցություններ մատակարարի կամ աշխատակցի հետ,
- Անդամի իրավունքը՝ վիճարկելու Health Net-ի, վարչաշրջանի հոգեկան առողջության կամ թմրամոլության խանգարման ծրագրի կամ Medi-Cal մատակարարի կողմից առաջարկված ժամանակի երկարաձգումը:

Գանգատը և բողոքը նույնն են:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Հաբիլիտացիոն ծառայություններ և սարքեր. առողջական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են անդամին պահպանել, սովորել կամ բարելավել կարողությունները և ամենօրյա կյանքի գործառնությունը:

Առողջական խնամքի ընտրանքներ (HCO). ծրագիրը, որը կարող է անդամագրել կամ հեռացնել առողջապահական ծրագրից:

Առողջական ապահովագրություն. ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախսերի համար՝ ապահովագրված անձին հետ փոխանցելով հիվանդության կամ վնասվածքի ծախսերը կամ ուղղակիորեն վճարելով խնամքի մատակարարին:

Տնային առողջական խնամք. հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ, որոնք մատուցվում են տանը:

Տնային առողջական խնամքի մատակարարներ. մատակարարներ, որոնք տրամադրում են անդամներին հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ տանը:

Անբուժելի հիվանդությունների խնամքի հաստատություն. մահացու հիվանդություն ունեցող անդամի ֆիզիկական, զգացմունքային, սոցիալական և հոգևոր անհարմարությունները նվազեցնելու համար խնամք: Անբուժելի հիվանդությունների խնամքը մատչելի է, երբ անդամի կյանքին մնացել է վեց ամիս կամ ավելի քիչ:

Հիվանդանոց. վայր, որտեղ անդամը ստանում է ստացիոնար և ամբուլատոր խնամք բժիշկներից կամ բուժքույրերից:

Հիվանդանոցի ամբուլատոր խնամք. բժշկական կամ վիրաբուժական խնամք, որն իրականացվում է հիվանդանոցում առանց որպես ստացիոնար հիվանդ ընդունման:

Ընդունում հիվանդանոց. որպես ստացիոնար հիվանդ բուժման համար հիվանդանոց ընդունում:

Հնդկացիական առողջապահական ծառայություններ մատակարարներ (IHCP). առողջական խնամքի ծրագիր, որն աշխատացվում է Հնդկացիների առողջապահական ծառայության (IHS), հնդկացիների տոհմի, տոհմական առողջական ծրագրի, տոհմական կազմակերպության կամ քաղաքային հնդկացիների կազմակերպության (I/T/U) կողմից, ինչպես այդ տերմինները սահմանված են Հնդկացիների առողջական խնամքի բարելավման ակտի 4-րդ բաժնում (25 U.S.C. բաժին 1603):

Ստացիոնար խնամք. երբ անդամը պետք է գիշերը մնա հիվանդանոցում կամ այլ վայրում՝ անհրաժեշտ բժշկական օգնության համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Միջանկյալ խնամքի հաստատություն կամ տուն. խնամք, որը տրամադրվում է երկարատև խնամքի հաստատությունում կամ տանը, որը տրամադրում 24-ժամյա սպասարկում:

Միջանկյալ խնամքի հաստատությունների կամ տների տեսակները ներառում են՝ միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն (ICF/DD), միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն-վերականգնում (ICF/DD-H) և միջանկյալ խնամքի հաստատություն/զարգացման հաշմանդամություն-բուժքույրություն (ICF/DD-N):

Հետազոտական բուժում. բուժման դեղ, կենսաբանական ապրանք կամ սարք, որը հաջողությամբ անցել է Դեղերի դաշնային վարչության (FDA) կողմից հաստատված կլինիկական հետազոտության առաջին փուլը, սակայն դեռ չի հաստատվել FDA-ի կողմից ընդհանուր օգտագործման համար և մնում է ուսումնասիրության տակ FDA-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտությունում:

Երկարաժամկետ խնամք. խնամք հաստատությունում՝ ընդունումից մեկ ամիս ավելի տևողությամբ՝ գումարած մեկ ամիս:

Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ (LTSS). ծառայություններ, որոնք օգնում են երկարաժամկետ առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող մարդկանց ապրել կամ աշխատել այնտեղ, որտեղ նրանք ընտրում են: Սա կարող է լինել տանը, աշխատանքի վայրում, խմբակային տանը, ծերանոցում կամ այլ խնամքի հաստատությունում: LTSS-ը ներառում է տանը կամ համայնքում մատուցվող երկարատև խնամքի և ծառայությունների ծրագրեր, որոնք կոչվում են նաև տնային և համայնքային ծառայություններ (HCBS): Որոշ LTSS ծառայություններ տրամադրվում են առողջապահական ծրագրերի կողմից, մինչդեռ մյուսները տրամադրվում են առանձին:

Կառավարվող խնամքի ծրագիր. Medi-Cal առողջապահական ծրագիր, որն օգտագործում է միայն որոշակի բժիշկներ, մասնագետներ, կլինիկաներ, դեղատներ և հիվանդանոցներ՝ տվյալ ծրագրում անդամագրված Medi-Cal նպաստառուների համար: Health Net-ը կառավարվող խնամքի ծրագիր է:

Medi-Cal երեխաների և դեռահասների համար. նպաստ Medi-Cal-ի 21 տարեկանից ցածր անդամների համար՝ օգնելու նրանց առողջ պահել: Անդամները պետք է ստանան իրենց տարիքին համապատասխան ճիշտ առողջական ստուգումները և պատշաճ սքրինինգները՝ բացահայտելու առողջական խնդիրները և բուժելու հիվանդությունները վաղ ժամկետում: Նրանք պետք է բուժում ստանան, որպեսզի հոգ տանեն կամ օգնեն այն պայմաններին, որոնք կարող են հայտնաբերվել ստուգումների ժամանակ: Այս նպաստը նաև դաշնային օրենքով հայտնի է որպես Վադ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) նպաստ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Medi-Cal Rx. Դեղատնային նպաստների ծառայություն, որը FFS Medi-Cal-ի մի մասն է և հայտնի է որպես «Medi-Cal Rx», որը տրամադրում է դեղատնային արտոնություններ և ծառայություններ, ներառյալ դեղատոմսով դեղեր և որոշ բժշկական պարագաներ Medi-Cal-ի բոլոր շահառուներին:

Բժշկական տուն. խնամքի մոդել, որն ապահովում է առողջության առաջնային պահպանման հիմնական գործառույթները: Սա ներառում է համապարփակ խնամք, հիվանդի վրա կենտրոնացված, համակարգված խնամք, մատչելի ծառայություններ և որակ և անվտանգություն:

Բժշկական տեղեկատվություն. ցանկացած անհատապես ճանաչելի տեղեկատվություն՝ էլեկտրոնային կամ ֆիզիկական ձևով, որը տիրապետում կամ ստացվում է առողջապահական ծառայություններ մատուցողից, առողջապահական ծառայությունների պլանից, դեղագործական ընկերությունից կամ կապալառուից՝ կապված հիվանդի բժշկական պատմության, հոգեկան առողջության կիրառման տեղեկատվության, վերարտադրողական կամ սեռական բնույթի, առողջության կիրառման մասին տեղեկատվություն, հոգեկան կամ ֆիզիկական վիճակ կամ բուժում: «Անհատապես ճանաչելի» նշանակում է, որ բժշկական տեղեկատվությունը ներառում է կամ պարունակում է անձնական նույնականացման որևէ տարր, որը բավարար է անձի նույնականացման համար, օրինակ՝ հիվանդի անունը, հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը կամ սոցիալական ապահովության համարը կամ այլ տեղեկություններ, որոնք, առանձին կամ հանրությանը հասանելի այլ տեղեկատվության հետ համատեղ, բացահայտում է անձի ինքնությունը:

Բժշկական անհրաժեշտություն (կամ բժշկական անհրաժեշտ). բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները կարևոր ծառայություններ են, որոնք խելամիտ են և պաշտպանում են կյանքը: Այս խնամքն անհրաժեշտ է՝ հիվանդներին լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից հեռու պահելու համար: Այս խնամքը նվազեցնում է ծանր ցավը՝ ախտորոշելով կամ բուժելով հիվանդությունը, հիվանդությունը կամ վնասվածքը: 21 տարեկանից փոքր անդամների համար Medi-Cal-ի բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է՝ ֆիքսելու կամ օգնելու ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ իրավիճակը, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործման խանգարումները (SUD):



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Բժշկական փոխադրում. տրանսպորտ, որը մատակարարը նշանակում է անդամին, երբ անդամը ֆիզիկապես կամ բժշկական առումով ի վիճակի չէ օգտվել մեքենայից, ավտոբուսից, գնացքից կամ տաքսիից՝ ապահովագրված բժշկական տեսակցության հասնելու կամ դեղատոմսեր ստանալու համար: Health Net-ը վճարում է ամենաեժան փոխադրման համար ձեր բժշկական կարիքների համար, երբ ձեզ հարկարավոր է հասնել ձեր ժամադրության վայրը:

Medicare. Առողջության ապահովագրության դաշնային ծրագիրը 65 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց, հաշմանդամություն ունեցող որոշ երիտասարդների և երիկամների վերջին փուլի հիվանդ մարդկանց համար (երիկամների մշտական անբավարարություն, որը պահանջում է դիալիզ կամ փոխպատվաստում, որը երբեմն կոչվում է Երիկամների վերջնական փուլի հիվանդություն (ESRD)):

Անդամ. իրավասու Medi-Cal անդամ, ով անդամագրված է Health Net-ին և իրավասու է ստանալ ապահովագրված ծառայություններ:

Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար. առողջական խնամքի մասնագետներ, ովքեր հոգեկան առողջության ծառայություններ են մատուցում հիվանդներին:

Մանկաբարձական ծառայություններ. նախածննդյան, ներծննդյան և հետծննդյան խնամք, ներառյալ մոր համար ընտանիքի պլանավորման ծառայությունները և նորածինների անմիջական խնամքը, որոնք տրամադրվում են հավաստագրված բուժքույր մանկաբարձների (CNM) և լիցենզավորված մանկաբարձների (LM) կողմից:

Ցանց. Health Net-ի հետ պայմանագիր ունեցող բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ:

Ցանցային մատակարար (կամ ներցանցային մատակարար). տես «Մասնակցող մատակարար»:

Չապահովագրված ծառայություն. ծառայություն, որը Health Net-ը չի ապահովագրում:

Ոչ բժշկական փոխադրում. փոխադրում, երբ ուղևորվում և վերադառնում եք այցելությունից Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայության համար, որը լիազորվել է անդամի մատակարարի կողմից, և երբ գնում եք դեղատոմսեր կամ բժշկական պարագաներ վերցնելու համար:

Չմասնակցող մատակարար. մատակարար, որը Health Net ցանցում չէ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Օրթոսիկ սարք. որպես հենակ կամ նեցուկ օգտագործվող սարք, որն արտաքինից ամրացվում է մարմնին՝ աջակցելու կամ ուղղելու խիստ վնասված կամ հիվանդ մարմնի մասը, և որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է անդամի բժշկական վերականգնման համար:

Այլ առողջական ապահովագրություն (OHC). այլ առողջական ապահովագրություն (OHC) նշանակում է մասնավոր առողջական ապահովագրություն և ծառայության համար վճարողներ, բացի Medi-Cal-ից: Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողության, դեղագործության, Medicare Advantage պլաններ (Մաս C), Medicare դեղերի ծրագրեր (Մաս D) կամ Medicare-ի լրացուցիչ ծրագրեր (Medigap):

Տարածքից դուրս ծառայություններ. ծառայություններ, երբ անդամը գտնվում է Health Net-ի սպասարկման տարածքից դուրս որևէ այլ վայրում:

Արտացանցային մատակարար. Health Net-ի ցանցի մաս չկազմող մատակարար:

Ամբուլատոր խնամք. երբ անդամը ստիպված չէ գիշերել հիվանդանոցում կամ այլ վայրում՝ անհրաժեշտ բժշկական օգնության համար:

Ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ. ամբուլատոր ծառայություններ անդամների համար թեթևից մինչև միջին ծանրության հոգեկան առողջության վիճակները բուժելու համար, ներառյալ՝

- Անհատական կամ խմբակային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեթերապիա)
- Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես նպատակահարմար է հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
- Ամբուլատոր ծառայություններ դեղորայքային թերապիային հետևելու նպատակով
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատոր անալիզներ, պաշարներ և հավելումներ

Պալիատիվ խնամք. լուրջ հիվանդություն ունեցող անդամի ֆիզիկական, զգացմունքային, սոցիալական և հոգևոր անհարմարությունները նվազեցնելու համար խնամք: Պալիատիվ խնամքը չի պահանջում, որպեսզի անդամն ունենա վեց ամիս կամ ավելի քիչ կյանքի տևողություն:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com:

Մասնակից հիվանդանոց. վկայագրված հիվանդանոց, որն ունի պայմանագիր Health Net-ի հետ տրամադրելու ծառայություններ անդամներին, երբ անդամը խնամք է ստանում:
Ապահովագրված ծառայություններ, որոնք որոշ մասնակից հիվանդանոցներ կարող են առաջարկել անդամներին, սահմանափակված են Health Net-ի օգտագործելի դիտարկային և որակի ապահովման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ Health Net-ի պայմանագրով:

Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ). բժիշկ, հիվանդանոց կամ այլ վկայագրված առողջական խնամքի մասնագետ կամ վկայագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթասուր հաստատություններ, որոնք պայմանագիր ունեն Health Net-ի հետ տրամադրելու ապահովագրված ծառայություններ անդամներին, երբ անդամը խնամք է ստանում:

Բժշկի ծառայություններ. ծառայություններ, որոնք մատուցվում են անձի կողմից, ով վկայագրված է դաշնային օրենքով և կարող է մատուցել բժշկական ծառայություններ կամ օսթեոպատիա, բացառությամբ ծառայությունների, որոնք առաջարկվում են բժիշկների կողմից, երբ անդամն ընդունվում է հիվանդանոց և որոնք գանձվում են հիվանդանոցի հաշվով:

Ծրագիր. անցեք «Կառավարվող խնամքի ծրագիր»:

Հետկայունացման ծառայություններ. ապահովագրված ծառայություններ, որոնք առնչվում են արտակարգ իրավիճակի բժշկական վիճակին, որոնք տրամադրվում են անդամին կայունացնելուց հետո՝ անդամի վիճակը կայուն պահպանելու նպատակով:
Հետ-կայունացման ծառայություններն ապահովագրվում են և վճարվում են:
Արտացանցային հիվանդանոցները կարող են պահանջել Նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

Նախնական հաստատում (նախօրոք լիազորում). գործընթաց, որոնք անդամը կամ նրա մատակարարը պետք է խնդրել հաստատում Health Net-ից որոշ ծառայություններ՝ հավաստիանալու համար, որ Health Net-ը կապահովագրի դրանք: Ուղեգիրը հաստատում չէ: Նախնական հաստատումը նույնն է, ինչ նախօրոք լիազորումը:

Դեղատոմսով դեղերի ապահովագրում. մատակարարի կողմից նշանակված դեղերի ապահովագրություն:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Ղեղատոմսով դեղեր. դեղ, որը օրինականորեն պահանջում է լիցենզավորված մատակարարի պատվերի տրամադրումը, ի տարբերություն առանց դեղատոմսի («OTC») դեղերի, որոնք դեղատոմս չեն պահանջում:

Առաջնային խնամք. տես «Սովորական խնամք»:

Առաջնային խնամքի մատակարար (PCP). լիցենզավորված մատակարարն ունի անդամի առողջական խնամքի մեծ մասի համար: PCP-ն օգնում է անդամին ստանալ իրենց անհրաժեշտ խնամքը:

PCP-ն կարող է լինել՝

- Ընդհանուր պրակտիկայի բժիշկ
- Ներգատաբան
- Մանկաբույժ
- Ընտանեկան պրակտիկայի բժիշկ
- Մանկաբարձ/գինեկոլոգ
- Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP)
- Դաշնային որակավորված առողջական կենտրոն (FQHC)
- Գյուղական առողջական կլինիկա (RHC)
- Պրակտիկ բուժքույր
- Օգնական բժիշկ
- Կլինիկա

Նախօրոք լիազորում (նախնական հաստատում). գործընթաց, որոնք անդամը կամ նրա մատակարարը պետք է խնդրել հաստատում Health Net-ից որոշ ծառայություններ՝ հավաստիանալու համար, որ Health Net-ը կապահովագրի դրանք: Ուղեգիրը հաստատում չէ: Նախօրոք լիազորումը նույնն է, ինչ նախնական հաստատումը:

Պրոսթետիկ սարք. արհեստական սարք, որն ամրացվում է մարմնին՝ մարմնի բացակայող մասը փոխարինելու համար:

Մատակարարների հասցեագիրք. Health Net-ի ցանցի մատակարարների ցանկը:

Հոգեբուժական շտապ բժշկական վիճակ. հոգեկան խանգարում, որի ախտանիշները բավականաչափ լուրջ են կամ ծանր, որպեսզի անմիջական վտանգ առաջացնեն անդամին կամ մյուսներին, կամ անդամն անմիջապես չի կարող ապահովել կամ օգտագործել սնունդ, կացարան կամ հագուստ հոգեկան խանգարման պատճառով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Հանրային առողջապահական ծառայություններ. առողջապահական ծառայություններ, որոնք ուղղված են ողջ բնակչությանը: Դրանք ներառում են, ի թիվս այլոց, առողջապահական իրավիճակի վերլուծություն, առողջության հսկողություն, առողջության խթանում, կանխարգելման ծառայություններ, վարակիչ հիվանդությունների վերահսկում, շրջակա միջավայրի պաշտպանություն և սանիտարական մաքրում, աղետներին պատրաստվածություն և արձագանքում և աշխատանքային առողջություն:

Որակավորած մատակարար. պրակտիկ ուղղվածության ոլորտում որակավորված բժիշկ, ով կարող է բուժել անդամի վիճակը:

Վերականգնողական վիրաբուժություն. վիրահատություն՝ ուղղելու կամ վերականգնելու մարմնի խեղված կառուցվածքները, որպեսզի բարելավի գործառույթը կամ ստեղծի նորմալ տեսք այնքանով, որքանով դա հնարավոր է: Մարմնի խեղված մասեր են նրանք, որոնց պատճառն են հանդիսանում բնածին թերությունը, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները կամ հիվանդությունը:

Ուղեգիր. երբ անդամի PCP-ն ասում է, որ անդամը կարող է խնամք ստանալ մեկ այլ մատակարարից: Որոշ ապահովագրված խնամքի ծառայություններ պահանջում են ուղեգիր և նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

Վերականգնողական և վերականգնման թերապիայի ծառայություններ և սարքեր. ծառայություններ և սարքեր, որոնք կօգնեն վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական խնդիրներ ունեցող անդամներին ձեռք բերել կամ վերականգնել մտավոր և ֆիզիկական հմտությունները:

Սովորական խնամք. բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ խնամք, երեխայի բարօրության այցելություններ կամ խնամք, ինչպես օրինակ՝ ընթացիկ հետբուժական խնամքը: Ընթացիկ խնամքի նպատակն է կանխարգելել առողջապահական խնդիրները:

Գյուղական առողջության կլինիկա (RHC). առողջապահական կենտրոն մի տարածքում, որը շատ մատակարարներ չունի: RHC-ում անդամները կարող են ստանալ հիմնական և կանխարգելիչ խնամք:

Զգայուն ծառայություններ. հոգեկան, սեռական և վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI), ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, սեռական բռնության և աբուսների, թմրամիջոցների օգտագործման խանգարման, սեռը հաստատող խնամքի և ինտիմ գործընկերոջ բռնության հետ կապված ծառայություններ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Լուրջ հիվանդություն. հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժվի և կարող է բերել մահվան:

Սպասարկման տարածք. Health Net-ի սպասարկման աշխարհագրական տարածք: Սա ներառում է Amador, Calaveras, Inyo, Los Angeles, Mono, Sacramento, San Joaquin, Stanislaus, Tulare և Tuolumne վարչաշրջանները:

Հմուտ բուժքույրական խնամք. ապահովագրված ծառայություններ, որոնք տրամադրվում են վկայագրված բուժքույրերի, տեխնիկների կամ թերապևտների կողմից հմուտ բուժքույրական հաստատությունում գտնվելու ընթացքում կամ անդամի տանը:

Հմուտ բուժքույրական հաստատություն. վայր, որը տրամադրում է 24-ժամյա բժշկական խնամք, որը կարող են տրամադրել միայն ուսուցանված առողջապահական մասնագետները:

Մասնագետ (կամ մասնագիտացված բժիշկ). բժիշկ, ով բուժում է որոշակի տեսակի առողջապահական խնդիրներ: Օրինակ, օրթոպեդիկ վիրաբույժը բուժում է կոտրված ոսկորները, ալերգոլոգը բուժում է ալերգիաները և սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Շատ դեպքերում անդամին անհրաժեշտ կլինի ուղեգիր իր PCP-ից՝ մասնագետի մոտ գնալու համար:

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (SMHS). ծառայություններ այն անդամների համար, ովքեր ունեն հոգեկան առողջության ծառայությունների կարիքներ, որոնք ավելի բարձր են, քան թույլ կամ միջին աստիճանի խանգարման մակարդակը:

Ենթասուր խնամքի հաստատություն (չափահասների կամ երեխաների). երկարաժամկետ խնամքի հաստատություն, որը տրամադրում է բազմակողմանի խնամք բժշկական տեսակետից թույլ անդամներին, ում հատուկ ծառայություններ են հարկավոր, օրինակ՝ ներշնչման թերապիա, շնչափողահատման խնամք, ներերակային սնուցում և բարդ վերքի կառավարման խնամք:

Մահացու հիվանդություն. բժշկական վիճակ, որը հնարավոր չէ հետարկել և հավանաբար կառաջացնի մահ 1 տարվա ընթացքում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, եթե հիվանդությունը շարունակվի իր բնականոն հունով:

Դժբախտությունից վերականգնում. երբ նպաստները տրամադրվում են կամ կտրամադրվեն Medi-Cal-ի անդամին վնասվածքի պատճառով, որի համար պատասխանատու է մեկ այլ կողմը, DHCS-ը վերականգնում է այդ վնասվածքի համար անդամին տրամադրված նպաստների ողջամիտ արժեքը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց www.healthnet.com:

Տրիաժ (կամ ցուցադրություն). ձեր առողջության գնահատումը բժշկի կամ բուժքույրի կողմից, ով վերապատրաստված է ստուգելու անդամի խնամքի կարիքի հրատապության սահմանման նպատակով:

Շտապ օգնություն (կամ շտապ ծառայություններ). ծառայություններ, որոնք տրամադրվում են բուժելու ոչ արտակարգ իրավիճակների հիվանդությունը, վնասվածքը կամ վիճակը, որը պահանջում է բժշկական խնամք: Անդամները կարող են հրատապ խնամք ստանալ արտացանցային մատակարարից, եթե ցանցի մատակարարները ժամանակավորապես մատչելի կամ հասանելի չեն:

1915(c) Տան և համայնքային հիմունքով ծառայությունների (HCBS) հրաժարում. սա հատուկ կառավարական ծրագիր է այն անձանց համար, ովքեր ռիսկի են ենթարկվում տեղափոխվել խնամքի տուն կամ հաստատություն: Ծրագիրը թույլ է տալիս DHCS-ին HCBS տրամադրել այս անձանց, որպեսզի նրանք կարողանան մնալ իրենց համայնքային տանը: HCBS-ը ներառում է դեպքերի կառավարում, անձնական խնամք, որակավորված բուժքույրական ծառայություններ, վերապատրաստում և տնային տնտեսուհու կամ տնային առողջապահական օգնականի ծառայություններ: Դրանք ներառում են նաև չափահասների օրվա ծրագրեր և հանգստի խնամք: Medi-Cal անդամները պետք է առանձին դիմեն և որակավորվեն հրաժարմանը գրանցվելու համար: Որոշ հրաժաժումներ ունեն սպասման ցուցակներ:

EOC066263MP00



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711)

հեռախոսահամարով: Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California -ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք առցանց՝ www.healthnet.com: